

2815

3K 26
U-77

Վ. Լ. ԼԵՆԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

1870—1924

320.159

Ս-75

ԿՈՒՍՆԻՆ

1934

ՅԵՐԵՎԱՆ

02 AUG 2013

3K26
U-77

08 JUN 2005

Պրովտարները ըստ լեզուների, միացե՛ք

20 NOV 2009


Վ. Լ. ՍՈՐԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

1870—1924

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՏՂՑԱԼՆԵՐ)

580



ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1984

Վ. Ի. ԼԵՆԻՆ

1870 — 1924

ԿՆՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՏՎՅԱԼՆԵՐ

Վլադիմիր Իլյիչ Լենինը—հեղափոխական պրոլետարիատի մեծագույն հանճարը, Մարքսի և Ենգելսի գործը շարունակողը, բոլշևիկների կուսակցության և Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադիրն ու առաջնորդը, հանճարեղ քաղաքագետը, մարքսիզմի խոշորագույն թեորետիկը հետմարքսյան դարաշրջանում, անտեսագետ և փիլիսոփա, յերևելի գրող և հոկտոբր—ծնվել է 1870 թ. ապրիլի 22 (10)-ին Վոլգայի Սիմբիրսկ քաղաքում, ժողովրդական դպրոցների տեսուչ Իլյա Նիկոլայիվիչ Ուլյանովի ընտանիքում։ Լենինը—Վլադիմիր Իլյիչի գրական կեղծանունն է, վորնա առաջին անգամ գործ է ածել 1902 թ. սկզբին «Что делать?» գրքում։ Այդ անունով էլ, վոր դարձել է բոլոր շահագործվողների ու ճնշվածների պայքարի սիմբոլը, Վ. Ի. Ուլյանովը անցավ պատմության մեջ։

Լենինի հայրը (ծն. 1831 թ.), վոր ծագումով Աստրախան քաղաքի բնակիչներից էր, Կազանի համալսարանը ավարտելուց հետո յերկար ժամանակ մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ է յեղել Պենզայի և Նիժնի-Նովոգորոդի միջնակարգ դպրոցներում, հետագայում, 1869 թ., ստացել է Սիմբիրսկի նահանգի ժողովրդական դպրոցների տեսչի պաշտոնը, իսկ ել ավելի ուշ, 1874 թ., նշանակվել է նույն դպրոցների ղերեկատու։ Նա մի աչքի ընկնող գործիչ էր ժողովրդական լուսավորության ասպարեզում, խորապես նվիրված իր գործին և, վորպես մանկավարժ ու ժողովրդական դպրոցների կազմակերպիչ, մեծ համբավ էր ստացել Վոլգայի շրջանում։ Նա մեռել է 1886 թ., յերբ Վլադիմիր Իլյիչը գեռ սովորում էր գիմնազիայում։

Լենինի մայրը—Մարիա Ալեքսանդրովնա Բլանկը (ծն. 1835 թ.),

բժշկի աղջիկ եր. հոր միջոցները թույլ չեն տալիս աղջկան լիա-
կատար կրթություն տալու, ուստի նա ամբողջովին նվիրվում է
ընտանիքին և զավակների դաստիարակությանը: Նրա բոլոր
վորդիկներն ու աղջիկները, բացառությամբ վաղամեռ (1891) Ու-
գայի, հեղափոխականներ դարձան.—Ալեքսանդր Իլյիչը—նարո-
դովոեց, Վլադիմիր Իլյիչը, Դմիտրի Իլյիչը, Աննա Իլյինիչնան և
Մարիա Իլյինիչնան —բոլշևիկներ, Լենինը, վոր Մարիա Ալեքսան-
դրովնայից ժառանգել էր կամքի արտակարգ ուժ և հաստատ բնավո-
րություն, անսահման նվիրվածությամբ ու քնքուշ հոգատարու-
թյամբ եր վերաբերվում էր մորը, վոր շատ վշտեր եր կրել կյանքում:
Մարիա Ալեքսանդրովնան մեռել է 1916 թ., խոր ծերության
հասակում:

1887 թ., յերբ Վլադիմիր Իլյիչը քիչ հետո պիտի ավարտեր
Սիմբիրսկի գիմնազիան, Ուլյանովների ընտանիքին ծանր դժ-
բախտություն պատահեց: Լենինի մեծ յեղբայր Ալեքսանդրը, հաղիմ
21 տարեկան մի չափազանց ոժտված յերիտասարդ, մի խումբ
ընկեր-նարոդովոեցների հետ ձերբակալվեց Պետերբուրգում Ալեք-
սանդր III-ի վրա մահափորձ նախապատրաստելիս և մահապատ-
ժի յենթարկվեց 1887 թ. մայիսի 20 (8)-ին: Իր սիրելի յեղբոր
կորուստը խորը տալովորություն գործեց Վլադիմիր Իլյիչի վրա:

1887 թ. ամառը, ավարտելով Սիմբիրսկի գիմնազիան, վոր-
տեղ նա ընդհանուր ուշադրության եր արժանացել էր փայլուն
ընդունակություններով (գիմնազիան Վլադիմիր Իլյիչն ավարտեց
վոսկե շքանշանով), Լենինը նույն տարին ել ընդունվեց Կազանի
համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Սակայն համա-
լսարանում Վլադիմիր Իլյիչը յերկար չմնաց. համալսարան մտնե-
լուց քիչ հետո Լենինը յեռանդուն ժառանգցություն ունեցավ
1887 թ. դեկտեմբերի 16 (4)-ի ուսանողական խլրտումների մեջ,
ձերբակալվեց, հեռացվեց համալսարանից և միքանի որեց հետո
Կազանից արտաքսվեց 40 վերստ հեռու գտնվող Կոկուշկինո գյուղը,
վոստիկանության գաղտնի հսկողության տակ: Այստեղ Վլադի-
միր Իլյիչն ապրեց 1888 թ. ձմեռն ու ամառը, շատ կարգավոր և
ինքնակրթությամբ զբաղվելով: 1888 թվի աշնանը Լենինը
թույլատվություն ստացավ Կազան վերադառնալու, ուր տեղափոխ-
վեց նաև Ուլյանովների ամբողջ ընտանիքը. սակայն համալսա-
րանի դռները փակ մնացին Վ. Իլյիչի առաջ: Նմանապես վոստի-
կանության զեպարտամենտը թույլ չտվեց Լենինին արտասահման

գնալ՝ ուսումն ավարտելու համար: Կազանում, վորտեղ Լենինն
ապրեց մինչև 1889 թ. գարունը, նա սկսում է ուսումնասիրել
Մարքսի «Կապիտալը» և մտնում է անլեզու մարքսիստական
խմբակներից մեկի մեջ: 1889 թ. գարնանը Վլադիմիր Իլյիչն
անցնում է Սամարայի նահանգի Ալակայեվկա գյուղը, վորտեղ
Մ. Ա. Ուլյանովնան մի փոքրիկ ագարակ եր գնել: Այդ ժամանա-
կից մինչև 1893 թ. աշունը Լենինը սովորաբար ձմեռն անց եր
կացնում Ալակայեվկայում: Յերկար միջնորդություններից հետո
Վլադիմիր Իլյիչը վերջապես թույլատվություն է ստանում եքս-
տերն քննություն տալու Պետերբուրգի համալսարանում: Պետեր-
բուրգ գնալով, Լենինը փայլուն քննություններ է տալիս 1891 թ.
գարնանն ու աշնանը: 1892 թ. հունվարին նա Սամարայում
ստանում է յերվլյալ հավատարմատարի ոգնականի կոչում, սա-
կայն իրավաբանական պրակտիկայով Վլադիմիր Իլյիչը համա-
րյա չեր զբաղվում, յերբեմն միայն, դատարանի կողմից նշանակ-
վելով, հանդես եր գալիս դատարանում:

Սամարայում գտնված ժամանակ Լենինը շարունակում է
պատրաստվել հեղափոխական գործունեյության համար, ուժեղ
թափով ուսումնասիրելով Մարքսի և Ենգելսի գործերը, վորոն-
ցից շատերն այն ժամանակ դեռ թարգմանված չէին ռուսերեն,
ինչպես նաև Պլեխանովի ու Կուզնեցկու աշխատությունները: Նա
ուսումնասիրում է նաև հին ռուսական հեղափոխական ուղղու-
թյունների ու հոսանքների գրականությունը և ժամանակակից
նարոդնիկական գրականությունը, կազմում է կարգացած գրքերի
կոնսպեկտներ, գրում է մի շարք ռեֆերատներ, վորոնց ծանոթաց-
նում է տեղական մարքսիստներին, վիճաբանում է զանազան յե-
րանգի նարոդնիկների հետ և նամակադրություն է ունենում
այլ քաղաքների մարքսիստների հետ (Ն. Ե. Ֆեդոսեյով, Պ. Պ.
Մասլով): 1891 թ. մեծ սովի ժամանակ, վոր բռնել եր մի շարք
նահանգներ, Վլադիմիր Իլյիչը դուրս է գալիս լիբերալ ինտելի-
գենցիայի փորձերի դեմ, վորոնց նպատակն եր սովյալներին ոգ-
նելու անհրաժեշտության դրոշի տակ շեղել առաջավոր յերիտա-
սարդության ուշադրությունն ինքնակալական կարգերի դեմ հե-
ղափոխական կռիվ մղելու անհրաժեշտությունից: Սամարայում
գտնվելու վերջին շրջանում Լենինը Ա. Պ. Սկլյարենկոյի և Ի. Խ.
Լալայանցի հետ միասին կազմում են մարքսիստական մի խմբակ,
վոր գաղափարական կենտրոն եր հանդիսանում, վորին հարում է

Մամարայի յերիտասարդութեան նարոգնիկութեանից ղեպի մարքսիզմ եվոլյուցիա կատարող լավագույն մասը:

1893 թ. աշնանը Լենինը հեղափոխական աշխատանք կատարելու համար գնաց Պետերբուրգ—ցարական Ռուսաստանի մայրաքաղաքն ու խոշորագույն արդյունաբերական կենտրոնը: Այստեղ նա գալիս է արդեն վորպես լիովին կազմակերպված մարքսիստ, ամբողջացված աշխարհահայացքով, հրաշալիբերեն տիրապետելով մարքսիստական մեթոդին և ունենալով հսկայական երուզիցիա: Մանելով «ծերերի» (Գ. Կրասին, Գ. Կրժիժանովսկի, Ս. Ռադչենկո և այլն) մարքսիստական խմբի մեջ, վորը կապեր ուներ բանվորների հետ և պրոպագանդ եր մղում բանվորական խմբակներում, Վլ. Իլյիչը կարճ ժամանակից հետո խմբի գլուխն է անցնում: Առանձին ապավորութուն է թողնում խմբի անդամներին վրա շուկաների վերաբերյալ նրա զեկուցումը (1893 թ. վերջին), վորտեղ Լենինը խմբի անդամներին ուշադրութունը սրում, դարձնում է այն հանգամանքի վրա, թե անհրաժեշտ է անտեսական թեօրիայի զանազան հարցերի վերացական, զուտ-«ալիսական» քննությունից անցնել ռուսական տնտեսական իրականութեան կոնկրետ ուսումնասիրութեանը և այդ ուսումնասիրութեանը զուգորդել հեղափոխական կռիվ գործնական խնդիրների հետ: Լենինի այդ ունեցնողը «բեկման մոմենտ» դարձավ խմբի պատմութեան մեջ:

1891—1892 թ.թ. սովի հողի վրա առաջ յեկած հասարակական աշխուժացման հետևանքով մարքսիզմը նկատելի յերևույթ է դառնում ռուսական հասարակական կյանքում: Նարոգնիկական գաղափարախոսութեանը, վոր մինչև այդ ժամանակ համարյա մենակ իշխում եր առաջավոր յերիտասարդութեան մտքերի վրա, սկսում է իր ազդեցութեանը կորցնել մարքսիստների զբաժնի տակ: 1893 թ. վերջում նարոգնիկների ղեկավար Ն. Միխայլովսկին գրական կամպանիա յե սկսում ռուսական մարքսիստների դեմ: Ի պատասխան Միխայլովսկու յելույթին Լենինը 1894 թ. գարնանն ու ամառը գրում է իր նշանավոր «Что такое «Друзья народа» и как они воюют против социалдемократов» աշխատութեանը, վորի մեջ վոչնչացնող քննադատութեան է յենթարկում նարոգնիկութեան այնպիսի սյուների փիլիսոփայական-սոցիոլոգիական, կուլթյան աշխարհի սյուների փիլիսոփայական-սոցիոլոգիական, քաղաքական ու տնտեսական հայացքները, ինչպես էլ Միխայլովսկին, Կրիվենկոն, Յուժակովը: «Друзья народа»-ն («Друзья»-յի

յերեք մասերից մեր ժամանակները հասել են միայն յերկու մասերը—առաջինը և յերկրորդը), վոր հրատարակվել է անիզալ, հեկտոգրաֆով, հսկայական չափով ունեց ռուսական սոցիալ-դեմոկրատներին նարոգնիկութեան դեմ պայքարելու գործում:

«Друзья народа»-յի մեջ Լենինը, վոր այն ժամանակ դեռ 24 տարեկան յերիտասարդ եր, տվել է մի շարք տակադակալ գաղափարներ, վորոնք հետո ծավալված ձևով բոլշևիկների գործունեյութեան հիմքը կազմեցին 1905 թ. հեղափոխութեան շրջանում ու հետագա տարիներում: Բրոշյուրը վերջանում եր հետեւյալ մարդարեայական խոսքերով, վորոնք ընդգծում էին պրոլետարիատի հեղեմնիայի իդեան—«Բանվորների դասակարգի վրա էլ հենց սոցիալ-դեմոկրատները դարձնում են իրենց ամբողջ ուշադրութունը և իրենց ամբողջ գործունեյութեանը: Յերբ նրա առաջավոր ներկայացուցիչները յուրացնեն գիտական սոցիալիզմի գաղափարները, ռուսական բանվորի պատմական դերի վերաբերյալ գաղափարը, յերբ այդ գաղափարները լայն կերպով տարածվեն, և բանվորների մեջ ստեղծվեն ամուր կազմակերպութեաններ, վորոնք բանվորների աշխատանքի շրջանում տնտեսական կռիվը վերածեն գիտակցական դասակարգային կռիվ,—այն ժամանակ ռուսական բանվորը, վորտեք յենկելով, բոլոր ղեմոկրատական տարրերի զուգու անցած, կտողալի միահեծանութեանը և ռուսական պրոլետարիատին (բոլոր յերկրների պրոլետարիատի հետ միասին) բաց քաղաքական կռիվ ուղիղ ճանապարհով կտանի ղեպի հաղթական կոմունիստական հեղափոխութեան»: Այս բրոշյուրի մեջ Լենինը, վորպես մերձավորագույն խնդիր, բանվորների առաջ է դնում «սոցիալիստական բանվորական կուսակցութեան կազմակերպումը»: «Друзья народа»-ն մարքսիզմի շարադրանքի խորութեամբ, իր թեօրիական ու քաղաքական արժեքով ավելի բարձր է կանգնած այդ շրջանի բոլոր մարքսիստների, դրանց թվում նաև Պիխանովի աշխատութեաններից:

Յերբ 1894 թ. աշնանը լույս տեսավ կադետական կուսակցութեան ապագա առաջնորդներից մեկի, Սարուվեյի՝ նարոգնիկների դեմ ուղղված հայտնի գիրքը («Критические заметки к вопросу об экономическом развитии России»), վորի հեղինակն այդ տարիներում հանդես եր գալիս վորպես մարքսիստ և մեծ ազդեցութեան եր վայելում յերիտասարդութեան շրջանում, Լենինը հենց այդ ժամանակ մի կոնսպիրատիվ դիսկուսիոն ժողովում,

վորին մասնակցում եր նաև Ստրուվին, մատնանշեց Ստրուվեյի նահանջը հեղափոխական մարքսիզմից մի շարք հարցերում և նրա հայեցակետը բնորոշեց վորպես «մարքսիզմի արտացոլում բուրժուական գրականության մեջ»։ Այսպիսով, նրանից դեռ շատ առաջ, յերբ բոլորի համար ակներև դարձավ Ստրուվեյի եվոլյուցիայի քաղաքական բնույթը, Լենինը ճանաչեց նրա մեջ բուրժուական լիբերալին, մի բան, վոր չկարողացավ անել արտասահմանյան սոցիալ-դեմոկրատական «Աշխատանքի ազատագրում» խմբի ղեկավար Պլեխանովը, վոր ուպորտունիստորեն աչքաթող արեց ուժ-վելիոնիստական միտումները Ստրուվեյի գրքի մեջ։

Միևնույն ժամանակ Լենինը չէր հրաժարվում Ստրուվեյին՝ վորպես դաշնակցի բնդհանուր թշնամու—նարողնիկական գաղափարախոսության դեմ պայքարելու համար ոգտագործելուց։ Վլ. Իլյիչը Պլեխանովի ու լեգալ մարքսիստների լիդեր Ստրուվեյի հետ միասին մասնակցեց «Материалы к вопросу о хозяйственном развитии России» մարքսիստական ժողովածուին։ Ժողովածուի «մեխը» Լենինի գրած «Экономическое содержание народничества и критика его в книге г. Струве» հոդվածն էր։ Այս մեծ հոդվածում, վոր Լենինը գրել էր Կ. Սուլին կեղծանունով, քայլ առ քայլ մերկացնում էր Ստրուվեյի ռեվիզիոնիզմը, ցույց տալով, վոր նա մարքսիզմով քողարկում է իր բուրժուական լիբերալիզմը, միաժամանակ Լենինը նարողնիկական գաղափարախոսության պատշաճ գնահատականն էր տալիս, բնորոշելով նարողնիկներին, վորպես մանր արտագրողների շահերի ներկայացուցիչներ և մատնանշելով նարողնիկության յերկակի բնույթը, վորի մեջ ռեակցիոն և ուտոպիական «սոցիալիզմի» կողքին կա նաև դրական բուրժուական-դեմոկրատական բովանդակություն։ Գրաքննությունն այրեց 1895 թ. մայիսին տպված այդ ժողովածուն, սակայն ելի կարողացան միքանի տասնյակ օրինակ փրկել ու տարածել։

Չսահմանափակելով նարողնիկության և լեգալ մարքսիզմի դեմ գրական պայքար մղելով, Լենինը պրոպագանդ է անում բանվորական խմբակներում, կարգալով և բացատրելով բանվորներին Մարքսի «Կապիտալը»։

Լենինի աշակերտներից պետք է առանձնապես նշել Ի. Բաբուշկինին, հետագայում ականավոր բոլշևիկ, վորին Լենինը շատ

եր գնահատում ու հարգում (Բաբուշկինը գնդակահարվեց 1906 թվին Սիբիրում պատժիչ եքսպեդիցիայի կողմից)։

1884 թ. յերկրորդ կեսին Լենինը «ժեբերի» խմբի առաջ հարց է դնում, վոր անհրաժեշտ է ինքնամիտքի խմբակներում մղվող պրոպագանդից անցնել բանվորական մասսաների մեջ ազիտացիա մղելուն՝ տնտեսական կարիքները հողի վրա, հրատարակելով բանվորներին ուղղված ազիտացիոն թերթիկներ։ 1895 թ. հենց սկզբին, յերբ խոռվություններ ծագեցին Սեմյաննիկովի գործարանում, Լենինը մի թերթիկ է գրում՝ ուղղված այդ գործարանի բանվորներին։ Այդ ժեբերի խմբի լույս ընծայած առաջին թերթիկն էր. այդպիսով խումբը Լենինի նախաձեռնությամբ և նրա ղեկավարությամբ անցնում է աշխատանքի նոր մեթոդների։ Փետրվարին խումբը դարձյալ թերթիկներ է լույս ընծայում՝ ուղղված նավահանգստային և Սեմյաննիկովի գործարանի բանվորներին, վորտեղ խոռվությունները կրկնվել էին։ Վորպես նոր տակտիկայի յեռանդուն կողմնակից, Լենինը միաժամանակ հանդես է գալիս դեռ նոր կազմակերպվող «եկոնոմիզմի» ներկայացուցիչները հանդիսացող այս սոցիալ-դեմոկրատներին դեմ, վորոնք անհրաժեշտ էին համարում բանվորական շարժումը սահմանափակել բացառապես տնտեսական պայքարով, և պնդում է բանվոր դասակարգի կովի անհրաժեշտությունը նաև հանուն զուտ քաղաքական խնդիրների։

1895 թ. գարնանը Լենինը հիվանդանում է թոքերի բորբոքումով։ Առողջանալուց հետո նա մայիսի 8-ին (ապրիլի 26-ին) գնում է արտասահման «Աշխատանքի ազատագրում» խմբի հետ կապեր հաստատելու համար և անլեգալ գրականության առաքումը Ռուսաստան ապահովելու համար։ Արտասահմանում գտնված ժամանակ Լենինը յեղավ Շվեյցարիայում, ապա Պարիզում, վորտեղ ծանոթացավ Փրանսական հայտնի սոցիալիստ Լաֆարգի հետ, և Բեռլինում, վորտեղ աշխատում էր պրագարանում ու հաճախում սոցիալ-դեմոկրատական ժողովները։ Պլեխանովի և Ակսելրոդի հետ տեսակցելիս Լենինը մի վորոշում է անցկացնում այն մասին, վոր Խումբը «Работник» պարբերական ժողովածու հրատարակի Ռուսաստանի բանվորական շարժումն սպասարկելու համար։ Չորս ամիս արտասահմանում մնալուց հետո Լենինը սեպտեմբերի 19 (7)-ին վերադարձավ Պետերբուրգ, նախապես՝ տեղական սոցիալ-դեմոկրատներին հետ կապ հաստատելու նպատակով

լինելով Վինայում, Մոսկվայում և Ուրեխովո-Չույեվոյում: 1895 թ. աշնանը «Ճերերի» կազմակերպութունը, վոր հետագայում ընդունեց «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի պետերբուրգյան միութուն» անունը, Լենինի ղեկավարությամբ, վոր Միության հիմնադիրն էր, վերջնականապես կանգնում է մասսայական ազդեցության ուղու վրա: Առանձնապես մեծ նշանակություն ունեցավ Տորնտոնի գործարանում նոյեմբերի 18—19 (6—7)-ին տեղի ունեցած գործադուլը, վորն սկսվեց Միության լույս ընծայած Թերթիկը գործարանում յերևալուց հետո: Այդ գործադուլը սերտորեն կապված է Լենինի անվան հետ, վոր անմիջապես դեկավարում էր գործադուլի պատրաստությունը և Տորնտոնի գործարանի բանվորների հարցուփորձը գործարանում աերող գրության մասին և այլն: Նա յե գրել նմանապես Տորնտոնի բանվորների ուղղված թուղյիկներից մեկը: Այդ ժամանակ էլ հենց, 1895 թ. աշնանը, Լենինը գրեց բանվորների շրջանում մեծ ժողովրդականություն վայելող իր բրոշյուրը «Объяснение закона о штрафах, взимаемых с рабочих на фабриках и заводах»:

Գործադուլային շարժումը գլխավորող Միությունը, վորի մեջ էյին մտնում Գ. Կրժիժանովսկին, Ն. Կրուպսկայան (Նադեժդա Կոնստանտինովնայի հետ Լենինը ծանոթացել էր 1894 թ. սկզբին) և ուրիշները, ծավալվում էր, նոր ուժերով հարստանում, նոր կապեր էր հաստատում: Ուժերի համակենտրոնացում կատարելու նպատակով Լենինը միացում է կոտարում ինտելիգենտ ուժերով հարուստ, սակայն մասսաների մեջ անմիջապես չաշխատող Լ. Մարտովի խմբի հետ: Ծարժումը ծավալվելու շնորհիվ Լենինը հնարավորություն է ստանում հարց դնելու «Рабочее дело» անդալ լրագիր լույս ընծայելու մասին: Լրագրի առաջին համարը, վոր յերեք քառորդով կազմված էր Լենինի հոդվածներից և ընդգծում էր հանուն քաղաքական ազատության մղվելիք պայքարի անհրաժեշտությունը բանվոր դասակարգի համաարդեն պատրաստ էր, յերը 1895 թ. դեկտեմբերի 20 (8) -ի լույս 21(9) -ի գրիերը Միության գործիչների մեծ մասը, վորոնց թվում է Լենինը, ձերբակալվում է և բանտարկվում. բանտում Վլադիմիր Իլյիչը մնաց մի տարի և 2 ամիս: 1896 թ. ոգոստոսին ձերբակալվում է նաև Ն. Կրուպսկայան:

Բանտում յեղած ժամանակ Լենինը շարունակում է կապ պահպանել ազատ մնացած ընկերների հետ և Միության համար Թերթիկներ

(«Յարական կառավարությանը») և բրոշյուրներ է գրում: («О стаке» բրոշյուրը վոչնչացել է ապարանը բռնվելիս): Բանվորական շարժումն աճելու հետևանքով Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատների շրջանում միտք ծագեց կուսակցական համագումար հրավիրել կուսակցության ձևական հիմնադրման համար. այդ համագումարի համար (վոր չկայացավ) Լենինը գրեց ծրագրի նախագիծ և նրա բացատրագիրը: Կատարելով Միության մի շարք գրական հանձնարարություններ, Լենինն իր բանտում լինելն ոգտագործում էր նաև իր գիտությունն էլ ավելի լրացնելու համար և գլխավորապես աշխատում է «Развитие капитализма в России» մեծ աշխատության վրա:

1897 թ. փետրվարի 10-ին Նիկոլայ II-ը հաստատեց վոստիկանություն ղեկարարամենտի կարգադրությունը Միության բանտարկված անդամներին յերեք տարով Արևելյան Սիբիր քաղաքներում մասին, և Լենինը գնաց քաղաքավայրը—Յենիսեյսկի նահանգի Միոսկինսկի դավառի Շուշենսկոյե գյուղը: Ուղևորվելուց առաջ Լենինը և Միության մյուս անդամները միջանի որով բանտից արձակվեցին ճանապարհի պատրաստություն տեսնելու համար: Լենինն ողավեց այդ «արձակուրդից» Միության ազատ մնացած անդամների հետ տեսակցելու համար և նրանց հետ գումարած խորհրդակցություններում հանդես էր գալիս Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատների մի մասի մեջ նկատվող եկոնոմիզմի դեմ:

Կտրված Ռուսաստանից, մասսաների մեջ անմիջական աշխատանք կատարելու հնարավորությունից, Լենինն քաղաքավայրից սերտ կապ է պահպանում ուսական սոցիալ-դեմոկրատների և «Աշխատանքի ազատագրում» արտասահմանյան խմբի հետ, ուշի-ուշով հետևելով բանվորական շարժման ուսական և արևմտա-յեվրոպական մարքսիստական մտքի զարգացմանը:

Ռեվիզիոնիստների հենց առաջին յելույթները, վորոնք սկսել էյին վերաքննության յենթարկել Մարքսի ուսմունքը փիլիսոփայության, քաղաքատնտեսության մեջ և ագրարային հարցում, խիստ հակահարվածի էյին հանդիպում Լենինի կողմից, վոր մասամբ ընկերներին ուղղած նամակներում, իսկ գլխավորապես լիզալ ժուռնալում (Новое Слово», «Начало», «Жизнь», «Мир божий», «Научное обозрение») աղվող հոդվածներում պաշտպանում է մարքսիզմը՝ այն «ուղղելու» բոլոր փորձերից: Փիլիսոփայության ապարնգում Լենինը սահմանադադում է ռեվիզիոնիստների

ձգտումներին, վերոնք փորձում էին դիտել տիպիկական մատերիալիզմը փոխարինել նեոկանտիզմով, և հավանություն է տալիս Պլեխանովի փրիլիսոփայական հոգեվածներին, վերոնք ուղղված էին ռեվիզիոնիստներին դեմ: Առհասարակ այդ ժամանակաշրջանում Լենինն ուժեղ թափով զբաղվում է փրիլիսոփայությունում, վերին նա միշտ մեծ նշանակություն էր տալիս, ուսումնասիրում է Հոլբախին, Հելվեցիուսին, Կանտին, Հեգելին և ուրիշներին: «Կապիտալիզմ և գյուղատնտեսություն» մեծ հոդվածում նա իր պաշտպանություն տակ է առնում Կառլեյսլե ակադեմիային հարցի վերաբերյալ մարքսիստական աշխատությունն ընդդեմ լեգալ «մարքսիստ» Բուլգակովի հարձակումներին, վերք փորձում էր ապացուցել թե կապիտալիզմի զարգացման որոշումները կիրառելի չեն գյուղատնտեսություն նկատմամբ: Լենինը մասնակցեց նաև շուկաների թեորիայի վերաբերյալ դրական գիտությունային, պաշտպանելով Մարքսի հայացքներն այդ բնագավառում և ցույց տալով մարքսիզմի զուտ տնտեսական թեորիայի հեղափոխական բնույթը: Բերնշտայնի տխրահռչակ գիրքը, ռեվիզիոնիզմի այդ ավետարանը, Լենինի կողմից խիստ թշնամական վերաբերմունքի հանդիպեց:

Լենինի, Պլեխանովի և Կառլեյսլե միասնական ճակատը ռեվիզիոնիստների դեմ մղած պայքարում յերբեք չի նշանակում, վոր Լենինը, Պլեխանովն ու Կառլեյսլեն բուլգովին միանման դիրք էին զբաղում այդ պայքարում և այդ պատճառով կարող են հեղափոխական մարքսիզմի մի տեսակ ներկայացուցիչներ համարվել:

Իրոք, միջազգային սոցիալիստական շարժման մեջ միակ Լենինն էր, վոր յուր քաղաքական գործունեությունից հենց սկզբից յեղել է իսկական հեղափոխական, մինչև վերջը հեղափոխական մարքսիստ, Մարքսի և Ենգելսի գիծը շարունակող: Այնինչ, այդ շրջանում դեռ մարքսիստական բանակում գտնվող Կառլեյսլե թեորիական ու քաղաքական գործունեությունից մեջ (որինակ, նրա վերաբերմունքը դեպի Բերնշտայնը) և Պլեխանովի թեորիական և քաղաքական գործունեությունից մեջ (որինակ, նրա վերաբերմունքը դեպի Մուրուզեն) միշտ յեղել են ոպորտունիզմի տարբեր, մարքսիզմից նահանջելու տարբեր:

Աքսորում յեղած ժամանակ Լենինը 1899 թ. ամռան անխնա քննադատություն է յենթարկում «Կրեդոն», եկոնոմիզմի ոռւսա

կան սոցիալ-դեմոկրատիայի աջ, ոպորտունիստական թևի ամենավաղ վավերագրերից մեկը, վոր կազմել էին Կոնսկոյն ու Պրոկոպովիչը, վորոնք այժմ գտնվում են արտասահմանի հակահեղափոխական բանակում: «Կրեդոյի» դեմ Լենինի գրած և աքսորված սոցիալ-դեմոկրատների խմբի կողմից պաշտպանություն գտած «բողոքը», վոր հետագայում տպվեց արտասահմանում, դեկավար նշանակություն ունեցավ եկոնոմիզմի դեմ մղվող պայքարում և զգալի չափով նպաստեց այն հեղափոխական մարքսիստներին դիրքերի ամրացմանը, վորոնք պայքար էին մղում, վորպեսզի ոպորտունիզմը չթափանցի ոռւսական սոցիալ-դեմոկրատիայի շարքերը: Տարվա վերջին Լենինը մի հոդվածով (ժամանակին լույս չտեսած) հանդես յեկավ ծայրահեղ եկոնոմիստների որդան «Рабочая мысль»-ի դեմ, բնորոշելով նրա ուղղությունը վորպես «հետնթաց» ուղղություն, վորպես մի քայլ հետ տանող այն դիրքերից, վորին արդեն հասել էր ոռւսական սոցիալ-դեմոկրատիան: Լենինի՝ Միբրիում գտնված ժամանակին և վերաբերում նաև նրա «Задачи русских социал-демократов» բրոշյուրը (1897 թ.), վորն ընդգծում էր պրոլետարիատի ղեկավար դերը բուրժուական դեմոկրատական հեղափոխության մեջ: Բրոշյուրը մեծ համակրանքով ընդունվեց «Աշխատանքի ազատագրում» խմբի կողմից: Քանվոր դասակարգի կողմից ղեկավարվող բուրժուական-դեմոկրատական հեղափոխության՝ վորպես սոցիալիստական հեղափոխության անցնելու մի անհրաժեշտ ետապի նախապարաստում, պայքար հանուն հեղափոխական պրոլետարիատի հեգեմոնիայի, պայքար բոլոր տեսակի ոպորտունիստների դեմ ոռւսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ և միջազգային ասպարեզում, պայքար հանուն իսկական հեղափոխական կոսակցություն ստեղծելու—այսպես և Լենինի 1895—1905 թ. թ. քաղաքական ու հրապարակախոսական գործունեությունից հիմնական բովանդակությունը:

Պայքարելով ռեվիզիոնիզմի ու ոռւսական սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստական թևի դեմ և դրական ձևով մշակելով կոսակցություն խնդիրները (բացի վերը հիշատակված բրոշյուրից, այստեղ պետք է նկատի ունենալ նաև 1899 թ. Միբրիում Լենինի գրած «Մեր կոսակցությունից ծրագրի նախագիծը»), Լենինը շարունակում է պայքարել նարոդնիկությունից դեմ (1897 թ. գրված «Տնտեսական ոռւսականի բնութագրություն» առթիվ)

մեծ հողվածք), մատնանշելով նարոդնիկական սոցիալիզմի մանր-բուրժուական ու հետադիմական բնույթը և բնորոշելով այն վորպես «համայնավորողական ուժանտիզմի մի տարբեր տեսակը»: Հնդգծելով «կապիտալիզմի նարոդնիկական քննադատության հետադիմական բնույթը», Լենինը միաժամանակ մի շարք հողված-ներում մերկացնում է նարոդնիկության հեղափոխական-դեմո-կրատական կողմի առկայությունը, վորչափով նա արտացոլում է ազնվականության և ճորտատիրության մնացորդների դեմ պայ-քարող մանր արտադրողների (գյուղացիության) շահերը:

1899 թ. լույս տեսավ Լենինի՝ դեռ բանտում սկսված և Մի-բիրում՝ ավարտված մի մեծ աշխատությունը՝ «Развитие капита-лизма в России»: Այդ ֆունդամենտալ աշխատությունը, վոր հիմն-ված էր հսկայական թվով վիճակագրական տվյալների խորը ու-սումնասիրության վրա և գիտական ուսումնասիրության մի նմուշ էր, տալիս էր նախահեղափոխական դարաշրջանի «Ռուսաստանի հասարակական-տնտեսական կարգի և հետեապես՝ դասակարգային կառուցվածքի վերլուծությունը»: Այդ դերքը, վոր հսկայական նշանակություն ունեցավ մարքսիստական տնտեսական մտքի զարգացման համար, վերջնականապես խորտակեց նարոդնիկա-կան պատկերացումները տնտեսական հարաբերությունների/զար-գացման ուղիների մասին ուսական գյուղում, անվերադարձ կերպով ապացուցելով, վոր զարգացման այդ ուղին կապիտալիս-տական է: Պրոլետարիատի ու գյուղացիության տեսակարար կշիռը յերկրի եկոնոմիկայի մեջ նախորոշում էր դալիք հեղափո-խության բուրժուական-դեմոկրատական բնույթը և բանվոր դա-սակարգի ղեկավար դերի անխուսափելիությունը նրա մեջ: Գիրքը լույս տեսավ լեգալ կերպով, իբրև «Վ. Իլյինի» աշխատություն. վե-րահրատարակվեց 1908 թ.:

Բացի մի շարք ժողովների հողվածներից և մեծ աշխատու-թյուններից, Լենինը Միբիրում, պրոպագանդիստական նպատա-կով, բանվորների համար գրել է «Новый фабричный закон» բրո-շյուրը, վորը հրատարակվել է 1899 թ. արտասահմանում:

Այն ժամանակ, յերբ Լենինը գտնվում էր Միբիրում, տեղի ունեցավ կուսակցության առաջին համագումարը (1898 թ.), վորը վորոշեց հրատարակել «Рабочая газета» լրագիրը, վորպես կուսակցության կենտրոնական որդան (այս վորոշումը չիրագործ-վեց): Յենթադրվում էր, վոր Լենինն այդ թերթի խմբագիրը

պետք է լինի: Նրա համար Լենինը 1899 թ. միջանի հողվածներ է գրել, վորոնք լույս տեսան միայն 1925 թվին:

1898 թ. դարնանը Շուշենսկոյե գյուղը յեկավ սկզբում Ուֆա քաղաքում, իսկ հետո Շուշենսկոյե տեղավորված Ն. Կրուպսկա-յան, վորն այդտեղ ամուսնացավ Լենինի հետ: Այդ ժամանակից սկսած մինչև Լենինի մահը Ն. Կրուպսկայան նրա անփոփոխ մերձավորագույն ունականը և ընկերը մնաց:

Աքսորում գտնվելու վերջին շրջանում Լենինը յեռանդուն կերպով մշակում է այն միտքը, վոր անհրաժեշտ է արտասահ-մանում, վոստիկանական հասոցությունից հեռու, հրատարակել մի անլեգալ լրագիր—ապագա «Искра»-ն, վորպես հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն ստեղծելու նախնական պայման: Սոցիալ-դեմոկրատական ցրված կազմակերպություն-ներից վորոշ զաղափարական հիմքի վրա, հենց որթողքսալ, հեղափոխական մարքսիզմի հիմքի վրա, նրանց համախմբելու միջոցով մի այդպիսի կուսակցություն ստեղծելը Լենինը մերձա-վորագույն շրջանի խնդիրն էր համարում: Իր պլանն իրագոր-ծելու համար Լենինը Լ. Մարտովին (Տուրուխանի շրջան) և Ա. Պոտրեսովին (Վյատկա) «յեռյակ միություն» առաջարկեց: Առա-ջարկն ընդունվեց: Այդ նոր գրական ձեռնարկությունը Լենինը ծրագրում էր իրագործել «Աշխատանքի ազատագրում» խմբի հետ միասին:

Աքսորը վերջանալուց հետո 1900 թ. փետրվարի 11-ին (հուն-վարի 29-ին) Լենինը վերագարձավ Ռուսաստան և «Искра»-յի նախապատրաստական աշխատանքներն ավարտելու համար (բա-նակցություններ Ռուսաստանում մնացող ընկերների հետ լրագրին ոգնելու և թղթակցություններ ուղարկելու մասին, զրամական մի-ջոցների հայթայթում), ժամանակավորապես հաստատվեց Պսկո-վում, վոչ հեռու Պետերբուրգից, ուր մտնելն արգելված էր նրան: Այստեղ, այսպես կոչված Պսկովյան խորհրդակցությունը, վորին ներկա էին նաև իրենց աջակցությունը խոստացած լեգալ մարք-սիստների ներկայացուցիչները, վորոնք զգալի կապեր ունեյին բուրժուական ինտելիգենցիայի շրջանում, վերջնականապես վո-րոշվեց լրագիր հրատարակելու հարցը, և ընդունվեց լրագրի՝ Լենինի առաջարկած ծրագիրը: Ռուսաստանում գտնված ժամա-նակ, մինչև արտասահման գնալը, Վլադիմիր Իլյինը տեղական սոցիալ-դեմոկրատների հետ կապեր հաստատելու նպատակով այ-

ցելեց Պետերբուրգ (անլեգալ կերպով), Մոսկվա, Նիժնի-Նովգորոդ, Ուֆա, վորտեղ գտնվում էր իր աքսորի ժամանակը լրացնող Ն. Կրուպսկայան: 1900 թ. մայիսի վերջին Պետերբուրգ գնալիս Լենինը ձերբակալվեց Մարտովի հետ միասին և ազատվեց տասնորյա կալանքից հետո: 1900 թ. հուլիսի 29 (16)-ին Լենինը, ավարտելով «Искра»-յի նախապատրաստման բոլոր գործերը և հարազատների հետ տեսնվելուց հետո մեկնեց արտասահման, Գերմանիա և Շվեյցարիա՝ «Искра»-յի հրատարակությունը կազմակերպելու համար: Սկսվեց Լենինի առաջին վտարանդիությունը՝ շրջանը, վոր տեկց մոտ 5 ու կես տարի:

* * *

Ժընեվում (Շվեյցարիա) «Աշխատանքի ազատագրում» խմբի հետ յերկար բանակցելուց հետո, վորը քիչ էր մնում խզումով վերջանար, Լենինին և նրան ուղեկցող Պոտրեսովին հաջողվեց, վերջապես, համաձայնություն գալ Պրեխանովի հետ, և Լենինը Մյունխենում հաստատվելով, հնարավորություն ստացավ սկսելու «Искра» լրագրի և «Заря» թերթիական որգանի հրատարակությունը: Խմբագրական կազմի մեջ էին՝ Լենինը, Մարտովը, Պոտրեսովը, Պրեխանովը, Ակսելրոդը և Զասուլիչը: Սկզբում, մինչև Ն. Կրուպսկայայի ու Մարտովի դալը (նրանք յերկուսն էլ յեկան միայն հաջորդ տարվա գարնանը), Լենինը բացառիկ դժվար պայմաններում էր հրատարակում լրագիրը (վորն անլեգալ կերպով տպվում էր Լայպցիգում, գերմանական սոցիալ-դեմոկրատական տպարանում): Վերջվերջո բոլոր դժվարությունները հաղթահարվեցին, և 1900 թ. դեկտեմբերին լույս տեսավ «Искра»-յի «իր ուղղությունը լիովին «բուլճարական»» (Լենին) այդ լրագրի առաջին համարը, լրագրի, վորը բացառիկ դեր խաղաց մեր կուսակցության պատմության մեջ:

Լենինի վոգով առգորված «Искра»-ն, վորը նրա հակառակորդներն իրավացիորեն «Լենինյան «Искра»» էին անվանում, ստեղծեց մեր կուսակցությունը, մշակելով նրա ծրագիրը, տակառիկան և կազմակերպությունը: «Искра»-յի հետ միաժամանակ Լենինը հիմնեց նաև «խկրայական կազմակերպությունը», վորի անդամները—«Искра»-յի հայտնի «գործակալները», մշտապես հրահանգվելով Լենինի կողմից, Ռուսաստանում յեռանդուն պայքար էին մղում եկոնոմիզմը հաղթահարելու, կոմիտեները իսկ-

րայական հիմունքներով վերակազմելու, «Искра»-ն սրանց կողմից ղեկավար որգան ճանաչելու և II համագումար հրավիրելու համար, վորը պետք է ստեղծեր պրոլետարիատի իսկապես հեղափոխական կուսակցություն, վորպես մի կազմակերպված ամբողջություն:

Լենինը «Искра»-ն վարում էր քաղաքական մտքի բոլոր բուրժուական (լիբերալներ, «ստրուվիզմ») և մանր-բուրժուական (նարոդնիկություն, եսերներ) հոսանքների և ուղղությունների, սոցիալ-դեմոկրատիայի ներսում յեղած աջ ու «ձախ» ոպորտունիզմի բոլոր արտահայտությունների (հատկապես եկոնոմիզմի) դեմ անհաշտ պայքար մղելու վոգով: 1901 թ. ամառը եկոնոմիստները, վորոնց դեմ Լենինն «Искра»-յի էջերից յեռանդուն հարձակում էր մղում, իսկրայականների հետ հաշտվելու և միանալու տրամադրություն ցույց տվին: Համոզվելով, վոր եկոնոմիստներն անընդունակ են հեղափոխական մարքսիզմի տեսակետի վրա կանգնելու, Լենինը, չնայած իսկրայականների մի մասի (վորոնց թվում Պրեխանովի և Մարտովի) տատանումներին, պնդում էր, վոր պետք է բոլորովին խզել կազմակերպական կապերը եկոնոմիստների հետ: 1902 թ. գարնանը լույս տեսավ կուսակցության պատմության մեջ գարաշրջան կազմած՝ Լենինի «Что делять?» գիրքը: Այդ գիրքը, վոր Լենինի իսկրայական շրջանի ամենացայտուն և վայրեն աշխատությունն էր և «խկրայական տակառիկայի ու իսկրայական կազմակերպական քաղաքականության ամփոփումն էր», եկոնոմիզմին այնպիսի հարված հասցրեց, վորից նա այլևս վոտքի կանգնել չկարողացավ: Դիրքը հսկայական ապավորություն գործեց բոլոր ուսական «պրակտիկներին» վրա և վճռական դեր խաղաց իսկրայականության ամբողջական և նրա կողմից ուսական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները նվաճելու գործում:

Բացի եկոնոմիստների դեմ պայքարելուց, Լենինն անխնա մերկացնում էր նաև նոր ծնունդ առնող լիբերալիզմը հանձինս Ստրուվեյի և նրա կողմից խմբագրվող «Освобождение»-յի (վոր հոդ էր պատրաստում հետագայում, 1905 թ. կազեռական կուսակցություն կազմելու համար), ցույց էր տալիս լիբերալների կողմից ինքնակալություն դեմ մղվող «պայքարի» վախկոտ ու կիսատ բնույթը, նրանց անինդուստրիալությունը լուրջ և հետևողական կերպով դուրս բերող իրատական արհանջներ անելու, նրանց

կերկրուղը հեղափոխությունից, բանվոր դասակարգի հեղափոխա-
յան շարժումից: Առանձնապես կարևոր նշանակություն ունի
Սարուվեյի դեմ ուղղված Լենինի «Ձեռնարկի հալածիչները և լի-
բերալիզմի Հաննիբալները» (1901 թ.):

Լենինը մի շարք հոդվածներում բազմակողմանի քննադա-
տություն յենթարկեց՝ հանձինս եսերական կուսակցության վե-
րածնվող նորոգնիկությունը, ցույց տալով եսերների թեորիա-
կան եկեղծիքներ, ինչպես և այն, վոր նրանք չեն հասկանում
բանվոր դասակարգի ինքնուրույն դերը, քողարկում են պրոլե-
տարիատի ու գյուղացիության դասակարգային տարբերություն-
ները, քննադատելով նրանց այն դնահատականը, թե պրոլետա-
րիատը, գյուղացիությունը և ինտելիգենցիան բոլորովին միատե-
սակ հասարակական ուժեր են՝ ընդունակ սոցիալիզմի համար
պայքարելու: Մերկացնելով եսերական «սոցիալիզացիայի» բո-
նություն մասն-բուրժուական բնույթը և ցույց տալով կովի տե-
նորիստական, մասսայական շարժումից կտրված մեթոդների ան-
պետքությունը, Լենինը եսերական ծրագիրն ու տակտիկան բնո-
բոշում էր վորպես «հեղափոխական ավանտյուրիզմ» և «վուլգար
սոցիալիզմ», եսերներին համարելով բուրժուական դեմոկրատիայի
ձախ թևը:

Լենինը գործոն մասնակցություն ունեւր «Искра»-յի միջոցով
կուսակցության ծրագիրը մշակելու գործում—1902 թ. հունվար—
մարտ ամիսներին: Ծրագրի սկզբնական նախագիծը, վոր գրել էր
Պլեխանովը, չբավարարեց Լենինին, վորը պահանջում էր, վոր-
պես ծրագիրն «ուղղակի պատերազմ հայտարարի» ուսական
կապիտալիզմին, և ցույց էր տալիս Պլեխանովի մի շարք ձեա-
կերպումների վերացականությունն ու անճշտությունը, վորի հե-
տևանքով բավարար պարզորոշությամբ չէր ընդգծվում ծրագրի
հեղափոխական-պրոլետարական բնույթը: Ուստի Լենինը հանդես
յեկավ իր սեփական նախագիծով: Այդ հոդի վրա «Искра»-յի
խմբագրություն մեջ չափազանց սուր պայքար ծագեց Լենինի և
Պլեխանովի միջև, վորը քիչ էր մնում պառակտումով վերջանար:
«Искра»-յի խմբագրությունը հիմք ընդունեց Պլեխանովի նա-
խագիծը, նրա մեջ միջանի եյական ուղղումներ մտցնելով Լենի-
նի նախագիծից, հատկապես՝ մասն արտադրությունը խոշորի կող-
մից դուրս մղվելու և պրոլետարիատի դիկտատուրայի վերաբե-
րյալ կետը: Այդ ուղղումների շնորհիվ ծրագրի պլեխանովյան

նախագիծը ըավական լավացավ, սակայն այնուամենայնիվ վորչ
այն չափով, ինչպես Լենինն էր պնդում: Ծրագրի ագրարային
մասը, վոր պահանջում էր գյուղացիական կոմիտեներ ստեղծել և
հողակտրանքները (գյուղացիներից 1861 թ. ռեֆորմի ժամա-
նակ կտրված հողերը) գյուղացիներին վերադարձնել, Լենինն և
գրել:

Ծրագիրն «Искра»-յի խմբագրության կողմից ընդունվելուց
հետո Լենինը, վոր շարունակ հսկայական ուշադրություն էր
դարձնում գյուղացիական հարցի վրա (կարևոր նշանակություն
ունի նրա «Բանվորական կուսակցությունը և գյուղացիությունը»
հոդվածը «Искра»-յի 3-րդ №-ում) և սոցիալ-դեմոկրատների
կողմից այդ հարցին ցույց տրվող վերաբերմունքի վրա (անհրա-
ժեշտ է նշել Լենինի «К деревенской бедноте» մեծ ժողովրդա-
կանություն վայելող բրոշյուրը, 1903 թ.), մի մեծ հոդված գրեց—
«Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը», վորի
մեջ լայն կերպով բացատրում ու լուսաբանում էր խմբագրու-
թյան կողմից դեռ նոր ընդունված ագրարային ծրագիրը և ար-
տահայտվում էր հոգուտ հոդի ազգայնացման: Այդ հոդվածը
խմբագրություն ներսում նոր կոնֆլիկտի տալիս ծառայեց, վորը
նույնպես, քիչ էր մնում, խզում առաջ բերել Լենինի և Պլեխա-
նովի միջև: Պլեխանովն ընդհանրապես չափազանց դժգոհ էր, վոր
ինքը, ինչպես ցույց տվեց ծրագրի վերաբերյալ դիսկուսիան,
Լենինի համար գերագույն և անառարկելի ինստանցիա չի հան-
դիսանում, ուստի և Պլեխանովը առանձնապես խիստ և բծախն-
դի ձևով գրեց իր քննադատական դիտողություններն այդ հոդվա-
ծի առթիվ, վորը միայն չորս՝ ամսվա քննադատությունից և գրա-
գրությունից հետո վերջապես տպվեց «Варя»-յում: Պլեխանովի
և խմբագրության մյուս անդամների պնդումով Լենինն ստիպված
յեղավ հոդվածից դուրս գցելու ազգայնացման վերաբերյալ չա-
փազանց կարևոր կետը: Համագումարից քիչ առաջ Լենինը հա-
տուկ հոդվածով հանդես յեկավ ի պաշտպանություն «Искра»-յի
ագրարային ծրագրի ընդդեմ մենշևիկների ապագա ագրարային
զլխավոր տեսաբան Պ. Մասլովի հարձակումների: «Искра»-յի
շրջանում Լենինը գրել է նաև (1901 թ.) Բուլգակովի, Գերցի,
Չերնովի և ուրիշների ռեվիզիոնիզմի դեմ ուղղված մի հոդվածա-
շարք «Варя»-յի համար՝ «Аграрный вопрос и критика Маркса»
վերնագրով:

1902 թ. խմբագրության մեջ կուսակցական ծրագրի մշակման հարցի՝ Լենինի գրած ագրարային ծրագրին վերաբերող հոդվածի, իսկ ավելի առաջ, 1901 թ. Ստրուվեյի դեմ Լենինի գրած հոդվածի շուրջը (խմբագրության մի մասը, դրանց թվում նաև Պլեխանովը, կողմնակից եր ավելի մեղմ գծի լիբերալների հանդեպ) և մի շարք այլ հարցերի առթիվ ծագած սուր տարաձայնությունները Լենինի համար դժվարացնում էին «Искра»-յում հետևողական-հեղափոխական գիծ վարելը: Տարաձայնությունների ժամանակ խմբագրությունը կամ յերկու հավասար մասի յեր բաժանվում (Պլեխանով, Ակսելրոդ, Զասուլիչ՝ մի կողմից, Լենին, Մարտով, Պոտրեսով՝ մյուս կողմից), կամ «յերիտասարդներից» վորեւ մեկը տատանվելով՝ անցնում եր «Աշխատանքի ազատագրում» խմբի կողմը, և այն ժամանակ Լենինը մնում եր փոքրամասնության մեջ: Ուստի Լենինը մի միտք հղացավ, վորը նա մասնության մեջ: Ուստի Լենինը մի միտք հղացավ, վորը նա հետագայում ուղում եր իրագործել II համադումարում, այն ե՝ այնպես վերակառուցել խմբագրությունը, վոր նրա կազմն ավելի կայուն ընդլիժ ունենա և ապահովի խիստ հեղափոխական քաղաքականության կիրառումը:

«Искра»-յի շրջանում Լենինի գլխավոր խնդիրն եր ստեղծել մի ամուր, մարտունակ կուսակցություն իսկրայական ծրագրերի, տակտիկական և կազմակերպական գաղափարների ամուր հիմքի վրա: Կազմակերպական հարցերի, կուսակցական կազմակերպությունների կառուցման մեթոդների վրա Լենինը միշտ մեծ ուշադրություն եր դարձնում: Այդ տեսակետից, բացի «Что делать?» բրոշյուրից, մեծ դեր խաղաց նրա «Նամակ ընկերոջս մեր կազմակերպական խնդիրներին մասին»: Այն սուր պայքարում, վորը մղվում եր, որինակ, Պետերբուրգում, իսկրայականների կողմից կազմակերպությունները նվաճելու համար, Լենինը ղեկավար մասնակցություն ուներ, նամակագրություն վարելով «Искра»-յի համագումարի նախապատրաստման ամբողջ գործնական աշխատանքը: Յերբ համագումարի նախապատրաստման ընթացքում առանձնապես ակներև դարձան Բոլշևի ազգայնական և սեպարատիստական տրամադրությունները, վորը ձևականորեն ՌՄԻԿ մեջ եր մտնում և պահանջում եր ֆեդերատիվ հարաբերություն-

ներ ունենալ կուսակցության հետ, Լենինը հանդես յեկավ «Искра»-յում մի շարք հոդվածներով Բոլշևի բռնած դիրքի առթիվ, մատնանշելով, վոր Բոլշևի նկատմամբ թույլատրելի չե միայն ավտոնոմիա մի ընդհանուր կուսակցության սահմաններում: Անհրաժեշտ ե նշել նույնպես 1903 թ. Լենինի գրած «Ազգային հարցը մեր ծրագրում» հոդվածը, վոր նվիրված եր ծրագրի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ կետի բացատրությանը:

«Искра»-յի հիմնադրման որից մինչև 1902 թ. գարունը Լենինը խմբագրության մի մասի հետ ապրում եր Մյունխենում: Յերբ պարզվեց, վոր խմբագրությանը հետևում են, Լենինը տեղափոխվեց Լոնդոն, ուր հասավ ապրիլի 14 (1)-ին: Ամառը միառժամանակ նա ապրում եր Ֆրանսիայի հյուսիսային ափին իր մոր և Ա. Ի. Յելիզարովա քրոջ հետ: Ցարվա վերջին գալիս եր Շվեյցարիա ռեֆերատներ կարդալու: 1903 թ. փետրվարի վերջին՝ մարտի սկզբին Լենինը մոտ յերկու շաբաթ յեղավ Պարիզում, վորտեղ դասախոսություններ եր կարդում ագրարային հարցի մասին հասարակական գիտությունների ուսանական բարձրագույն դպրոցում և հանդես եր գալիս նույն թեմայի վերաբերյալ ռեֆերատով: 1903 թ. ապրիլի յերկրորդ կեսին Լենինը Լոնդոնից տեղափոխվեց ժընեվ, ուր փոխադրվեց նաև «Искра»-յի տպագրությունը:

1903 թ. հուլիսի 30-ից մինչև ոգոստոսը 23-ը տեղի ունեցավ կուսակցության II համադումարը, վորը բացվեց Բրյուսելում և իր աշխատանքները հետո տեղափոխեց Լոնդոն: Այդ համագումարի գումարման իդեան ամբողջովին պատկանում ե Լենինին, վորն սպասում եր, թե համագումարը պետք ե իսկական կուսակցություն ստեղծի իսկրայական սկզբունքներով և ավարտի այն համառ պայքարը կուսակցության համար, վոր միջանի տարի շարունակ մղել եր «Искра»-ն: Համագումարի ամբողջ նախապատրաստական աշխատանքը հիմնականում նույնպես Լենինն եր ղեկավարում:

Համագումարը, վորի աշխատանքներում Լենինն ամենայն ուսնդուն մասնակցություն ունեցավ (զեկուցումներ ու ձուներ կուսակցության մեջ Բոլշևի ունենալիք տեղի մասին, կուսակցության կանոնադրության մասին, կուսակցության ծրագրի մասին, ագրարային ծրագրի մասին, կանոնադրության 1-ին §-ի

վերաբերյալ նշանավոր դիսկուսիան), ցույց տվեց իսկրայական սկզբունքներ լիակատար հաղթանակը: Այն ուղղորտունիստական հոսանքներն ու տենդենցները, վորոնց դեմ իր ժամանակ պայքարել էյին Լենինն ու լենինյան «Աքսա»-ն (եկոնոմիզմ, բունդյան նացիոնալիզմ և այլն), համագումարում վոչ մի ընդունելութուն չգտան: Սակայն, հաղթահարելով հեղափոխական մարքսիզմի բոլոր նախկին հակառակորդներին և իսկրայական սկզբունքներով կուսակցութուն ստեղծելով, իրենք՝ իսկրայականներն սկզբում «բաժանվեցին» «ամուրների» և «մեղմերի» կանոնադրության 1-ին §-ի հարցի առթիվ, իսկ համագումարի վերջում ամբողջովին պառակտվեցին մեծամասնության և փոքրամասնության՝ կուսակցական կենտրոնների կազմի վերաբերյալ հարցի առթիվ: Իսկրայականների հետևից պառակտվեց նաև համագումարը:

Կանոնադրության 1-ին §-ի քննության ժամանակ Մարտովը, շնորհիվ համագումարի հակաիսկրայական տարրերի աջակցության, անցկացրեց իր բանաձևումը, վորը կուսակցության անդամի համար բավական եր համարում կուսակցական կազմակերպություններից վորեւ մեկի վերահսկողությամբ և ղեկավարությամբ աշխատելը: Լենինի բանաձևը, վորն ավելի խստագույն պահանջներ եր առաջադրում կուսակցության անդամին և կուսակցության անդամի պարտականությունն եր համարում կուսակցական կազմակերպություններից մեկում անձամբ մասնակցելը, համագումարի մեծամասնության կողմից մերժվեց: Համագումարի վերջում ուժերի հարաբերակցությունը փոխվեց, վորովհետև հակաիսկրայականները (եկոնոմիստները և բունդականները) հեռացան համագումարից, դրանով ել հենց մարտովականներին փոքրամասնության մեջ թողնելով: Այդ պատճառով ել Լենինը հնարավորություն ստացավ անցկացնելու կենտրոնական որգանի խմբագրության և Կի ալիպիսի ցուցակներ, վորոնց անձնական կազմը հետագայում ել հաստատապես ապահովեր ԿՈ (կենտ. որգանի) իդեոլոգիական կայունությունը և Կի ամուր գործնական ղեկավարությունը: Կի մեջ ընտրվեցին 3 բոլշևիկ (մենշևիկները հրաժարվեցին մտնելուց), ԿՈ մեջ ընտրվեցին Լենինը և Պլեխանովը, վորը համագումարում մեծամասնության կողմնակից եր. Մարտովը նույնպես ընտրվեց, սակայն հրաժարվեց մտնելուց: Պոտրեսովը, Ակսելրոդը և Զասուլիչը բոլորովին

չընտրվեցին: Այդպիսով Կի և ԿՈ իրենց կազմով բոլշևիկյան էյին, հետևապես բոլշևիկյան պետք ե լիներ նաև գերագույն կուսակցական հիմնարկը—կուսակցության խորհուրդը, վոր կազմված եր Պլեխանովից (նախագահ և Կի ու ԿՈ յերկուական ներկայացուցիչներից):

Մենշևիկները, ստեղծելով իրենց գաղտնի Ֆրակցիոն կազմակերպությունը, համագումարից հետո կրկնապատկված ուժով շարունակեցին կուսակցության կենտրոնական հիմնարկների դեմ դեռ համագումարում սկսած իրենց պայքարը: Այդ շրջանում Լենինի աշխատանքը չափազանց ծանր պայմաններում եր ընթանում: Մենշևիկյան ուղիղիցիայի հետ կուսակցության համար ընդունելի վորեւ համաձայնության դալու բոլոր փորձերն իզուանցան, չտալով վորեւ արդյունք: Համագումարում պարտություն կրելով, մենշևիկները նպատակ դրին զավթել կուսակցության կենտրոնական հիմնարկները: Պլեխանովը միառժամանակ կայուն եր և Լենինի հետ միասին խմբագրեց «Աքսա»-յի վեց համար, սակայն հոկտեմբերի վերջին, արտասահմանյան Լիգայի համագումարը վերջանալուց հետո Պլեխանովը զավաճանեց մեծամասնությանը և անցավ մենշևիկների կողմը:

Կուսակցության համագումարում Լենինը ներկայեր վորպես արտասահմանում ապրող ուսական սոցիալ-դեմոկրատներին համախմբող Լիգայի պատգամավոր. Լիգայում մեծամասնությունը պատկանում եր մենշևիկներին. վորովհետև կուսակցության համագումարն ավարտվել եր, Լենինը, վորպես Լիգայի պատգամավոր պետք ե նրա առաջ հանդես գար հաշվետվությամբ. մենշևիկներն այդ յեղույթից ոգավեցին, վորպեսզի ռեվանշ անեն համագումարում կրած պարտության փոխարին: Լենինի ղեկուցումից հետո Լիգայի մենշևիկյան մեծամասնության պնդումով հարակից ղեկուցումով հանդես յեկավ Մարտովը, և Լիգայի մեծամասնությունը (Ակսելրոդ, Պոտրեսով, Տրոցկի, Ղան, Զասուլիչ և այլն) բուն ծափահարությամբ և բացականչություններով պաշտպանեց նրա ճառը, վոր արտասանվեց զրգոված հիստերիկ տոնով և լիքն եր զրպարտիչ հարձակումներով ու մութ ակնարկներով Լենինի՝ համագումարում ունեցած իբր բարոյապես անթույլատրելի ընթացքի մասին: Վորպես բողոք մենշևիկների այդ անվայել արարքի դեմ, Լենինը հրաժարվեց իր ղեկուցման առթիվ վերջին, յեղրափական խոսքից և մնացած բոլշևիկներին հետ միառժամանակ հեռա-

ցավ Լիգայի նիստից: Պլեխանովի հետ միասին Լենինը պնդում էր, Վոր պետք է ցրել Լիգայի համագումարը, քանի Վոր նա հրաժարվում է փոխել Լիգայի ընդունած՝ նրա կանոնադրության այն կետերը, Վորոնք հակասում են համակուսակցական կանոնադրությանը: Այդ վորոշմանը, Վոր ձեռնադրեն Կի անունից ընդունվեց, Լիգան հրաժարվեց յինթարկվելուց:

Լիգայի համագումարում տեղի ունեցած դեպքերը վճռական դեր խաղացին Պլեխանովի հետագա ընթացքի համար. հենց նույն օրը, յերբ Լիգայի համագումարը վերջացավ (հոկտեմբերի 31-ին Պլեխանովը մենչեիկների ճնշումից վախեցած, հայտնեց Լենինին, Վոր անհրաժեշտ է կոոպտացիայի կարգով «Искра»-յի խմբագրական կազմի մեջ ընդունել նախկին խմբագիրներին, սպառնալով հակառակ դեպքում հրաժարվել Պլեխանովի դավաճանությանը մի ծանր հարված էր Լենինի համար, Վորի վրա ընդհանրապես չափազան ծանր է սուր կերպով եր անդրադառնում իր ստեղծած կուսակցության պառակտումը: Լենինը չէր կարող հաշտվել Պլեխանովի վորոշման հետ կոոպտացիայի մասին: Հնարավոր չհամարելով ստեղծված դրության մեջ շարունակել «Искра»-յի խմբագրումը և միաժամանակ չկամենալով Պլեխանովի հետ միասին համաձայնության գալ մենչեիկների հետ և ղեջումներ առնել վերջիններին, Լենինը նոյեմբերի 1-ին հեռացավ «Искра»-յի խմբագրության կազմից, ուր Պլեխանովը հետո կոոպտացիայի կարգով ընդունեց Մարտովին, Ակսելրոզին, Պոտրեսովին և Զասուլիչին: «Искра»-ն անցավ մենչեիկների ձեռքը, Վորոնք հետո մեծամասնություն ստացան նաև կուսակցության խորհրդում: Բոլշևիկները ձեռքում մնաց միայն Կի, Վորի կազմի մեջ մտավ կոոպտացիայի կարգով Լենինը (նոյեմբերի յերկրորդ կեսում), Վորը Կի արտասահմանյան ներկայացուցիչ էր նշանակված:

Այժմ Լենինի խնդիրն էր պաշտպանել Կի մենչեիկների վորոշումները: Սակայն Կի-ում լիակատար միաբանություն չկար, և Կի բոլոր անդամներն էլ ամբողջովին համերաշխ չեյին Լենինի հետ: Լենինին կոոպտացիոն կարգով ընդունելուց հետո շուտով արդեն Կի-ում հաշտվողական արամադրություններ յերևան յեկան: Այսպես, Կի, հակառակ Լենինի կարծիքի, արտահայտվում է հոգևոր մի շարք կազմակերպական ղեջումների Լիգային: Կուսակցության խորհրդի նիստում, Վոր տեղի ունեցավ 1904 թ. հունվարի 28—30-ին, Լենինը խորհրդին առաջարկեց

վորոշել մեծամասնության և փոքրամասնության միջև մղվող ներկուսակցական գաղափարական պայքարի շրջանակները, վորպեսզի գաղափարովին պայքարի՝ կուսակցության նորմալ կյանքը կաշմալուծող ձեերը (բոյկոտ, հրաժարում Կի ղեկավարությանը առխառելուց): Այդ բանաձեի փոխարեն մենչեիկներն անցկացրին ուրիշ բանաձե, Վորը պնդում էր կոոպտացիայի կարգով Կի մեջ ընդունել փոքրամասնության կողմնակիցներին, քանի Վոր Կի, վորպես թե, կուսակցության միայն մի մասն է ներկայացնում Դրան ի պատասխան Լենինն առաջարկեց մի բանաձե, Վորը պահանջում էր կուսակցության III համագումար հրավիրել: Բանաձեը մերժվեց:

Համոզվելով, Վոր նորմալ ճանապարհով հնարավոր չի հաղթահարել կուսակցության ճգնաժամը, Լենինն անհրաժեշտ է համարում դիմել III համագումարին և սկսում է ազիտացիա անել համագումարը հրավիրելու ոգտին: Հաշտվողական արամադրությանը համակված Կի չպաշտպանեց Լենինին, ձայների մեծամասնությամբ համագումար հրավիրելու դեմ արտահայտվեց և նույնիսկ իր վորոշմամբ պարսավանք հայտնեց Լենինին: Այդ պատճառով Լենինը վորոշ ժամանակով հարկադրված յեղավ դուրս գալու կուսակցության խորհրդի կազմից, վորտեղ նա գտնվում էր վորպես Կենտրոնական Կոմիտեի ներկայացուցիչ:

1904 թ. մայիսին ժընեվում լույս տեսավ Լենինի մի մեծ բրոշյուրը—«Шаг вперед, два шага назад», վոր նվիրված էր կուսակցության ճգնաժամին: Յերբ այդ բրոշյուրի տպագրությունը վերջանում էր, Կի անգամ, հաշտվողական Նոսկով-Դլերովն անհաջող փորձ արեց դադարեցնելու բրոշյուրի տպագրությունն ու տարածումը: Այդ բրոշյուրում Լենինը տվեց պառակտման սպառիչ վերլուծությունը, մանրագնին կերպով հետևելով նրա բոլոր ետապներին ու իրադարձություններին և կուսակցության՝ մեծամասնության ու փոքրամասնության բաժանվելու եյությունը բնորոշելով վորպես կուսակցության հեղափոխական ու ոպորտունիստական թեերի պայքար: Մենչեիկները և նոր «Искра»-յի բռնած գիրքը կազմակերպական ասպարեզում Լենինը բնորոշում էր «վորպես ոպորտունիզմ կազմակերպական հարցերում»:

«Шаг вперед, два шага назад» բրոշյուրը Լենինի միակ խոշոր աշխատությունն էր պառակտման համարյա մի ամբողջ տարվա ընթացքում: Միքանի ամիս շարունակ, 1904 թ. մայիսից մինչև

նոյեմբեր, Լենինը համարյա վոչինչ չի գրում, սահմանափակվելով միայն Մ. Ուլինսկու, Վ. Վորովսկու, Ս. Բոգդանովի և ուրիշների գրած միջանի բրոշյուրների խմբագրությամբ: (Այդ բրոշյուրներն ուղղված էյին մենշևիկներին դեմ): Վորովսկու և բոլշևիկներն այդ ժամանակ սեփական տպագիր որդա՞ն չունեյին, ուստի Լենինի գրական գործունեյությունը ծայր աստիճան դժվարացել էր: Մինչդեռ մենշևիկներն իրենց արամադրության տակ ունենալով «Искра»-ն, ամեն մի համարում անամոթ հալածանքով էյին զբաղվում բոլշևիկների և անձամբ Լենինի դեմ «Искра»-յի էջերում բոլշևիկների դեմ դուրս յեկան նաև գերմանական սոցիալ-դեմոկրատներն այնպիսի հեղինակություններ, ինչպես Կ. Կաուցկին և Ռ. Լյուքսեմբուրգը, վորոնք պաշտպանում էյին մենշևիկներին: Կաուցկին, II Ինտերնացիոնալի այդ ականավոր ներկայացուցիչը, վոր «որթորդս» մարքսիստ էր համարվում, հրաժարվեց տեղ տալ Լենինին իր կողմից խմբագրվող «Նոյե Յայտ» ժուռնալի էջերում՝ Ռ. Լյուքսեմբուրգի հարձակումներին պատասխանելու համար:

Ձնայած հաշտվողական ԿԿ հակադեցությանը՝ Լենինը շարունակում է ագիտացիա մղել III համագումար հրավիրելու ոգով: Հուլիսին ԿԿ յերեք անգամը (հաշտվողական Կրասինը, Նոսկով-Յիբովը և Գալպերինը) նորից դեմ են արտահայտվում III համագումար հրավիրելուն, հակառակ մի շարք տեղական կազմակերպությունների պահանջին, և վորոշում են կոոպտացիայի կարգով ԿԿ կազմի մեջ ընդունել դարձյալ յերեք հաշտվողականների. միաժամանակ ԿԿ այդ յերեք անգամը վորոշեցին հեռացնել Լենինին ԿԿ-ի գործերն արտասահմանում վարելուց և առաջարկեցին նրան իր աշխատությունները միայն ԿԿ համաձայնությամբ տպագրել: Լենինը հրաժարվեց այդ յերեք՝ արագորեն փոքրամասնության կողմը եվոլյուցիա կատարած անդամների «հուլիսյան դեկլարացիայի» որինականությունը ճանաչելուց և շարունակեց պայքարել հոգուտ III համագումար հրավիրելու, վրձնաբար կանգնելով բոլշևիզմի հետագա կազմակերպական ձևավորման ուղու վրա: Ոգոստոսին Լենինը դեկավարում է Շվեյցարիայում տեղի ունեցող՝ 22 ականավոր բոլշևիկների ժողովը, վորը դիմում է կուսակցությանը III համագումար հրավիրելու կոչով: Ռուսաստանում այնուհետև տեղի յեն ունենում մեծամասնության մի շարք կոնֆերենցիաներ, վորոնք գեկանմբերին

ստեղծում են Մեծամասնության կոմիտեների բյուրո—համագումարի հրավիրման և նախապատրաստման գործնական կենտրոն: ՄԿԿ կազմը հիմնականում նշել էր Լենինը:

Հսկայական նշանակություն տալով բոլշևիկների ինքնուրույն յեւոլյութներին միջադպիսի ասպարեցում, Լենինը կազմակերպում է բոլշևիկները կողմից II Ինտերնացիոնալի Ամասերդամյան կոնգրեսին յերկու պատգամավոր ուղարկելու գործը և մասնակցում է կոնգրեսին ներկայացվիլիք գեկուցումը կազմելուն ու խմբագրելուն:

Տարվա վերջին Լենինը վճռական հարված է հասցնում հաշտվողական ԿԿ, վոր զաղտնի կերպով կոոպտացիայի կարգով իր կազմի մեջ էր ընդունել յերեք մենշևիկների, լույս ընծայելով «Заявление и документы о разрыве центральных учреждений с партией» բրոշյուրը, վորի մեջ մեղադրում է ԿԿ յերեք անդամին կուսակցությանը սխտեմատիկաբար խաբելու մեջ: Այդ ժամանակ էլ Լենինը ձեռնարկում է մեծամասնության որդան «Вперед» լրագրի հրատարակությանը:

Դեռ մինչև «Вперед» լրագրի հիմնումը բոլշևիկներն ու մենշևիկներն միջև կազմակերպական տարաձայնությունները մեծացել, տակտիկական ու քաղաքական տարաձայնություններ էյին դարձել (այդ տարաձայնությունները նկատվեցին դեռ կուսակցության II համագումարում): «Земская кампания и план «Искры»» բրոշյուրի մեջ Լենինը մի շարք հողվածներով անխնա քննադատում է մենշևիկների ոպորտունիստական տակտիկան, վորոն պլուրետորիատի ուղադրությունը շեղում էյին «ժողովրդական ապստամբության գլուխ անցած՝ ինքնակալության դեմ ուղղակի գրոհելուց» և պայքարի «բարձրագույն տիպ» էյին հռչակում բանվորական հեռորների յեւոլյութները լիբերալ բուրժուազիայի դեմստվոյական և այլ ժողովներում: Հավասարապես Լենինը խաբաղանում էր մենշևիկների՝ շարժման մեջ լիբերալներին դեկավար դեր հատկացնելու և բուրժուական լիբերալիզմի հակահեղափոխական ու հակապլուրետարական բնույթը մթագնելու տենդենցը: Հետագայում, 1905 թ. ամբողջ հեղափոխության ընթացքում Լենինը սխտեմատիկ կերպով, քայլ առ քայլ, հետևում է մենշևիզմի բոլոր շեղումներին հեղափոխական մարքսիզմից տակտիկական լողունքների ասպարեցում:

Յերբ Պետերբուրգում ծայր առան հունվարի 22 (9)-ի դեպ-

քերք, վոր Լենինը բնորոշեց վորպիս «հեղափոխութեան սկիզբը Ռուսաստանում», նա իսկույն եւթ որակարգի հարց դարձրեց զինված ապստամբութեանը գաղափարապէս - քաղաքականորեն կազմակերպելու և տեխնիկապէս նախապատրաստելու և պրոլետարիատի կողմից այն ղեկավարելու հարցը: Զինված ապստամբութեան հաջողութեան համար Լենինն անպայման նպատակահարմար և անհրաժեշտ է համարում «մարտական համաձայնութեան» կնքել ղեմակրատիայի հեղափոխական տարրերի հետ, պահպանելով բանվորական կուսակցութեան գաղափարական ու կազմակերպական լիակատար ինքնուրույնութեանը: Մեծ նշանակութեան տալով բանվոր դասակարգի մեջ ռազմական տակտիկայի և ռազմական տեխնիկայի գիտելիքներ տարածելուն, Լենինը «Вперед» լրագրում ապագրում է Պարիզի Կոմունայի գեներալ Կլյուզեբեյի հուշիկները փողոցային կռիւի տակտիկայի մասին. նորից է ուսումնասիրում Մարքսի և Ենգելսի հոդվածները ռազմական հարցերի մասին, միջոցներ է ձեռք առնում զենք գնելու և Ռուսաստան ուղարկելու՝ մարտական ջոկատների համար:

աղբուրթեան չի մատնում ապստամբութեան նախապատրաստման և իրադրոժման հետ կապված և վոչ մի մանր հարց:

Ռուսաստանում սկսված հեղափոխութեանը բնորոշելով վորպիս բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան, Լենինը բանվոր դասակարգի խնդիրն է համարում ինքնակալութեան տապալումը զինված ապստամբութեան միջոցով, Սահմանադիր Ժողովի գումարումը և դեմոկրատական հանրապետութեան նվաճումը: Պայքար մղելով հանուն դեմոկրատական հեղափոխութեան լիակատար հաղթութեան, պրոլետարիատը պետք է կռիւ՝ այն սոցիալիստական հեղափոխութեան վերածելու համար: Վորպիս կենտրոնական լոգունգ Լենինն առաջադրում է պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական զինատուրայի գաղափարը, այդ լոգունգը և պրոլետարիատի ներկայացուցիչների մասնակցութեան թույլատրելիութեանը ժամանակավոր հեղափոխական կառավարութեան մեջ հիմնավորելով մի շարք փայլուն հոդվածներում («Սոցիալ-դեմոկրատիան և ժամանակավոր հեղափոխական կառավարութեանը», «Պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական դեմոկրատական զինատուրա», «Ժամանակավոր հեղափոխական կառավարութեան մասին»): Լենինն ընդգծում է, վոր հեղափոխական խնդիրները հաջողու-

թեամբ լուծելու համար անհրաժեշտ է հեղափոխական բանակ ստեղծել, և թվում է այն վեց հիմնական խնդիրները, վորոնք պետք է հեղափոխական կառավարութեան ծրագրերը կազմեն - համաժողովրդական Սահմանադիր Ժողովի գումարում, Ժողովրդի զինում, քաղաքական ազատութեան, լիակատար ազատութեան ճնշված և անիրավահավասար աղբուրթեաններին, ութժամյա աշխատանքային որ և գյուղացիական կոմիտեներ: Մերկացնելով բուրժուազիայի ստրկատուութեանն ու վախկոտութեանը, հեղափոխութեանը դավաճանելու և ինքնակալութեան հետ գործարք կնքելու նրա պատրաստակամութեանը, Լենինը միաժամանակ պնդում է գյուղացիական շարժումը պրոլետարիատի կողմից ամենայնապակաս կերպով պաշտպանելու անհրաժեշտութեանը՝ կիպ մինչև կալվածատիրական հողերի գրավումը: Հեղափոխութեանը կարող է հաղթանակել միայն այն դեպքում, յերբ ղեկավար դերը պատկանի պրոլետարիատին, վորը պետք է անցնի Ժողովրդական մասսաների և ամենից առաջ՝ դեմոկրատիայի, հանրապետութեան ու մինիմում-ծրագրին իրագործելու համար պայքարող գյուղացիութեան գլուխ: Յեւ Լենինը սաստիկ ծագումով է մենշևիկներին, վորոնք վախենում են բանվոր դասակարգի հեղափոխային և պրոլետարիատի վախեցնում են իշխանութեանը նվաճելու հեռանկարով:

Բոլշևիկների տակտիկական հիմնական գիրեկտիվներն ու լոգունգները 1905 թվի հեղափոխութեան մեջ՝ հաստատվեցին III համագումարի բանաձեւերում և ապա բացառիկ խորութեամբ լուսաբանվեցին Լենինի «Две тактики социал-демократии в демократической революции» բրոշյուրում, վոր նա գրեց համագումարից հետո: Միաժամանակ այդ բրոշյուրում Լենինն անողորք քննադատութեան յենթարկեց մենշևիկների տակտիկական պլատֆորմը, վորոնք սոցիալ-դեմոկրատիային լոգունգ ելին տալիս՝ հեղափոխութեան ժամանակ մնալ վորպիս «ծայրահեղ հեղափոխական ուղղիցիայի կուսակցութեան»:

Յերրորդ համագումարը, վորի նախապատրաստման և գումարման վրա Լենինն այնքան շատ ջանք թափեց, տեղի ունեցավ 1905 թվի ապրիլի 23-ից մինչև մայիսի 10-ը Լոնդոնում: Իր առաջ ինքնուրույն բոլշևիկյան կուսակցութեան ստեղծելու խնդիր դնելով և արդեն դրանից հետո, յերբ բոլշևիզմի կազմակերպական ձեւավորումը և սահմանադատումը մենշևիկներից և

հաշտվողականներին լիակատար ընթացքով եր առաջ գնում, Լենինը շարունակում եր յերկյուղ կրել հաշտվողական տրամադրությունների ազդեցությունից և խստորեն զգուշացնում եր համագումարի կազմակերպիչներին, վորոնք աշխատում եյին Ռուսաստանում, վորպեսզի նրանք կուսակցության ԿԿ և Խորհրդի հետ իրենց կապերը խզած անձանց նկատմամբ վոչ մի «լոյալություն» չպահպանեն: Նույն այդ պատճառով Լենինն առաջարկեց մերժել Բերելի առաջարկը, վոր ուղում եր հանդես գալ միջնորդի դերում բոլշևիկների և մենշևիկների միջև: Այդ տակտիկան այն հետևանքն ունեցավ, վոր ԿԿ անձնատուր յեղավ, ընդունեց համագումարի որինականությունը և մասնակցեց նրա գումարման աշխատանքներին:

Լենինը մեծ ուշադրությամբ պատրաստվում եր համագումարին, կազմելով համարյա բոլոր հիմնական բանաձևերի նախագծերը, վորոնք հետո ընդունվեցին համագումարի կողմից (զինված ապստամբության մասին, ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին, սոցիալ-դեմոկրատիայի բաց քաղաքական յեղովթի մասին, սոցիալ-դեմոկրատների մասնակցության մասին ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ, գյուղացիական շարժմանը ցույց տրվելիք վերաբերմունքի մասին): Համագումարում Լենինը հանդես յեկավ մի շարք զեկուցումներով ու ճառերով: Նրա առաջարկությամբ համագումարն արտահայտվեց հոգուտ գյուղացիության հեղափոխական ձեռնարկումների պաշտպանության՝ կիպ մինչև ամբողջ կալվածատիրական, յեկեղեցական, վանքապատկան ու թագավորական տան հողերի գրավումը: Միայն մի մեծ հարցի առթիվ (չհաշված կուսակցական մեկ թե յերկու կենտրոն ունենալու անհրաժեշտության համեմատաբար փոքր հարցը) համագումարը չհամաձայնվեց Լենինի հետ, և համագումարն իրավացի չեւ.—այդ՝ կազմակերպություններում բանվորների և ինտելիգենցիայի փոխհարաբերության սուր հարցն եր: Լենինը ժխտում եր մենշևիկների դեմագոգիական քարոզը լիակատար դեմոկրատիայի և ընտրողականության մասին, վորոնք ռուսական վոստիկական պայմաններում անհնարին եյին, սակայն յեռանգով պնդում եր, վոր պետք ե առավելագույն թվով բանվորներ մտցնել կոմիտեներին մեջ: Համագումարում ներկա գտնվող կոմիտեականների մեծա-

մասնութիւնը համառեց այդ հարցում և չհամաձայնվեց ընդունելու համագումարին առաջարկած բանաձևը:

Իր կազմով գուտ բոլշևիկյան համագումարում Լենինն ընտրվեց ԿԿ-ի անդամ և նրա կողմից նշանակվեց «Пролетарий» լրագրի խմբագիր, վորն սկսել եր լույս տեսնել «Вперед» լրագրի փոխարեն: Համագումարի հետևանքով բոլշևիզմը չափազանց ամրացավ և ուժեղացավ, ուստի Լենինը հնարավոր եր համարում ժամանակավորապես միանալ մենշևիկների հետ (վորպեսզի նվա-նրանց պաշտպանող բանվորության մի մասին) այն պայմանով, վոր բոլոր սոցիալ-դեմոկրատներն ընդունեն կուսակցության մարտունակությունն ապահովող վորոշ կազմակերպական նորմաներ: Հենց միացում ե պետք,—գրում եր Լենինը,—և վոչ թե կուսակցության յերկու մասերի «կցկցում»:

Հեղափոխության ամբողջ ընթացքում Լենինը շարունակ վերլուծում եր պայքարի շրջանների ու ձևերի փոխանորդումը, արձապանվելով Ռուսաստանում տեղի ունեցող մասսայական շարժման բոլոր արտահայտություններին (հունվարի 22 (9), «Պոսյոմկինի» ապստամբությունը, հոկտեմբերյան ընդհանուր գործադուլը և այլն), ուսումնասիրելով, ամփոփելով և ընհանրացնելով հեղափոխական պայքարի փորձը (համեմատելով, որինակ, «Մոսկվայի դեպքերի դասերը») և տալով լողունգներ, վորոնք շարժումը բարձրացնում, հասցնում եյին պայքարի հաջորդ ավելի բարձր աստիճանին:

Ցերե կառավարությունը հայտարարում ե «Բուլիգինյան Դեմալի»,— խոշոր բուրժուազիայի ու կալվածատերերի ներկայացուցիչներից կազմված այդ խորհրդակցական որգանի յենթադրելի գումարման մասին, Լենինը պաշտպանում ե Բուլիգինյան Դեմալան ակտիվ բոյկոտի յենթարկելու և վիժեցնելու լողունգը, մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելով ապստամբության լողունգներով և կոչ անելով նրանց՝ մարտական ջոկատներ ու հեղափոխական խմբեր ստեղծելու: Չինված ապստամբության կուրս ընդունելով, անդադար ապացուցելով, վոր միայն ապստամբության հաղթանակը, միայն պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրայի հաղթանակը կարող ե ամրացնել հեղափոխության այս կամ այն նվաճումը, Լենինը քննադատում ե «հեղափոխական ինքնավարության» մենշևիկյան լողունգները, վորոնց համաձայն այդ ինքնավարությունը հա-

րավոր եր, իբր թե, առանց հին իշխանության տապալման, քըն- նադատում է Սահմանադիր ժողովի «ինքնաբուխ», վորպես թե՝ առանց ժամանակավոր հեղափոխական կառավարության առկա- յության հնարավոր «ծննդի» բունդյան թեորիան և աջ թևի ուղորտունիստական մեծ ու պատիկ մյուս զաղափարները: Լենինը շատ անգամ եր ընդգծել 1905 թ. հեղափոխության բուրժուական դեմոկրատական բնույթն ընդհանրապես և գյուղացիական շար- ժումների բուրժուական-դեմոկրատական բնույթը մասնավորա- պես, պնդելով, վոր անհրաժեշտ է խիստ տարբերել բուրժուա- կան-դեմոկրատական հեղաշրջումը սոցիալիստականից: Այդ տե- սակետից նա քննադատում է եսերներին, վորոնք հավասարա- որդադործման հիմունքներով հող ստանալու գյուղացիական պա- հանջները հրամցնում եյին վորպես սոցիալիզմ, և այն մենշևիկ- ներին (Տրոցկի), վորոնք կառչելով գերմանական «ձախերի» (Պար- վուս—Ռ. Լյուքսեմբուրգ) ստեղծած «պերմանենտ հեղափոխու- թյան ուտոպիական և կիսամենշևիկյան սքեմայից—մարքսյան հեղափոխության այլանդակ պատկերում (Ստալին),—ավյալ հե- ղափոխության մեջ հնարավոր եյին համարում, գյուղացիությունն տնտեսելով, զուտ բանվորական կառավարության լոգունգն առա- ջադրել: Բնորոշելով 1905 թ. հեղափոխությունը՝ վորպես բուր- ժուական-դեմոկրատական հեղափոխություն, Լենինը միևնույն- ժամանակ դիտում է այն վորպես՝ պրոլետարիատի կողմից սո- ցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարի մի առ- ախճան: «Բուրժուական-դեմոկրատական հեղափոխության հաղ- թությունը Լենինը պատկերացնում եր մոչ վորպես պրոլետարիա- տի կովի ու ընդհանրապես հեղափոխության տվարտում, այլ վորպես առաջին շրջան ու անցման աստիճան» (Ստալին): Առա- ջին հեղափոխությունը չինական պարսպով անջատված չէ յերկ- րորդ հեղափոխությունից, բուրժուական-դեմոկրատական հեղա- փոխությունը վերանում, դառնում է սոցիալիստական հեղափո- խություն: «Դեմոկրատական հեղափոխությունից—գրում եր Լե- նինը 1905 թ.—մենք խսկույն և եթ կսկսենք անցնել—և հենց մեր ուժերի համեմատ կազմակերպված ու գիտակից պրոլետարիատի ուժերի համեմատ—կսկսենք անցնել սոցիալիստական հեղափո- խության»: Հենց այդ ժամանակ, 1905 թ. հեղափոխության շր- ջանում, Լենինն ասում եր, վոր «մենք կողմնակից ենք անընդ- հատ հեղափոխության», վոր «մենք կես ճանապարհին չենք

կանգ առնի»: Յերբ 1905 թ. հեղափոխությունն սկսվեց, Լենինը կուսակցության առաջ հեռակալ խնդիրը դրեց. «Զգտել այն բա- նին, վորպեսզի ուսական հեղափոխությունը մոչ թե միջանի տմիսների շարժում լինի, այլ միջանի տարիների շարժում լի- նի, վորպեսզի հեղափոխությունը հանդի մոչ միայն բարձրա- գույն իշխանությունների մանր գելուսներին, այլ այդ բար- ձրագույն իշխանությունների լիակատար տապալմանը»:

«Մենք բոլոր ուժերով կոգնենք ամբողջ գյուղացիությանը դեմոկրատական հեղափոխություն կատարելու,—գրում եր Լենի- նը,—վորպեսզի դառնով ավելի հեռ լինի մեզ համար, պրոլետա- րիատի կուսակցության համար, վորչափ կտրելի յե ավելի շուտ անցնել նոր ու ավելի բարձր խնդրին—սոցիալիստական հեղա- փոխությանը»: Բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերածելու անհրաժեշտության տեսակետից Լենինն այսպես եր բանաձևում պրոլետարիատի խնդրները «Две тактики» բրոշյուրում. «Պրոլետարիատը պետք է մինչև վեր- ջը հասցնի դեմոկրատական հեղաշրջումը, միացնելով իր հետ գյուղացիության մասսային, վորպեսզի ուժով ջախջախի ինքնա- կալության դիմադրությունը և մոչնչացնի բուրժուազիայի ան- կայունությունը: Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հե- ղաշրջում կատարի, իր հետ միացնելով բնակչության կիսապրո- լետարական մասսային, վորպեսզի ուժով խորտակի բուրժուա- ղիայի դիմադրությունը և մոչնչացնի գյուղացիության ու մանր բուրժուազիայի անկայունությունը»: Այս պատճառով ել հակա- հեղափոխական տրոցկիստական բամբասանք է այն պնդումը, վոր իբր թե Լենինը 1905 թ. չեր տեսնում բուրժուական-դեմո- կրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերածելու ան- հրաժեշտությունը, վոր իբր թե այդ զաղափարին նա հանգեղ է իմպերիալիստական պատերազմի ժամանակ միայն, իսկ մին- չև այդ յենթադրում եր, վոր առաջիկա հեղափոխությունը Ռու- սաստանում սահմանափակվելու յե բուրժուական-դեմոկրատա- կան հեղաշրջման շրջանակներով: Տրոցկիստական բամբասանք է այն պնդումը, վոր իբր թե Փետրվարյան հեղափոխությունից հետո կուսակցությունը «վերադինվելու» պահանջ դրաց, վորպես- ղի կոխ մղի սոցիալիստական հեղափոխության համար: Իրա- կանում վերաճման զաղափարը տրված է արդեն Լենինի քաղա- քական ամենամիակ աշխատության մեջ՝ «Друзья»-յում:

1905 թ. հոկտեմբերյան ընդհանուր գործադուլից հետո և հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո Լենինը Ստոկհոլմի և Հելսինգֆորսի վրայով նոյեմբերի 20 (7)-ի մոտերքը գալիս և Պետերբուրգ և այստեղ միառժամանակ ապրում և կիսալեզալ, դեկավարելով բոլշևիկների գործունեությունը, մասնակցելով ԿԿ նիստերին, բոլշևիկների լեզալ «НОВАЯ ЖИЗНЬ» լրագրի խմբագրական աշխատանքներին և հանդես գալով կուսակցական ժողովներում: Հենց առաջին հոդվածում, վոր Լենինը Պետերբուրգ գալուց հետո գետեղեց «НОВАЯ ЖИЗНЬ»-ում, նա արտահայտվում և հոգուտ կուսակցության վերակառուցման գեմոկրատական սիլզբուենքներով, քանի վոր կուսակցության գոյությունը պայմանները հոկտեմբերի 17-ից հետո ավելի ազատ էյին դարձել, և առաջարկում և առավելագույն թվով բանվորներ ընդունել կուսակցության մեջ՝ կուսակցության գաղտնի ապարատը պահպանելու պայմանով: Լենինը միքանի անգամ այցելում և Բանվորական պատգամավորների Պետերբուրգի խորհրդի նիստերը, ուսումնասիրելով բանվորական հեղափոխական շարժման այդ նոր ձևը: Այն ժամանակ, յերբ մենշևիկները խորհուրդներում միայն «հեղափոխական ինքնավարություն» էյին տեսնում, Լենինը խորհուրդները հանձարեղորեն բնորոշեց վորպես ապստամբության մարմիններ և վորպես նոր իշխանության սաղմային որգաններ: Պետերբուրգի խորհրդում Լենինը հանդես յեկավ միայն մեկ անգամ, 1905 թ. նոյեմբերի 26 (13)-ին, մասսայական լուրուտի հարցի առթիվ: Դեկտեմբերին Լենինը գեկավարում և բոլշևիկների Տամմերֆորսյան կոնֆերենցիան, վորտեղ հանդես գալիս գեկուցումներով ընթացիկ մոմենտի և ազրարային հարցի մասին. վերջին հարցի վերաբերյալ բանաձևում նրա առաջարկությունը ծրագրից հանվում և հողակտրանքների վերաբերյալ կետը և մտցվում և մի կետ, վորով պաշտպանվում և կավածատրեական և այլ հոդերի գրավումը գյուղացիության կողմից:

Դեկտեմբերյան ապստամբության պարտությունից հետո, վորի դասերին Լենինը շատ մեծ ուշադրություն վերաբերվեց, քննադատության յենթարկելով Պլեխանովի «պետք էր դենք վերցնել» ոպորտունիստական ֆորմուլան, Լենինը շարունակում և կողմորոշվել դեպի հեղափոխություն նոր վերելքը և նոր զինված

ապստամբությունը՝ վորպես նրա անխուսափելի հետևանք. նա շարունակում և պաշտպանել Ի Ռումայի բոլկոտի տակտիկան, այդ Ռուման ժողովրդական ներկայացուցչության կեղծիք համարելով և մերկացնելով կադետների սահմանադրական պատրանքները և նրանց ու մենշևիկների քարոզչական մասին, թե իբր Ռուսաստանի համար սահմանադրական ու պառլամենտական զարգացման դարաշրջան և սկսվել: Մասնավորապես Լենինն անհրաժեշտ և համարում, վոր կուսակցությունը պաշտպանի մարտական ջոկատները գործունեությունը: Պաշտպանելով պայքարի հեղափոխական ուղիները և մերկացնելով կադետների համաձայնողականությունը, Լենինը պայքարում և կադետական Ռումայի և դումայական (կադետական) միախառնության պաշտպանության յոգունդների դեմ, վոր առաջադրում էյին մենշևիկներն ու IV համագումարում ընտրված մենշևիկյան ԿԿ: Վորպես հակալիք այդ լողունդին Լենինը «Ռումայի ձախ խմբերից գործադիր կոմիտե» կազմելու գաղափարն և առաջադրում: Ռումայի ներսում Լենինն այն տակտիկան էր պաշտպանում, վոր բանվորական ֆրակցիան պետք և մոտենա հեղափոխական դեմոկրատիայի հետ՝ հանձինս աշխատավորների (սրուզովիկների), վորոնք արտահայտում էյին գյուղացիության շահերը, միաժամանակ մատնանշելով նրանց գեմոկրատիզմի թերատությունը և անհետևողականությունը, պահանջելով, վոր նրանք ավելի հեղափոխական դիրք բռնեն, և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը համարելով աշխատավորականներին կադետներից անջատելը:

Իր քաղաքական հայացքները 1906 թ. առաջին կեսում Լենինը շարադրում և մասամբ բրոշյուրներում, մասամբ բոլշևիկյան «Волна», «Вперед», «Эхо» լեզալ թերթերում: Առանձնապես նշանավոր և Հելսինգֆորսում 1906 թ. ապրիլին գրված «Победа кадетов и задачи рабочей партии» բրոշյուրը, վորի մեջ Լենինը տալիս էր կադետական կուսակցության փայլուն վերլուծությունը և գրում էր, վոր «մեր խնդիրը վոչ թե կադետական Ռումայի պաշտպանությունն և, այլ Ռումայի ներսի և այդ Ռումայի հետ կապված կոնֆլիկտների ոգտագործումը՝ թշնամու վրա հարձակվելու, ինքնակալության դեմ ապստամբելու հարմարագույն ըուպեն ընտրելու համար»: Այդ բրոշյուրում էլ շարադրված են Լենինի չափազանց կարևոր և արժեքավոր մտքերը դիկտատուրայի եյություն մասին: Լենինի՝ տվյալ շրջանին վերաբերող մյուս

խոշոր աշխատություններէց անհրաժեշտ է նշել «Пересмотр аграрной программы рабочей партии»:

Ապրելով նախ Պետերբուրգում, հետո Կոնկլաւայում (Ֆինլանդիայում, Պետերբուրգից վոյ-հեռու), Լենինը բավական հաճախ հանդես ե գալիս կուսակցական ու բանվորական ժողովներում և ամենամատիկ մասնակցություն ե ունենում Պետերբուրգի սոց.~դեմոկրատական կազմակերպության մի շարք կոնֆերենցիաներում, գաղափարապես զլխավորելով բուլշեիկյան կենտրոնական կոմիտեն և մշտական պայքար մղելով մենշեիկներէ դեմ և—IV համագումարից հետո—նաև մենշեիկյան Կենտրոնական Կոմիտեյէ դեմ: Լայն չափերով հայտնի դարձավ Լենինի 1906 թ. մայիսի 22 (9)~ի յետլիցը Կարպով ազգանվան տակ՝ Պանինայի տանը տեղի ունեցած միախնդում:

Յերկու անգամ, հունվարին և մարտին, Լենինը կուսակցական գործերով գալիս է Մոսկվա և յերկրորդ անգամին քիչ է մնում ձերբակալի:

Յերբ կուսակցության որակարգի մեջ է դրվում IV, այսօրեւ կոչված «Միացուցիչ» համագումար հրավիրելու հարցը, Լենինը մինչև համագումարը մշակում է մեծամասնության տակտիկական պլանֆորմը, անց է կացնում բուլշեիկներէ ժողովներում և մասնակցում է ագրարային ծրագիր մշակող հանձնաժողովում:

1906 թ. ապրիլի 25—մայիսի 8~ը Ստոկհոլմում տեղի ունեցած IV համագումարում Լենինը, վոր համագումարի նախագահության մեջ եր մտնում, ղեկավարում է բուլշեիկյան ֆրակցիայի աշխատանքը և համագումարում հանդես ե գալիս մի շարք ղեկուցումներով ու ճառերով (ագրարային հարց, ներկա մոմենտը և պրոլետարական խնդիրները, դումայական տակտիկա, զինված ապստամբություն): Առանձնապես նշանավոր եր Լենինի ճառը, վորով նա համագումարում պաշտպանում եր հողի ազգայնացումը և քննադատում եր մենշեիկյան մոլնիցիպալիզացիան, վորն «իսկական ագրարային հեղափոխության և կադետական ագրարային ռեֆորմի միջինը» ներկայացնող մի բան եր: Հողի ազգայնացումը Լենինը կապում եր բուրժուական~դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու, մինչև պրոլետարիատի և դյուղացիության հեղափոխական~դեմոկրատական ղեկառութեամբ լիակատար հաղթանակը հասցնելու հետ: Հողի մասնավոր սեփականության վերացումը հարվածում եր արատադրության միջոց~

ների մասնավոր սեփականության ընդհանրապես և «բուրժուական դեմոկրատիզմի հաղթությունից հետո՝ սոցիալիզմի համար մղվող իսկական պայքարի սկզբին մի բնական ու անհրաժեշտ քայլ եր դեպի առաջ»: Մենշեիկներին մեծամասնություն տված համագումարը վերջանալուց հետո բուլշեիկներէ անուսից հրատաքակվեց Լենինի գրած և կուսակցությանն ուղղված մի «դիմում», վորի մեջ քննադատության եյին յենթարկվում համագումարի մենշեիկյան բանաձևերը և մատնանշվում եր, վոր բուլշեիկները դեմ են պառակտման, սակայն նրանք միաժամանակ գաղափարական պայքար են մղելու համագումարի այն յերեք վորոշումներէ դեմ, վոր սխալ են համարում: Համագումարի արդյունքները Լենինն ամփոփեց «Доклад об обстановительном с'езде» բրոշյուրում: Մկսած IV համագումարից, Լենինը մտնում է բուլշեիկյան անպաշտոն կերպով գոյություն ունեցող կենտրոնի մեջ. վերջինը ղեկավարում եր բուլշեիկների ֆրակցիայի գործունեյությունը, վորը պահպանել եր իր քաղաքական ու կազմակերպական ինքնուրույնությունը:

Յերբ հուլիսի 8~ին I Դուման ցրելուց հետո բռնկվեցին Սվեաբորգի և Կրոնշտատի ապստամբությունները, Լենինը հարց է դնում, վոր Պետերբուրգի բանվորները պաշտպանեն այդ ապստամբությունները, և անխնա քննադատության ե յենթարկում զլուխը կորցրած մենշեիկյան ԿԿ~ին ու Դուման ցրելու կապակցությամբ նրա ընդունած կիսատ լողունքները: Մասնայական շարժումները, սակայն, խոշոր չափեր չընդունեցին: Վերոհիշյալ ապստամբությունների ճնշումից հետո Լենինը, վոր առաջվա նման կանգնած եր զինված ապստամբություն պատրաստելու անհրաժեշտության տեսակետի վրա, անհրաժեշտ է համարում վերանայել բուլշեիկների նախկին դումայական տակտիկան և արտահայտվում է հոգուտ II Դումայի ընտրություններին մասնակցելուն, համարելով այն՝ պայքարի միջոցներից մեկը, վորը, սակայն, յերկրորդական, ստորադաս դեր է խաղում: Պաշտպանելով հեղափոխական հնարավորություններն սպառելու անհրաժեշտությունը, Լենինը նպատակահարմար է համարում, վորպեսզի կուսակցությունը կազմակերպի և պաշտպանի բանվորական առանձին խմբերի կողմից կառավարական ուժերի դեմ տարերայնորեն մղվող «պարտիզանական կռիվը»: Պրոպագանդ անելով, վոր պրոլետարիատի համար անհրաժեշտ է ընտրությունների ժամա~

նակ լիակատար ինքնուրույնություն պահպանելը, Լենինը վճռա-
կանորեն պայքարում է կադեաների հետ բլոկ կազմելու ծրագրի
դեմ,—վոր պաշտպանում էյին մենշևիկները,—համարելով այդ
լիբերալ-միապետական բուրժուազիայի փաստական հեղինակա-
թույլատրելի համարելով միայն համաձայնությունը հեղափոխա-
կան դեմոկրատիայի հետ հանձինս աշխատավորականների ու
եսերների, և քննադատում է «լիակատար իշխանություն ունե-
ցող Դումայի» պլեխանովյան լոզունգը: «Ձախ» բլոկի այդ տակ-
տիկան և միաժամանակ՝ կադեանների դեմ պայքարելու տակտի-
կան Լենինը պաշտպանում էր մի շարք հոդվածներում ու բրո-
շյուրներում, Տամբերֆորում (1906 թ. նոյեմբերին) տեղի ու-
նեցած համառուսական կոնֆերենցիայում, Պետերբուրգի կազմա-
կերպության կոնֆերենցիաներում և կուսակցության V համա-
գումարում: Վորովհետև այդ ժամանակաշրջանում Կ. Կառլց-
կու հայացքները մոտենում էյին բոլշևիկների հայացքներին, Լե-
նինը թարգմանում է Կառլցկու «Движущие силы и перспективы
русской революции» աշխատությունը, կցելով նրան իր առա-
ջաբանը, հրատարակում է Մարքսի՝ Կոլգելմանին գրած նամակ-
ների թարգմանությունը (Մարքսի աշխատություններով Լենինն
զբաղվում էր շարունակ, միշտ գլխավորելով նրա և Ենգելսի գրվածք-
ներին և այնտեղից ցուցումներ քաղելով ընթացիկ պայքարի հա-
մար) և Վ. Լիբկնեխտի «Վնչ մի կոմպրոմիս, վնչ մի ընտրական
համաձայնություն» բրոշյուրը:

Մենշևիկների դեմ՝ կադեանների հետ բլոկ կազմելու նրանց
պրոպագանդի հողի վրա սղվող պայքարն առանձնապես սուր
ձևեր է ընդունում Պետերբուրգի կազմակերպության մեջ: Կադ-
մակերպության մեջ փոքրամասնություն ունենալով, մենշևիկնե-
րը, չկամենալով հրաժարվել կադեանների հետ բլոկների կազմե-
լուց, պառակտեցին կազմակերպությունը, հեռանալով 1907 թ.
հունվարին գումարված պետերբուրգյան կոնֆերենցիայից, վորը
դեկավարում էր Լենինը: Մենշևիկների ոպորտունիզմը և նրանց պա-
ռակտողական քաղաքականությունը Լենինը նշավակեց մի շարք
բրոշյուրներում («Социал-демократия и выборы в Думу»,
«Услышавши суд плуща», «Выборы в Петербурге и лицемерие 31
меньшевика»), մեղադրելով մենշևիկներին բանվոր դասակարգին
զավաճանելու և կադեանների հետ սակարկելու մեջ: Մենշևիկյան
ԿԿ վորոշեց Լենինին կուսակցական «դատի» հանձնել: Դատարա-

նում արտասանած իր պաշտպանողական ճառը Լենինը վերածեց
մեղադրական ճառի ընդդեմ մենշևիկյան ԿԿ-ի: Մենշևիկները վա-
խեցան «դատը» շարունակելուց, և գործը կարժեց: Այդ գործի
հանգամանքները մանրամասնորեն Լենինը շարադրել է «Доклад
V съезду РСДРП по поводу петербургского раскола и связанно-
го с ним учреждения партийного суда» հոդվածի մեջ:

Բոլշևիկյան լրագրերը Դումայի ցրումից հետո ռեակցիոն ու-
ժեղանալու հետևանքով փակվեցին, ուստի Լենինը բանվոր դա-
սակարգի խնդիրները բոլշևիզմի տեսակետից լուսաբանելու հա-
րավորություն ուներ մասամբ լեզալ բրոշյուրներում («Роспуск
Думы и задачи пролетариата», «Социалдемократия и «изби-
рательные соглашения») և կառավարության կողմից արագ փակ-
վող շարժաթիթերում («Тернии труда», «Простые речи»,
«Зрение»), ապա, յերբ կառավարական ճնշումները II Դումայի
գումարման շրջանում մի փոքր թուլացան,—բոլշևիկյան «Новый
луч» և «Наше эхо» լեզալ թերթերում, իսկ գլխավորապես բոլ-
շևիկների անխզալ որդան «Пролетарий»-ում, վորն սկսեց լույս
տեսնել 1906 թ. աշնանից Ֆինլանդիայում:

I Դումայի ցրումին հաջորդող շրջանում Լենինն ուշադրու-
թյամբ վեր է լուծում այն պրոցեսները, վորոնք տեղի յեն ու-
նենում սոցիալիստական և հեղափոխական կուսակցությունների
ներսում, արձանագրում է եսերների կուսակցության զաղափա-
րական ու քաղաքական տնկումը, մերկացնում է եսերական կու-
սակցության ներքին շերտավորման միջոցով նոր առաջացած
«Աշխատավորական ժողովրդական-սոցիալիստական կուսակցու-
թյան» («եսերական մենշևիկներ») ոպորտունիստական ելույթյունը,
յեռանդով պայքարում է «հեղափոխական միջավայրում արտա-
հայտվող քաղքենիության» դեմ, անկումային և ռենեգատական
տրամադրությունների դեմ: Առանձնապես լենինը նշում է մեն-
շևիզմի ճգնաժամը, ցույց տալով նրանում ծնունդ առնող այն
զաղափարները, վորոնք հետագայում լիկվիդատորության մի ամ-
բողջ սխառմի վերածվեցին: Լենինը սաստիկ հակահարված է
տալիս մենշևիկների կողմից քարոզվող «բանվորական համա-
գումարի» զաղափարին, վորի նպատակն էր վոճնացնել սոցիալ-
դեմոկրատական կուսակցությունը և փոխարինել պրոլետարիատի
անկուսակցական քաղաքական կազմակերպությամբ:

Յերկրորդ Դումայի բացումից հետո, վոր տեղի ունեցավ

1907 թ. մարտի 5-ին (փետրվարի 20-ին), Լենինն ուշադրությամբ հետևեւեւեւ եւ նրա աշխատանքներին, ընդգծում եւ սահմանադրութեան պատեր ընդլայնել, մերկացնելով կադետներին, քննադատելով մենշևիկների ոպորտունիզմը, մասնաճեւելով սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիայի սխալները, պահանջելով, վոր սոցիալ-դեմոկրատիան կարողանա իր հետեւից տանել դեմոկրատական մանր բուրժուազիային, պրոպագանդ մղելով այն մասին, վոր մասսաները վճռական պայքարով պետք ե վոչնչացնեն ինքնակալութեանն ու ճորտատիրութեան բոլոր մնացորդները: Կարեւոր նշանակութեան տալով սոցիալ-դեմոկրատ բոլշեւիկների յեղույթներին Դոմայում, Լենինը նրանց համար ճառերի նախագծեր ե գրում (որ), ագրարային հարցի վերաբերյալ ճառի նախագիծը): Աշխատանքի այդ մեթոդը Լենինն առանձնապես լայն կերպով կիրառում ե IV Դոմայի շրջանում, յերբ նա մի ամբողջ շարք ճառեր ե գրում բոլշեւիկ պատգամավորների համար:

Մայիսի 13-ից մինչեւ հունիսի 1-ը Լենինը մասնակցում ե ՌՍԴԲԿ V համագումարի աշխատանքներին Լոնդոնում: Համագումարից շատ առաջ Լենինը մշակում ե համագումարին տուջարկվելիք բոլշեւիկյան բանաձեւերի նախագծերը, վորոնք հետո ընդունվում են բոլշեւիկյան կուսակցական կադմակերպութեանների (Պետերբուրգի կոմիտե, Մոսկվայի կոմիտե ե այլն) ներկայացուցիչների խորհրդակցութեաններում: Միաժամանակ Լենինը քննադատութեան ե յենթարկում մենշեւիկների տակտիկական պլատֆորմը: Համագումարում, վորտեղ բոլշեւիկները մեծամասնութեան ստացան, Լենինը հանդես յեկավ մենշեւիկյան ԿԿ գործունեյութեան քննադատութեամբ եւ մի շարք հարցերի վերաբերող ճառերով: Առանձնապես կարեւոր նշանակութեան ունի Լենինի դեկլարումը սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքի մասին դեպի բուրժուական կուսակցութեանները ե համագումարի կողմից այդ հարցի առթիվ ընդունված (լենինյան) բանաձեւը, վորի մեջ մասնանշվում եր, վոր լիբերալ-միապետական բուրժուազիայի կուսակցութեանը—կադետներ— վերջնականապես հակահեղափոխական դիրք ե բռնել ե նպատակ ե դնում վերջ տալ հեղափոխութեանը՝ հակահեղափոխութեան հետ գործարք կնքելու միջոցով. նարդեւիկների նկատմամբ մասնանշվում եր նրանց տատանումները լիբերալների հեգեմոնիային յենթարկվելու ե կավածատերերի ու ինքնակալութեան դեմ վճռականորեն պայքարելու միջեւ, ընդվո-

րում սոցիալ-դեմոկրատների առաջ ինդիք եր դրվում «բոլոր ուժերով դուրս կորզել նարդեւիկներին լիբերալների ադդեցութեանից ու դեկավարութեանից»: Հետագայում Լենինը հաճախ ե անդրադարձնում այդ բանաձեւի վերլուծութեանն ու հիմնավորմանը, մեծ նշանակութեան տալով նրան (տես Լենինի «Վերաբերմունք դեպի բուրժուական կուսակցութեանները» հոդվածը, Յերկ., հտ. XI, եջ 271—286):

1907 թ. հունիսի 16 (3)-ի պետական հեղաշրջումը (II Դոմայի ցրումը, ընտրական նոր ոլենքը, վորը Ֆայրանեղ չափերով սահմանափակում եր դուրդացիների ե հատկապես բանվորների ընտրական իրավունքները) հակահեղափոխութեան լիակատար հաղթանակն եր: Մասսայական հեղափոխական շարժման անկման հետեւնքով հեղափոխական կուսակցութեանների մեջ սկսում են առանձնապես ուժեղանալ ունեգատական տրամադրութեանները, վորոնց դեմ խիստ ձեւով հանդես ե գալիս Լենինը: Միաժամանակ նա համառ պայքար ե մղում բոլշեւիկի ներսում գալի չափեր ընդունած «ձախ» բոլշեւիստական հոսանքի դեմ: Բոլշեւիկները Ա. Բոգդանովի ե Լ. Կամենեւի գլխավորութեամբ՝ սկսված քացահայտ ուսակցիայի այդ շրջանում շարունակում եյին պահանջել անմիջական հեղափոխական կովի այնպիսի մեթոդների վերադրում, վորոնք հնարավոր չեյին մասսայական շարժման անկման ժամանակ, ե այդ հիման վրա III Դոմայի ընտրութեանների դեմ եյին արտահայտվում: Լենինը վճռաբար դուրս ե գալիս բոլշեւիստական տակտիկայի դեմ, վորը հաղթանակելու դեպքում կուսակցութեանը կմեկուսանար ու կկտրվեր բանվորական մասսաներից,—իր հոդվածներում («Բոլշեւիստի դեմ») ե այն ճառերում ու դեկլարումներում, վորոնցով նա հանդես ե գալիս Պետերբուրգի կուսակցական կոնֆերենցիաներում ե համագումարական յերկու կոնֆերենցիաներում (1907 թ. ոգոստոսին Վիբորգում ե նոյեմբերին՝ Հելսինգֆորսում): Բոլշեւիստները պարտվում են: Պաշտպանելով այն տեսակետը, վոր անհրաժեշտ ե կուսակցութեան կողմից ոգտագործել Դոմայի անբիւնը բանվորական մասսաների սոցիալիստական դաստիարակութեան ե կադմակերպման (սակայն վոչ յերբեք Դոմայում «որգանական» աշխատանք կատարելու) համար, միաժամանակ առավելագոյն չափերով հնարավոր անլիգալ աշխատանք կատարելով ե անլիգալ ապարատը լիովին պահպանելով, Լենինը շարունակ մասնանշում

ե, վոր բանվոր-պատգամավորների պարտականութիւնն ե՝ մերկացնել Դումայում,—վորը ինքնակալութեան գործարքն ե կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի հետ,—վոչ միայն կառավարութեանը, սե-հարյուրակայիններին ու ոկտայբրիստներին, այլև կազմաներին, լիբերալ բուրժուազիային, վոր բոլորովին հակահեղափոխական ե դարձել և միայն ոպողիցիա յե խաղում ցարիզմի դեմ:

1907 թ. սգոստոսին Լենինը մտանակցում ե II Ինտերնացիոնալի Շտուտգարտյան կոնգրեսին և մտնում ե նրա նախագահութեան կազմի մեջ: Կոնգրեսի հանձնաժողովներէց մեկում Լենինը և Ռ. Լյուքսեմբուրգը միքանի կարեւոր ուղղումներ են մտցնում միլիտարիզմի հարցի վերաբերյալ Բեռլին բանաձևի նախագծի մեջ:

Այս մի «դոգմատիկ միակողմանի, մեռած» բանաձև եր, վորը ստ գործի ելութեան ոպորտունիզմին արվող զիջումներ եր պարունակում և այդ ձևով հեղափոխական մարքսիստների համար անընդունելի յեր: Ուղղումներէց մեկը սոցիալիստների վրա պարտավորութիւն եր դնում պատերազմ ծագելու դեպքում «բոլոր ուժերով ձգտել ոգտագործելու պատերազմի առաջացրած տնտեսական ու քաղաքական ճգնաժամը՝ ժողովրդական մասսաների քաղաքական գիտակցութիւնն արթնացնելու և կապիտալիստների դասակարգի տիրապետութեան խորտակումն արագացնելու համար»: Բոլոր ուղղումները հիմնականում ընդունվեցին կոնգրեսի կողմից: Կոնգրեսից հետո Լենինը մտավ Միջազգային սոցիալիստական բյուրոյի կազմի մեջ և միքանի անգամ մասնակցեց նրա աշխատանքներին, լինելով նրա ծայրահեղ ձախ թեում (տես Լենինի հետեյալ հոդվածները՝ «Միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստը», 1908 թ., «Միջազգային սոցիալիստական բյուրոյի տասնմեկերորդ նստաշրջանը», 1910 թ. և այլն):

Կռիվ մղելով ոպորտունիստների և ցենսորիստների—ոռսական սոցիալ-դեմոկրատիայի ներսում հաշտվողականները—դեմ, նրանցից սահմանադատվելու և խզվելու գիծ վարելով, Լենինը միևնույն ժամանակ II Ինտերնացիոնալում գիծ եր վարում խզվելու և պառակտվելու համար ոպորտունիստներից ու հաշտվողականներից, վորոնք քողարկում եյին բացահայտ ոպորտունիզմը: Պետք ե նշել Նույնպես, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմամբ, վորը II Ինտերնացիոնալում լա-

վագույն կազմակերպութիւնն եր համարվում, Լենինը Շտուտգարտի կոնգրեսի կապակցութեամբ գրում եր, վոր կոնգրեսում գերմանական սոցիալ-դեմոկրատիան «անկաշուն եր և ոպորտունիստական դիրք եր բռնել»:

Լենինի ուսմունքը, լենինիզմը ընդհանրացնում ե վոչ միայն ոռսական, այլ ամբողջ միջազգային բանվորական շարժման փորձը: Լենինի ուսմունքը ինտերնացիոնալ պրոլետարական թեորիա յե, վոր նշանակութիւն ունի բոլոր յերկրների համար:

1907 թ. յերկրորդ կեսին Լենինին հաջողվեց լեզալ կերպով լույս ընծայել իր հոդվածների ժողովածուն—«За 12 лет»: Գիրքը, սակայն, անհասպաղ գրավվեց և կրկին հրատարակվեց միայն 1918 թ.: Նույն այդ ժամանակ ել Լենինը գրեց «Аграрный вопрос и критики Маркса» ընդհանուր վերնագիրը կրող հոդվածների (հրատարակված են լեզալ) սերիայի շարունակութիւնը և ավարտեց իր մեծ աշխատութիւնը—«Аграрная программа социал-демократии в первой русской революции 1905—1917 годов»: Գիրքը տպագրվեց հետեյալ տարին, սակայն վոչնչացվեց վոստիկանութեան կողմից և հրատարակվեց միայն 1917 թվին: Այդ Լենինի չափազանց կարեւոր աշխատութիւնն ե, վոր ցույց ե տալիս, թե բուրժուական հեղափոխութեան հիմքը Ռուսաստանում ագրարային հարցն ե, վորի լուծումը հնարավոր ե յերկու ուղիներով—կամ ճորտատիրութեան վերացում՝ ճորտատիրական կալվածատիրական տնտեսութիւնների դանդաղ վերածումով յունկերական-բուրժուական տնտեսութիւնների («պրոլսական ուղի»), կամ հին կարգի հիմքերի բռնի տապալում պրոլետարիատի կողմից ղեկավարվող գյուղացիութեան հեղափոխական մասսաների ձեռքով, հողի մասնավոր սեփականութեան վերացում, հողի ազգայնացում և նրա անցումը գյուղացիութեան ձեռքը՝ ոգտագործելու համար (գորդացման «ամերիկյան» ուղի): Այդ գրքի բովանդակութիւնը Լենինը կոնսպեկտային ձևով հաջորդ տարին շարադրեց լեհական սոցիալ-դեմոկրատական «Пшегловх социал-демократичны» («Սոցիալ-դեմոկրատական հանդես») ժուռնալում, մասամբ ել «Ագրարային հարցը Ռուսաստանում XIX դարի վերջին» հոդվածում, վոր գրված եր Գրանատի հանրագիտական բառարանի համար, սակայն լույս տեսավ միայն 1918 թվին:

1907 թ. վերջերին հեղափոխութեան պարտութիւնն այն-

քան արդեն խորացավ, ռեակցիան այնքան ուժեղացավ, վոր Լենինն ստիպված եր Կուռկիլալայից, վոստրիկանությունից թազնըվելով, անցնել Հելսինգֆորսի մոտ գտնվող մի փոքրիկ կայաքան, իսկ հետո 1907 թ. դեկտեմբերին անցնել արտասահման։ Վորպեսզի իրեն հետևող վոստրիկանությունից ծածուկ նալ նստի, նա ստիպված եր գիշերը Աբո քաղաքից մի քանի վերստ սառուցի վրայով գնալ մինչև այն կղզին, վորտեղ կանգնած եր շոգենավը։ Սառուցն ամուր չհեր, մի տեղ սկսում ե նստել, և Լենինը քիչ ե մնում խեղդվի։ Ստոկհոլմի և Բեռլինի վրայով Լենինն անցավ Շվեյցարիա—ժընևի։ Սկսվեց յերկրորդ վտարանդիության շրջանը, վոր տևեց 9 տարուց ավելի և անհամեմատ ավելի ծանր յեղավ, քան առաջին վտարանդիությունը։

* * *

1908 թ. ընթացքում Լենինը, վոր ապրում եր սկզբում ժընևիում, իսկ հետո Պարիզում, ուր նա տեղափոխվել եր ուշ աշնանը՝ հոկտեմբերին, առանձին ուշադրություն եր նվիրում այն նոր կացության վերլուծությանը, վոր ստեղծվել եր Ռուսաստանում 1907 թ. հունիսի 16 (3)-ի պետական հեղաշրջման հետևանքով, և ագրարային այն նոր քաղաքականությանը, վոր վարում եր Ստոլիպինը։ Ընդգծելով դարգացման յերկու ուղիները—«պրոլետականի» և «ամերիկականի» որյեկտիվ հնարավորությունը, Լենինը մատնանշում եր, վոր պրոլետարիատն ու գյուղացիությունը պետք ե պայքարեն դարգացման յերկրորդ հեռանկարի համար, դեմոկրատական հեղափոխության լիակատար հաղթանակի համար։ Հակասությունների աճումը գյուղացիության և ինքնակալական-կալվածատիրական ռեժիմի միջև, վոր արձանագրում եր Լենինը, ցույց եր տալիս, վոր խոլիպինյան ռեֆորմը չի կարող կանխել նոր հեղափոխության բռնկումը, նոր հեղափոխությունը։ «Նախապատրաստել նոր հեղափոխությունը»—այսպես եր վորոշում Լենինը պրոլետարիատի ընդհանուր խնդիրն առաջիկա ամբողջ պատմական մերձավորագույն շրջանի համար։

Հունիսի 3-ի պետական հեղաշրջման հետևանքով ստեղծված ուժերի փոխհարաբերության գնահատականը, ինքնակալության ելության և նրա ագրարային նոր քաղաքականության բնույթի վերլուծությունը Լենինը ավելց մի շարք հոգվածներում, վորոնցից հատկապես կարևոր ե «Ընթացիկ մոմենտի գնահատման առ-

թիվ» հոդվածը։ Նրա հայացքներն այդ առթիվ ամփոփվեցին և վերջնականապես ձևակերպվեցին «ամանակակից մոմենտի և կուսակցության խնդիրների վերաբերյալ բանաձևի նախագծում, վորն ընդունեց համառուսական «դեկտեմբերյան» կոնֆերենցիան 1908 թ. (վոր տեղի ունեցավ Պարիզում 1909 թ. հունվարի 3—9-ին (դեկտեմբերի 21—27-ին)։ Այդ կոնֆերենցիայում, վորին մասնակցում եյին բոլշևիկները, մենշևիկները ներկայացուցիչները և լեն սոցիալ-դեմոկրատներն ու բուհդիստները, հաղթանակեցին բոլշևիկները։ Կոնֆերենցիայում հիմնական զեկուցողը Լենինն եր։ Բանաձևում տավում եր, վոր ինքնակալությունը մի նոր քայլ ե անում բուրժուական միապետության վերածվելու ուղղությամբ, իր ագրարային քաղաքականությամբ սրում ե գյուղացիական լայն մասսաների դժգոհությունը և անխուսափելի յե դարձնում նոր քաղաքական ճգնաժամի հասունացումը։ Դեկտեմբերյան կոնֆերենցիայի բանաձևը, վոր պահանջում եր նաև ամրացնել կուսակցությունը, պայքարել ինքնակալության, ռեակցիոն դասակարգերի և լիբերալների դեմ, պայքարել հեղափոխական մարքսիզմից կատարվող շեղումների և կուսակցության լոգունգները սեղմելու դեմ, պահանջում եր ոգտագործել Դուժալի ամբիոնը, — խոշոր սկզբունքային նշանակություն ունեցավ, վորպես կուսակցության կարևորագույն վավերագրերից մեկը, վոր վորոշում եր նրա տակտիկան մի շարք տարիների համար։

Հսկայական նշանակություն տալով ագրարային հարցին, Լենինը ուշադրությամբ ուսումնասիրում ե այդ հարցի առթիվ III Պետական Դումայում տեղի ունեցած վիճարանությունները, վերլուծում ե յուրաքանչյուր քաղաքական խմբավորման վերաբերմունքը դեպի այդ հարցը Դումայում և առհասարակ աշխատավորականների ու գյուղացիական պատգամավորների ճառերում, վորոնք անուղղակի կերպով արտացոլում եյին գյուղացիության շահերը, և գտնում ե, վոր հաստատվում ե բոլշևիկյան գաղափարների ճշտությունը գյուղացիական ապստամբության անխուսափելիության և գյուղացիության կողմից հողի ազգայնացմանը համակրանքով վերաբերվելու մասին։ «Шестьдесят социал-демократичны» ժուռնալի մեջ դեռեղված հոգվածում Լենինը լեն սոցիալ-դեմոկրատներին ծանոթացնում ե բոլշևիկների ագրարային ծրագրին. նույն ժուռնալում նա բանավեճ ե մղում մենշևիկի Պ. Մասլովի դեմ, վոր պաշտպանում ե «մուսիցիպալիզա-

ցիան»։ ռուսական անլեզու մամուլում Լենինը պայքար է մղում Մարքսի բացարձակ ռեալիզմի թեորիան ժխտող Մասլովի օգրա-
րային ռեվիզիոնիզմի դեմ և Պլեխանովի դեմ, վորը պաշտպա-
նում էր Մասլովին։

Ժընեվում գտնված Ժամանակ Լենինը շատ է զբաղվում մի-
ջազգային բանվորական և հեղափոխական շարժման հարցերով
Ֆեվրուպայում և Արևելքում («Դյուրավառ նյութը համաշխարհա-
յին քաղաքականության մեջ», «Ռադմատենչ մատերիալիզմը և
սոցիալ-դեմոկրատիայի հակամիլիտարիստական տակտիկան»,
«Բալկանները և Պարսկաստանի անցքերը»), արձանագրելով դասա-
կարգային պայքարի սրումը բոլոր յերկրներում և միլիտարիզմի
ծայրահեղ աճումը, վորպես գալիք կապիտալիստական պատե-
րազմների նշան։ Միաժամանակ Լենինը հետևում է հեղափոխական
և ոպորտունիստական (վորոնց թվում նաև ցենարիստական) հո-
սանքների պայքարին միջազգային սոցիալիզմի մեջ, պաշտպա-
նելով որթողոքա-մարքսիստական վերաբերմունքը դեպի պատե-
րազմներն ու միլիտարիզմը։ Պետք է նշել մասնավորապես Լե-
նինի քննադատությունը Բերելի դիրքի նկատմամբ, վորմոտ էր
կանգնած սոցիալ-շովինիզմին։ Ռուսական սոցիալ-դեմոկրատներ-
րից Լենինը պահանջում էր պայքարել ցարիզմի արտաքին քա-
ղաքականության դեմ, վորի նպատակն էր ճնշել հեղափոխա-
կան շարժումներն արևելյան յերկրներում։ Այդ նույն շրջանում
էլ անհրաժեշտ է նշել նաև Լենինի պայքարն արհեստակցական
միությունների չեղծության գաղափարի դեմ (Լենինն ապացու-
ցում էր, վոր անհրաժեշտ է կապ և մերձեցում ստեղծել արհես-
տակցական միությունների ու կուսակցության միջև և կուսակ-
ցության կողմից ղեկավարել միությունները), Դումայի սոցիալ-
դեմոկրատական ֆրակցիայի ոպորտունիստական քննադատու-
թյունը, վոր նա կատարում էր ֆրակցիայի գիժն ուղղելու նպա-
տակով։ պետք է հիշել նաև լիբերալների հակահեղափոխությունը
մերկացնող, եսերների հետագա քայքայումը հավաստող հոդված-
ները, Տոլստոյի մասին գրած և այլ հոդվածները։ Ժընեվում
գտնված Ժամանակ Լենինի հոդվածների մեծ մասը լույս է տե-
սել բոլշևիկյան «Пролетарий» լրագրում, վորի հրատարակու-
թյունը փոխադրված էր Ժընեվ։ Մի կարևոր հոդված— «Մարքսիզմ
և ռեվիզիոնիզմ» տպվեց Ռուսաստանում «Памяти Карла Маркса»
լեզու ժողովածվում։

1908 թ. հենց սկզբին բոլշևիկները շրջանում խոշոր տարա-
ձայնություններ ծագեցին փիլիսոփայական հարցերի շուրջը։
Լենինը, վոր դեռ 1904 թ. սկսած և նույնիսկ էլ առաջ բացասա-
բար էր վերաբերվում Ա. Բոգդանովի փիլիսոփայական հայացք-
ներին, անմիջապես անհաշտ դիրք բռնեց այդ բոլշևիկների հան-
դես (Ա. Բոգդանով, Ա. Լուսաչարսկի, Վ. Բադարով), վորոնք
հանդես յեկան «Очерки по философии марксизма» ժողովածվում
իդեալիստական հայացքների (մախիզմի կամ եմպիրիոկրիտիզմի-
մի) քարոզով։ Իդեալիզմի և փիլիսոփայական ռեվիզիոնիզմի այդ
պրոպագանդան այն անկումային տրամադրություն արտահայ-
տություններից մեկն էր, վորը «հասարակության» մեջ և քա-
ղաքական կուսակցություններում ծագելի սկսեց հեղափոխության
հողի վրա և մասամբ համակել էր նաև բոլշևիկներին։ Միշտ բա-
ցառիկ նշանակություն տալով մարքսիստական իդեոլոգիայի
մաքրությունը, Լենինը խիստ պայքար սկսեց եմպիրիոկրիտիկ-
ների դեմ, պաշտպանելով դիալեկտիկական մատերիալիզմը, մարք-
սիզմի փիլիսոփայական հիմունքները, սահմանադադելով մախիստ-
ներից մամուլում և փիլիսոփայության հարցերում պաշտպանելով
ընդհանուր առմամբ քիչ թե շատ որթողոքա տեսակետի վրա կանգ-
նած Պլեխանովին, վորը նույնպես պայքարում էր մախիստների
դեմ, այս հանգամանքը, հասկանալի յե, ամենևին չթուլացրեց
նրա պայքարը Պլեխանովի քաղաքական ոպորտունիզմի դեմ։
1908 թ. ապրիլին Լենինը, Մ. Գորկու խնդրքով, այցելեց բոլշե-
վիկ մախիստներին և նրանց համակրող Մ. Գորկուն կապրի կըղ-
ղում, սակայն այդ այցելությունն էլ ավելի հաստատեց նրա այն
վճիռը, վոր անհրաժեշտ է պայքարել ռեվիզիոնիստների դեմ։
1908 թ. աշնանը Լենինն ավարտեց իր փիլիսոփայական մեծ աշ-
խատությունը— «Материализм и эмпириокритицизм. (Критические
замечки об одной реакционной философии)», վորը լեզու կեր-
պով լույս տեսավ 1909 թ. գարնանը։ Այդ գիրքը պատրաստելու
Լենինը միաժամանակ աշխատել է Լոնդոնում, Բրիտանական
մուզեյում։ «Материализм и эмпириокритицизм» աշխատության
մեջ, վորը ենդելսի «Անտի-Դյուրինգից» հետո խոշորագույն յե-
րևութներից մեկն է մարքսիզմի փիլիսոփայական գրականու-
թյան մեջ, Լենինը վոչնչացնող քննադատության յենթարկեց բոլ-
շևիկ-մախիստներին, ցույց տալով նրանց հայացքների հետագի-
մական և տերտերականությունը քողարկող բնույթը։ Այդ աշ-

խառնության մեջ միաժամանակ Լենինը ցույց տվեց նաև Պլեխանովի սխալները փրկասփայլության ասպարեզում:

Բոլշևիկյան ֆրակցիայի ներսում դրուժյունը բարդացավ նրանով, վոր փրկասփայլական տարաձայնություններին միացան նաև քաղաքական տարաձայնությունները: Կուսակցության մեջ ծագեցին «ձախ» թեքումներ—«ոտզովիզմ» և «ուլտիմատիզմ», վորոնք հին «բոլկոտիստական» տրամադրությունների վերածնությունն էին և ըստ էության՝ տարբեր ձևերով ու աստիճաններով ժխտում էին կուսակցության կողմից անլեզալ մեթոդներին զուգընթաց լեզալ մեթոդներ կիրառելու անհրաժեշտությունը: Իրենց կազմի զգալի մասով «մախիստները» միաժամանակ նաև ուլտիմատիզմի, ոտզովիզմի, ինչպես նաև աստվածաբարության կողմնակից էին: 1908 թ. աշնանը Լենինի և նրա ղեկավարած բոլշևիկյան կենտրոնի դեմ կազմվեց «ձախ» ոպոզիցիա—Ա. Բոգդանով, Ա. Լունաչարսկի, Վ. Բադարով, Մ. Լյադով, Լ. Կրասին, Գ. Սլեքսինսկի, Վ. Շանցեր-Մարառ և ուրիշները: «Յերկու նամակի առթիվ» հոգվածում («Пролетарий», 1908 թ. նոյեմբեր) Լենինը պայքար սկսեց ոտզովիզմ-ուլտիմատիզմի դեմ, վորոնք բավական զգալի չափով տառածվել էին ուսական կողմակերպություններում, ինչպես նաև հաշտվողական վերաբերմունքի դեմ նրանց հանդեպ:

1908 թ. ոգոստոսին Լենինը մասնակցեց Կիյ Վլենսումին, վորտեղ մենշևիկները վորձում էին մի վորոշում անցկացնել Կիյ, վորպես ղեկավար մաքմին, վոչնչացնելու մասին, նրան զուտ ինֆորմացիոն հիմնարկի վերածելու միջոցով: Լենինի ղեկավարությամբ, վորը մենշևիկների պլանները վորակեց վորպես դավադրություն կուսակցության դեմ, լիկվիդատորների այդ առաջին յեղույթը հետմղվեց: Այդ շրջանից սկսած (1908 թ. ոգոստոս—նոյեմբեր) սկսվում է բոլշևիկների պայքարը Լենինի ղեկավարությամբ, յերկու ճակատով, սոցիալ-դեմոկրատիայի ներսում—լիկվիդատորների դեմ աջից (մենշևիկների) և լիկվիդատորների դեմ ձախից (ոտզովիստների). այս պայքարում Լենինը պահանջում է կուսակցությունը մաքրել յերկու տիպի մանր-բուրժուական «ուղեկիցներից»:

Յերկու ճակատով պայքարը—աջ և «ձախ» ոպոռոտունիստների ու սրանց հանդեպ ցույց տրվող հաշտվողականության դեմ—Լենինը մղել է շարունակ, պրոլետարիատի կովի բոլոր ետապներ

րում թե ուսական սոցիալ-դեմոկրատիայի ներսում և թե II Ինտերնացիոնալի ներսում: Այդպիսի պայքարի բնորոշ որինակ կարող է ծառայել 1907—1908 թ. թ. շրջանում Լենինի մղած պայքարը դեպի պատերազմը ցույց տրվող վերաբերմունքի հարցում աջ ոպոռոտունիստների դեմ, ինչպես Ֆրվարն էր, և նրանց քողարկող Բեբելի դեմ և իր «ձախերի» դեմ, ինչպես Նովեն էր:

Սկզբում Լենինը գլխավոր հարվածն ուղղեց ոտզովիզմի դեմ վորը նա բնորոշեց վորպես «թարած մենշևիզմ». յերբ ոտզովիզմի հակակուսակցական բովանդակությունը մերկացվեց ու դիմակազերծ յեղով (1909 թ. աշնան դեմ), կենտրոնական խնդիր դարձավ լիկվիդատորների դեմ մղվելիք պայքարը: Մի շարք հոգվածներում Լենինը ցույց տվեց, վոր ոտզովիզմ-ուլտիմատիզմը միանգամայն անհամատեղելի յեն բոլշևիզմի հետ (տես հատկապես «բոլշևիզմի ծագրանկարը» հոգվածը): 1909 թ. հուլիսի 4—15 Պաերիում Լենինի ղեկավարությամբ տեղի ունեցավ ալապես կոնգրես՝ «Пролетарий»-ի («Большевистский центр»-ի) բնդլայնած խմբագրության խորհրդակցությունը, վորը Լենինի առաջարկությամբ պատշած գնահատական տվեց ոտզովիզմին և բոլշևիկների ֆրակցիայից հեռացրեց Բոգդանովին, վորն իր սեփական ֆրակցիան ստեղծելու ուղին էր բռնել ի դեմս Կապրիում նրա կազմակերպած դպրոցի: Բոգդանովից հետո բոլշևիզմի սահմաններից դուրս ֆացին նաև ֆաացած ոտզովիստները, ուլտիմատիստները և «աստվածաբարները», վորոնք հետագայում կազմեցին «Վպերյոդ» խումբը:

1908 թ. հոկտեմբերին և 1909 թ. նոյեմբերին Լենինը մասնակցություն է ունենում Միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստին Բրյուսելում: Այստեղ Լենինը պայքար է մղում Կաուցկու դեմ, վոր քողարկում էր անգլիական բանվորական կուսակցության ոպոռոտունիզմը, և հոլանդական սոցիալ-դեմոկրատիայի պառակտման հարցում պաշապանում է հոլանդական ձախ մարքսիստներին, վորոնք կովում էին իրենց ոպոռոտունիստների դեմ: 1910 թ. ոգոստոսի 28—սեպտեմբերի 3-ը Լենինը մասնակցում է II Ինտերնացիոնալի Կոպենհագենի կոնգրեսի աշխատանքներին, մեծ ուշադրություն դարձնելով բանվորական կոոպերատիվների հարցի վրա, վորպես կոոպերատիվ հանձնաժողովի անդամ: «Կոոպերատիվների հարցը Կոպենհագենի Միջազգային սոցիալիստական կոնգրեսում» հոգվածում Լենինն ուշադիր հետևելով հո-

սանճները պայքարին կոնգրեսում և ամբողջովին հարելով ձախ
թևին (նույնիսկ նրա նախաձեռնությունները ձախերի մասնավոր խոր-
հրդակցություն հրավիրվեց), գրում եր, վոր «հեգեմոնիան ինտեր-
նացիոնալում յերբեմն դուրս և գալիս գերմանական սոցիալ-դե-
մոկրատների ձեռքից, վորոնք մարքսիստական ուղղափառություն
հանրակայացուցիչներն էյին համարում իրենց, և ընդգծում եր գեր-
«մանական սոցիալ-դեմոկրատիայի ճգնաժամը, վորն արտահայտ-
վում և ուղորտունիստների հետ անխուսափելի վճռական խզման
հասունացմամբ»: Այսպիսով Լենինը վոչ մի պատրանք չունեի
իրերի իսկական դրությունը նկատմամբ միջազգային սոցիալիզմի
մեջ, վորը հետգհետ ավելի յեր յենթարկվում ուղորտունիստների
ազդեցությունը: Կոնգրեսից հետո Լենինը վորոշ ժամանակով
գնաց Ստոկհոլմ մոր հետ տեսակցելու և զրադարանում զրադվելու
համար: 1911 թ. սեպտ. 23—24-ին Լենինը մասնակցություն և ու-
նենում Միջազգային սոցիալիստական բյուրոյի աշխատանքնե-
րին Յուրիխում, պաշտպանելով գերմանական սոցիալ-դեմոկրա-
տիայի հարձակումներից Ռ. Լյուքսեմբուրգին, վորը ռալիստապի
ընտրությունների ժամանակ մերկացրել եր գերմանական սո-
ցիալ-դեմոկրատիայի պարագլուխներից մեկի ուղորտունիզմը դա-
շունների վերաբերյալ հարցում:

Բողոքանովին վտարելուց հետո Լենինը շարունակեց լարված
պայքար մղել «ձախերի» դեմ («Ուղովիզմի և աստվածարարու-
թյան կողմնակիցների Ֆրակցիայի մասին», «Զրույց Պետերբուր-
գի բոլշևիկների հետ») և մերկացնել Կապրիի դպրոցի Ֆրակցիոն
ընույթը, վոր պարզ չի Ռուսաստանից այդ դպրոցը յեկող բանվոր-
բոլշևիկների մի մասի համար: Լենինի քննադատությունը հետե-
վանքով դպրոցում պառակտում առաջացավ, և բոլշևիկ-լենինիստ-
ների կողմն անցան մի խումբ բանվորներ, վորոնք այդ պատ-
ճառով դպրոցից արտաքսվեցին և նոյեմբերին յիկան Պարիզ,
վորտեղ Լենինը նրանց համար մի շարք դասախոսություններ կրկնեց
դաց: Այդ դասախոսությունները Լենինը հետո գեկտեմբերին կրկնեց
(Կապրիի դպրոցի միացած ունկնդիրները (բողոքանովականների)
համար, վորոնք նույնպես Պարիզ էյին գալիս: Լենինի ղեկավա-
րությամբ ուղովիստների դեմ մղվող պայքարը Ռուսաստանում,
վորտեղ նրանք զգալի ազդեցություն ունեյին, սուր բնույթ եր
կրում և բոլշևիկ-լենինիստների հաղթանակով վերջացավ:

Պայքարելով հեղափոխական կուսակցությունը պահպանելու

համար, վորի ավելորդությունն էյին քարոզում լիկվիդատորնե-
րը, Լենինը մասնաշնչում եր, վոր բոլշևիկների խնդիրն և «համ-
բերություն» դասախոսական կուսակցական տարրերին, համախըմ-
բել նրանց և ստեղծել իսկապես միասնական ու ամուր պրոլե-
տարական կուսակցություն: Միատեմատիկ քննադատություն
յենթարկելով ուղովիստների և լիկվիդատորների հայացքները,
Լենինն առաջարկում եր մերձենալ Պլեխանովի և մենշևիկ-կու-
սակցականների (պլեխանովականների) հետ, վորչափով նրանք
կանգնեցին լիկվիդատորություն դեմ պայքարելու և անլեզալ
կուսակցությունը պահպանելու ուղու վրա:

1910 թ. հունվարի 15-ից մինչև փետրվարի 5-ը Լենինը մաս-
նակցում և Կի ալպես կոչված միացյալ պլենումի աշխատանք-
ներին (Պարիզում), վորտեղ ներկայացված էյին ՌՄԻԿ համա-
րյա բոլոր հասանքներն ու ուղղությունները և ազգային կուսակ-
ցությունները: Պլենումի նպատակն եր ստեղծել կուսակցության
միացում, վորը հնարավոր եր միայն խիստ հեղափոխական պլատ-
ֆորմի բազայի վրա: Վորովհետև պլենումում զգալի թվով հաշտ-
վողականներ կային, վորոնցից նաև՝ բոլշևիկներ մեջ, ուստի
պլենումի կողմից միաձայն բնութանված բանաձևը (վորի ոգտին
մենշևիկներն էլ քվեարկեցին) թեև իր էյությունը միայն կու-
սակցական տարրերի միացման և յերկու ճակատով (լիկվիդատոր-
ների և ուղովիստների դեմ) պայքարելու մասին եր խոսում և
այդ իմաստով ընդհանուր առմամբ զուգադիպում եր Լենինի
հայացքներին, սակայն և այնպես լիովին վորոշակի բնույթ չեր
վրում, վորոշ ճեղք թողնելով լիկվիդատորների համար Լե-
նինը, վոր պլենումում ներկա յեր խորհրդակցական ձայնով,
վորպես կենտրոնական որդան «Социал-демократ»-ի խմբա-
դրություն անդամ, ուր նա մտել եր 1909 թ. հունվարին,
պահանջում եր ավելի խիստ ձևակերպել յերկու ճակատով պայ-
քար մղելու գաղափարը և պաշտպանում եր «յերկու Ֆրակցիա-
ների միությունը» (բոլշևիկների և մենշևիկ-պլեխանովականների)
լիկվիդատորների և վալերյոգովեցների դեմ պայքար մղելու հա-
մար: Սակայն համագումարում գերակշռող հաշտվողականները և
հատկապես, իբր թե վոչ-ֆրակցիոնական Տրոյկին բոլշևիկ հաշտ-
վողականների (Ի. Դուբրովինսկի, Լ. Կամենեվ և ուրիշները)
պաշտպանությամբ միություն մեջ մտցրին թե «գոլոսականներին»
(Голос социал-демократа) — մենշևիկների արտասահմանյան դե-

կալար որդանը), թե տրոցկիստներին, թե վաերյոդականներին, միաժամանակ վերոշում անցկացնելով ֆրակցիաները ցրելու մասին՝ առանց բոլշևիկների գործունեությունը անհրաժեշտ յերաշխիքների (բոլշևիկներն, որինակ, պարտավորվեցին փակելու իրենց ֆրակցիոն որդանը և փակեցին այն, վերը չարին մենշևիկները):

Զնայած մի շարք թերություններին, պլենումի բանաձևը, վոր ոտգովիզմն ու լիկվիդատորությունը համարում եր «բուրժուական ազդեցություն արտահայտություն պրոլետարիատի վրա», այնուամենայնիվ կարող եր կուսակցության միացման հիմք ծառայել՝ բարեխղճորեն իրադրծվելու դեպքում, այդ չեղավ և չեր էլ կարող լինել լիկվիդատորների և վաերյոդականների կողմից: Պլենումի հաշտվողական սխալն այն եր, վորնա անցկացրեց «համաձայնություն մարդկանց և խմբերի միջև առանց խտրություն, առանց համապատասխանություն նրանց խոստումների (բանաձևն ստորագրեցին) ու նրանց գործերի միջև: Ինչպես նախատեսել եր Լենինը, «կուսակցության միացումը», վոր հաջակվեց պլենումի կողմից, ֆիկտիվ դուրս յեկավ, վորովհետև պլենումից անմիջապես հետո «գոլոտականները» կամպանիա սկսեցին նրա վորոշումներին դեմ, քարոզելով հոսանքների «իրավահավասարություն» թեորիան, լիկվիդատոր-լեգալիստների իրավահավասարության թեորիան հեղափոխական-կուսակցականների, ՌՄԴԲԿ հետ: Լենինը կատաղի պայքար սկսեց «գոլոտականների» կողմից պլենումի վորոշումները վիժեցնելու դեմ, մերկացնելով լեգալիստների բուրժուական բնույթը, նշավակելով նրանց վորպես սոցիալ-դեմոկրատիայի թշնամիներին: «կուսակցության դեմ կազմված դավադրությունը բացված ե. բոլորդ, ում համար թանգ ե ՌՄԴԲԿ գոյությունը, վոտքի կանգնեցեք կուսակցությունը պաշտպանելու համար», — գրում եր Լենինը: 1910 — 1911 թ. թ., յերբ լիկվիդատորների մի մասը կամպանիա յեր մղում կուսակցության դեմ լեգալ մամուլի եջերում, կուսակցությունը դիակ անվանելով, իսկ մյուս մասը («գոլոտականները») քայքայում ու պայթեցնում եր կուսակցությունը ներսից, նստած հենց կուսակցության ապարատում, — այդ՝ կուսակցության հեղափոխական բնույթը պահպանելու համար Լենինի կողմից մղվող ամենակատաղի պայքարի շրջանն եր: Կուսակցության համար ծավալված այդ պայքարը, վոր ուղահանջում եր ուժերի ծայրահեղ լարում,

կուսակցության կենտրոնական հիմնարկներում նստած և նրա աշխատանքը վիժեցնող մենշևիկների պերմանենտ խառնակչությունների հաղթահարում, — այդ պայքարը Լենինն անասելի ծանր պայմաններում եր մղում, մանավանդ վոր այդ տարիներում ուժեղ կերպով տարածվեցին փառած, զանազան խմբերի ու հոսանքների (հատկապես Տրոցկու) կողմից պատվաստված այն «հաշտվողական տրամադրությունները, թե պետք ե միություն ստեղծել, ինչպիսին ել լինի, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի՝ լիկվիդատորների առաջ անձնատուր լինելու գնով: Զնազան ուղղության հաշտվողականների դեմ ես (Տրոցկին իր վիեննական «ПРАВДА»-յով, Բուենդ, բոլշևիկ-հաշտվողականներ, հետո լենինը) Լենինն անհաշտ պայքար ե մղում («Միացման ճղհնաժամը մեր կուսակցության մեջ», «Հաշտվողականների կամ առաքինիների նոր ֆրակցիայի մասին», «Տրոցկու դիվանագիտություն և կուսակցականների մի պլատֆորմի մասին», «Կուսակցության գործերի դրություն մասին»): «Այդ խառնակչության և սկանդալի, այդ դատարկության ու «փրփուրի» մթնոլորտում... նստելը սիրտ խառնելու չափ ծանր ե, — գրում ե Լենինը Մ. Գորկուն 1910 թ. ապրիլի 11-ին, — և այս ամենը դիտելն ել զգվածք ե պատճառում: Սակայն անթույլատրելի յե նաե իր տրամադրությունն անձնատուր լինելը: Վտարանդիությունն այժմ 100 անգամ աժելի ծանր ե, քան մինչև հեղափոխությունը: Վտարանդիությունը և խառնակչությունն անբաժան են. սակայն խառնակչությունը կվերանա... Իսկ կուսակցության զարգացումը, սոցիալ-դեմոկրատական շարժման զարգացումը՝ լինում ե ու ընթանում դեպի առաջ՝ չնայած այժմյան կացության բոլոր դիվային դժվարություններին: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության մաքրումն իր վտանգավոր «թեքումներից», լիկվիդատորությունից և ոտգովիզմից, անշեղ առաջ ե գնում... Ոտգովիզմին մենք, ճիշտն ասած, զաղափարապես վերջ տվինք դեռ մինչև պլենումը, լիկվիդատորությունը բոլորովին վոչնչացնել չկարողացանք այն ժամանակ, մենշևիկներին հաջողվեց միառժամանակ թաղցնել ոձին, իսկ այժմ նրան լույս աշխարհ են հանել, այժմ նրան ամենքն են տեսնում, այժմ նրան պետք ե վոչնչացնենք և կվոչնչացնենք»: Մի շարք հոգվածներում, վորոնք տպվել են գլխավորապես «Социал-демократ»-ում, Լենինը վոչ միայն քայլ առ քայլ նշում ե լիկվիդատորության կազմակերպական ձևավոր-

ման պրոցեսը, նրանց կողմից առանձին «ոտոլիպինյան բանված»
բազան կուսակցություն» ստեղծելու պրոցեսը, մի կուսակցու-
թյուն, վոր անհաշտ թշնամական դիրք եր բռնել հեղափոխական
սոցիալ-դեմոկրատիայի հանդեպ և պայքարում եր նրան ու նրա
կենտրոնական հիմնարկները քայքայելու համար («Լիկվիդատոր-
ների» «Толос»-ն ընդգեմ կուսակցության», «Լեգալիստների կու-
սակցությունը լիկվիդատորության հակառակորդների հետ»),
այլ նաև միաժամանակ ցույց և տալիս, վոր միանգամայն լիբե-
րալ և ռեֆորմիստական բնույթ ունի «անկախական-լեգալիստ-
ների» քաղաքականությունը, վորոնք ժխտում եյին պրոլետա-
րիատի հեղեմոնիան և հրաժարվում եյին հեղափոխությունից
(«Մեր լուծարիչները», «Իշխանություն սոցիալական կառուցվածքի
մասին, հեռանկարների և լիկվիդատորության մասին»):

1910 թ. վերջից Լենինը, շարունակելով աշխատել «Социал-де-
мократ»-ում և «Рабочая газета»-յում, վորը նույնպես ար-
տասահմանում եր հրատարակվում, զաղափարապես ղեկավարում
է իր վճռական մասնակցությունը հիմնված լեգալ որդանները
Ռուսաստանում—«Звезда» լրագիրը (Պետերբուրգ) և «Мысль»
ժուռնալը (Մոսկվա): 1912թ. ապրիլից «Звезда»-յի հետ միասին
սկսեց լույս տեսնել «Правда»-ն, իսկ 1911 թվի վերջից՝ փակված
«Мысль»-ի տեղ «Просвещение»-ն (Պետերբուրգ): Այդ որդաննե-
րում տպված հոդվածների մեջ Լենինն գլխի ուղղություն և
նվիրում լիկվիդատորների (և վերջոյողականների) դեմ մղվող
պայքարին:

Լենինի համար ակներե եր, վոր այլևս անհանդուրժելի յե կու-
սակցության մեջ լիկվիդատորների մտալը, վորոնք բուրժուա-
զիայի գործադաշնեյն եյին հեղափոխական պրոլետարիատի շար-
քերում: Վորպեսզի վերջ տրվի իրերի այն կացությանը, յերը լիկ-
վիդատորները համարվում են կուսակցության մի որինական մա-
սը, վորը ներկայացուցչություն ունի նրա ղեկավար որդաննե-
րում և այդ ներկայացուցչությունից ոգտվում և կուսակցության
մեջ կազմալուծում մտցնելու համար, Լենինն սկզբում պահան-
ջում և հրավերել էի պլենում, վոր բաղկացած եր գանաղան ֆրակ-
ցիաների ու հոսանքների ներկայացուցիչներից (ՌՄԴԿ մեջ եյին
մտնում նաև լենները, լատիշները և բուլղակականները), ձգնաժամից
դուրս գալու մի «լեգալ», կուսակցական առհասարակության
վրա հենվող յեղ գտնելու համար: Յերը պլենումի գումարումը

առաջադրեց լիկվիդատորների կողմից, վորոնք շահադրգոված եյին
Կի քայքայմամբ, վորտեղ մեծամասնությունը բուլղակներին եր
պատկանում, Լենինը հաստատապես վորոշում և ամբողջ գծով
խզել կազերը լիկվիդատորների հետ: Նա ամենից առաջ 1911 թ.
մայիսին հարաբերությունները խզում և Կի այսպես կոչված ար-
տասահմանյան բյուրոյի հետ, վորը գործիք եր դարձել լիկվիդա-
տորների ձեռքին և ամեն կերպ կասեցնում եր պլենումի գումարումը
Հոլնիսին տեղի յե ունենում կենտրոնականների՝ Լենինի հրա-
վերած խորհրդակցությունը, վորը Լենինի նախաձեռնությամբ
վորոշում և կոնֆերենցիա հրավիրել ռուսական կուսակցական
կազմակերպություններից և նրա նախապատրաստման համար
համապատասխան հիմնարկներ (արտասահմանյան Կազմակերպա-
կան հանձնաժողով և Տեխնիկական հանձնաժողով) և ստեղծում:
Այդ ձեռնարկումները Լենինն անցկացրեց լենական սոցիալ-
դեմոկրատների և բուլղակ հաշտվողականների հետ բոլ կազմած.
այդ յերկու հիշված հիմնարկներում և բուլղակ-լենինիստները
փոքրամասնություն եյին կազմում:

Միաժամանակ Լենինը պետք և հաղթահարեց հաշտվողական-
ների դիմադրությունը, որինակ Ա. Ռիկովի, վորը հաշտվողաբար
եր վերաբերվում դեպի լիկվիդատորներն ու «վերջոյողվեցները»:
«Հաշտվողականները միշտ խաղալիք են յեղել լիկվիդատորների
ձեռքում», գրում եր Լենինը, խարազանելով հաշտվողականների
յերերբռններն ու տառաժնեները, վորոնք նորից փորձում եյին
կրկնել «պլենումի իդիոտային հաշտվողական ռեալները»: Լիկ-
վիդատորները բազմակողմանիորեն սահմանադաշտվելու և նրանց
հետ բոլոր կազերը վերջնականապես խզելու հաշտապատրաստ-
ման նույն ադ նպատակով Լենինը 1911 թ. հուլիսին Զ-րդ պա-
րիզյան խմբի ժողովում անց և կացնում մի մեծ սկզբունքային
բանաձև, վորով հանգամանորեն պարզաբանվում եր լիկվիդատո-
րության հարը, և գոհունակությամբ ընդունում և Մարտովի ու
Դանի հայտարարությունը «Социал-демократ»-ի խմբագրու-
թյանից դուր գալու մասին: 1911 թ. դեկտեմբերի 28—30-ին
Լենինը գործա մասնակցում և արտասահմանի բուլղակյան պա-
րիզյան խմբի Պարիզում տեղի ունեցած խորհրդակցության
աշխատանքներին և այնտեղ հանդես և գալիս կուսակցության
գործերի դրույան վերաբերյալ մի ղեկուցմամբ, վորն իր սուր
ծայրով ուղղված եր լիկվիդատորների դեմ: Պայքարը ծայրահեղ

սուր կերպարանք ընդունեց: Լիկվիդատորների ասեղնաթյունը
լենինի հանդեպ այնտեղ հասավ, վոր Մարտովը հրատարակեց մի
կեղտոտ, զրպարտիչ, գլխավորապես Լենինի դեմ ուղղված բրո-
շյուր—«Спасители или угнетители», վորը նույնիսկ նաուցկին
«զզվելի բրոշյուր» անվանեց:

Յերբ լեհական սոցիալ-դեմոկրատիայի լիդեր Տիշկոն, վոր
համերաշխորեն գործում էր Թ. Լյուքսեմբուրգի հետ, պարզապես
հաշտվողական դիրք բռնեց, աշխատելով համաձայնության գալ
լիկվիդատորների հետ, Լենինը խզեց կապերը տիշկոյական-
ների և նրանց հետ բոլի կազմած բոլշևիկ-հաշտվողականների հետ.
Նրա ցուցումով բոլշևիկ-լենինիստները դուրս են գալիս արտա-
սահմանյան Կազմակերպական և Տեխնիկական հանձնաժողովնե-
րից, իսկ կոնֆերենցիայի հրավերումն ամբողջովին իր վրա յե
վերցնում Թուսաստանում ստեղծված և Լենինի ղեկավարած՝ Թու-
սաստանի կազմակերպական հանձնաժողովը, վորին պաշտպանում
են նաև բանվոր պրեխանովականները: Կուսակցությունը վերա-
կանգնելու նպատակով այդ կոնֆերենցիան հրավիրելու համար
Լենինը հարկադրված էր անողոք պայքար մղելու լիկվիդատոր-
ների, արոցկիստների, վաերյուղականների, բոլշևիկ-հաշտվողա-
կանների, լեհական սոցիալ-դեմոկրատների դեմ և այլն: Կոնֆե-
րենցիան դադարվեց 1912 թ. հունվարի 18—30-ին Պրագայում:
Կոնֆերենցիան (վորի մեջ ներկայացված էին Ռուսաստանում
գործող կուսակցական բոլոր անլեգալ կազմակերպությունները)
Լենինի առաջարկությամբ կառուցվեց, կազմակերպվեց վորպես
կուսակցության գերագույն մարմին, վաարեց կուսակցությունից
լիկվիդատորներին, մշակեց մի շարք առկտիկական բանաձևեր,
վորոնցից առանձին նշանակություն ունեն ժամանակակից մո-
մենտի և IV Դումայի ընտրությունների վերաբերյալ բանաձևե-
րը, և ընտրեց ԿԿ, վորի կազմի մեջ մտավ Լենինը Այդ կոնֆե-
րենցիան, վոր գումարվեց բանվորական շարժման նոր վերելքի
շրջանում, ռեակցիայի յերկարատև ջրջանից հետ խորը դեր
խաղաց կուսակցության պատմության մեջ:

1908 թ. «դեկտեմբերյան» կոնֆերենցիայի և Պրագայի 1912
թվի կոնֆերենցիայի միջև ընկած շրջանում Լենինը, վորի ու-
շաղրթյունը գլխավորապես կուսակցության համար մղվող
պայքարի, լիկվիդատորների և հաշտվողականների դեմ մղվող
պայքարի վրա յեր կենտրոնացած, միաժամանակ շարունա-

ցում էր մամուլի մեջ մշակել հեղափոխության բոլոր հիմնական
հարցերը, ապացուցելով բոլշևիկների պաշտպանած քաղաքակա-
նության ճշտությունը և մերկացնելով մենդելինների, Տրոցկու և
Ներիշների դիրքի ռեֆորմիստական ու ոպորտունիստական եյու-
թյունը: Անհրաժեշտ է նշել հետևյալ հարցերը, վորոնցով բուռն
թափով զբաղված էր Լենինն այդ շրջանում.—սոցիալ-դեմոկրատ-
ների հայացքների շարադրումը կրոնի վերաբերմամբ. դասակար-
գների և կուսակցությունների գնահատականը դեպի կրոնն ու
յեկեղեցին ցույց տված նրանց վերաբերմունքի աեսակետից, կա-
դետական «Вехи» աղմուկ հանած ժողովածուի գնահատականը,
վորպես «լեբերալ ռեհեգատություն ենյիլիոպեդիա». Տոլստոյի
մասին գրած հոդվածները նրա մահվան առնչությամբ. 1861 թ.
գյուղացիական ռեֆորմի հոբելյանի առթիվ գրած հոդվածները.
ստոլիպինյան քաղաքականության գնահատականը՝ մի հոդվա-
ծաշարք IV Դումայի ընտրական կամպանիայի առթիվ. «Թու-
սաստանի գործադուլների վիճակագրության մասին» հոդվածը,
վոր նվիրված էր 1905—1907 թ. թ. գործադուլային շարժման
վերլուծությանը և այլն: Բացի գրական գործունեությունից
Լենինը 1911 թ. ամառը սիստեմատիկ կերպով դասախոսություն-
ներ էր կարդում Լոնժոնոյի (Պարիզի մոտ) կուսակցական դպ-
րոցում:

Բանվորական շարժման վերելքի հետևանքով և այդ իսկ
պատճառով Պետերբուրգի լեգալ մամուլին ավելի մոտ լինելու
անհրաժեշտությունը նկատի ունենալով, Լենինը 1912 թ. հուլի-
սի սկզբներին գալիս է Կրակով և ապրում է այնտեղ մինչև
1913 թ. մայիսը: Պրագայի կոնֆերենցիայից հետո, վորի դեմ
կատաղի հարձակում սկսվեց լիկվիդատորների, ազգային կու-
սակցությունների, Տրոցկու և արտասահմանյան այլ խմբակների
կողմից, վորոնք կոնֆերենցիային մեղադրում էին «ուզուրպա-
ցիայի» և «պառակտողականության» մեջ, այդ շրջանում Լենինի
ամենակարևոր խնդիրն էր պաշտպանել այդ կոնֆերենցիան և նրա
վորոշումները, բացատրել և լուսարանել նրա դերը և նշանակու-
թյունը ռուսական բանվորների առաջ «Правда»-յում, գերմանա-
կան սոցիալ-դեմոկրատիայի առաջ, վոր հոգնաաժորում էր լիկ-
վիդատորներին, լեհական սոցիալ-դեմոկրատիայի առաջ, վորի
մեջ պառակտում էր առաջ յեկել, և վորի ոպողիցիոն մասը («ուզ-
լամովցիները» — վարչապայի կազմակերպության գլխավորու-

թյամբ) համակրում եր բոլշևիկներին: Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի կենտրոնական որդան «Փորվերտսը» ղեկավարեց Տրոցկու անստորագիր, ստահող հոգվածը կոնֆերենցիայի մասին և հրաժարվեց տեղ տալ բոլշևիկների պատասխանին: Ուստի Լենինը գերմանական սոցիալ-դեմոկրատներին իրերի իսկական դրուժյանը ծանոթացնելու համար հրատարակում է գերմաներեն լեզվով «Аноним из «Форвертса»» բրոշյուրը (1912 թ. մարտին) և «К современному положению в РСДРП» բրոշյուրը (1912 թ. հուլիս—սեպտեմբեր): Ցերկու հոգված էլ կուսակցության դրուժյան և Տիշկոյի հաշտվողական դիվանագիտության մասին Լենինը ղեկավարեց լեհական սոց.-դեմոկրատական ուղղության որդաններում 1912 թ. հուլիսին ու նոյեմբերին: «Правда»-յի, «Просвещение»-յի և անլեզու «Социал-демократ»-ի եջերում Լենինը շարունակում է խիստ պայքար մղել լիկվիդատորների և Տրոցկու հողմից բոլշևիկների դեմ պայքարելու նպատակով լիկվիդատորներից, արոցկիստներից, բուհականներից, լատիշներից և ուրիշներից կազմակերպված «ոգոստոսյան բլոկի» դեմ, մերկացնելով այդ բլոկի լիկվիդատորական եյուլթյունը, վորը պրոլետարիատի ու շաղրուժյան կենտրոնը «կապիցիաների ազատության» լոզունգն էր դարձնում և վոչ թե ինքնակալության տապալման համար մղվել է պայքարը, վորը քողարկում էր հանրապետության լոզունգը, բացասաբար էր վերաբերվում մասսայական հեղափոխական գործադուլներին, քարոզում էր սահմանադրական ռեֆորմներ և չէր հավատում հեղափոխության անխուսափելիությանն ու անհրաժեշտությանը: Այդ ռեֆորմիստական քաղաքականությանը Լենինը հակադրում է հեղափոխական ծրագիր, պնդելով, վոր պետք է ընդհանրապես պայքարել այդ ծրագրի համար և հատկապես IV Դումայի ընտրությանները ժամանակ (1912 թ.): Լիկվիդատորների դեմ ուղղված և կուսակցական գիծը պաշտպանող հողմածներից անհրաժեշտ է նշել հետևյալները—«Ինչպես է Պ. Բ. Ակսիլրոդը մերկացնում լիկվիդատորներին», «Ռեֆորմիստների պատժումը և հեղափոխական սոցիալ-դեմոկրատների պատժումը» (1912 թ.), «Վիճելի հարցեր», «Ինչպես է Վերա Զասուլիչը ապանում լիկվիդատորությանը» (1913 թ.):

IV Դումայի ընտրությունների ժամանակ Լենինը պայքարում է խլենք Դուման ռեակցիայի ձեռքից» և ոգնենք կազմա-ներին «իշխանության հասնելու գործում» լիկվիդատորական լո-

զունգի դեմ, պահանջելով պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականություն (դեմոկրատական հանրապետության, 8-ժամյա աշխատանքային օրվա, կալվածատիրական հողերի գրավման լոզունգները) և պրոլետարիատի պայքար դեմոկրատիայի համար, վերջինին կադետների հեգեմոնիայից ազատագրելու համար («Ընտրությունների արդյունքները»): Ընտրական պայքարը, վոր դադարորեն ղեկավարում էր Լենինը, բոլշևիկների խաշոր հաջողությանը պսակվեց. բանվորական կուրիայի բոլոր վեց առաջամուկներն էլ բոլշևիկներ ընտրվեցին: Հետագայում Լենինը սխառեմատիկ կերպով ղեկավարում է բոլշևիկ-պատգամավորների գործունեությունը, վորոնք հաճախ գալիս էին նրա մոտ—կրակով կամ Պորոնինո, նրանց հետ նամակագրություն և պահպանում, հրահանգում է նրանց, նրանց համար թեղիսներ և ճառերի նախագծեր է գրում, վորոնց համեմատ նրանք հետո հանդես են գալիս Պետական Դումայի ամբիոնից («Ժողովրդական լուսավորության միջնադարի ժամանակների քաղաքականության հարցի առթիվ», «Ժամանակակից կառավարության հողային (ընդհանուր) քաղաքականության հարցի առթիվ», «Ազգային քաղաքականության հարցի առթիվ» և այլն): 1913 թ. հունվարի 10—14-ին Լենինը ղեկավարում է Կի խորհրդակցությունը, վոր պատասխանատու աշխատողների մասնակցությամբ դումարվել էր կրակովում (այսպես կոչված «փետրվարյան» խորհրդակցությունը), և այնտեղ հանդես է գալիս յերկու գեկուցումով—«Հեղափոխական վերելքը, գործադուլները և կուսակցության խնդիրները» և «Լիկվիդատորությանը ցույց տրվելիք վերաբերմունքի մասին ու միասնության մասին»:

«Правда»-յին և «Просвещение»-յին Լենինն աշխատակցում էր չափազանց ինտենսիվ կերպով: Հատկապես «Правда»-յին նա համարյա ամեն օր հոգվածներ էր ուղարկում: «Правда»-յի գոյության առաջին տարվա ընթացքում Լենինն ստիպված յերկու բուռն պայքարել լրագրի ուսական խմբագրության դեմ, վորը հաշտվողական վերաբերմունք էր ցույց տալիս դեպի լիկվիդատորություն ու Ա. Բոգդանովը, մինչև վոր վերջապես «Правда»-յի գիծն ուղղվեց:

Բացի ուսական քաղաքական թեմաներին վերաբերող հողմածներից (լիբերալների քաղաքականության մերկացում, նախադիվության քննադատություն, հողային հարց և այլն),

Լենինը «Правда»-յին բազմաթիվ հոդվածներ եր ուղարկում, վորոնք լուսարանում եյին միջազգային բանվորական շարժման և Արևելքի հեղափոխական շարժման գանազան կողմերը: Միջազգային դրությունը 1913 թ. վերջերին Լենինը բնութագրում եր «բանվոր դասակարգի կողմից բուրժուազիայի դեմ մղվող կռիվի ծայրահեղ սրումով և սոցիալիզմի իրականացման մոտիկութեամբ (կյանքի թանգացում—մասայական գործադուլներ—պետութունների իմպերիալիզմը, նրանց կատաղի մրցումը շուկաների համար, նրանց մոտիկ լինելը պատերազմին)»:

1913 թ. մայիսի կեսերին Լենինը Կրակովից հնաց Պորոնինո գյուղը (Գալիցիայում), սակայն այստեղ յերկար չմնաց և հունիսի 21-ին Վիեննայի վրայով անցավ Շվեյցարիա, վորտեղ գտնվում եր մինչև ոգոստոսի սկիզբը: Շվեյցարիայում յեղած ժամանակ Լենինը մի շարք քաղաքներում ռեֆերատներ ե կարդում ազգային հարցի մասին. բացի դրանից՝ ոգոստոսի 5-ին նա հանդես ե գալիս Բեռնում կուսակցության դրության վերաբերյալ ղեկուցմամբ ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպութունների կոնֆերենցիայում: Պորոնինո վերադառնալուց հետո Լենինը 1913 թվի հոկտեմբերի 3—14-ին դեկավարում ե Կի այսպես կոչված «ամառային» խորհրդակցությունը կուսակցական աշխատողների մասնակցութեամբ, հանդես գալով Կի հաշվետվութեամբ և ազգային հարցի վերաբերյալ ղեկուցումով: Պորոնինոյից Լենինը Կրակով ե վերադառնում 1913 թ. նոյեմբերի 5-ին:

Հսկայական նշանակութուն տալով բուլշեիկների դումայական վեցյակի կողմից ինքնուրույն դիրք բռնելուն, Լենինն սկզբում պայքարում ե մենշեիկյան յոթնյակի դեմ մարքսիստ բանվորների խոշոր մեծամասնության կամքի արտահայտիչը հանդիսացող բուլշեիկյան վեցյակի «Իրավահավասարութեան» համար (ոգովելով իրենց մեծամասնութեամբ՝ մեկ ձայնով, մենշեիկները սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայում ճնշում եյին բուլշեիկներին, մերժելով, որինակ, բյուշետային հանձնաժողովում յերկու տեղից մեկը՝ նրանց հատկացնել և այլն), իսկ յերբ մենշեիկները հրաժարվում են այդ պահանջը կատարելուց, նա, հաղթահարելով Պետերբուրգում աշխատող միջոնի ընկերների դիմադրությունը, վորոնք վախենում եյին ֆրակցիայի պառակտումից և հաշտվողական վերաբերմունք ունեյին դեպի լիկվիդատորները, խզում ե առաջացնում վեցյակի ու յոթնյակի միջև (1913 թ. նո-

յեմբերին) և Դումայի ինքնուրույն բուլշեիկյան ֆրակցիա յե ստեղծում: Բացատրելով բանվորներին բուլշեիկներին բռնած դիրքի ճշտությունը, մերկացնելով լիկվիդատորակրոն ճիշերի կեղծավորությունը միասնականութեան մասին, վորն իսկապես տրեհն ստեղծված եր բանվորների ճնշող մեծամասնությունը համախմբող Պրազայի կոնֆերենցիայի միջոցով, պայքարելով հաշտվողականութեան բոլոր տեսակների, վորոնց թվում նաև լեն սոցիալ-դեմոկրատների մի մասի հաշտվողականութեան դեմ, վորին գլխավորում եյին Ռոզա Լյուքսեմբուրգը և Լ. Տիշկոն, Լենինն ուսումնասիրում ե այն որյեկտիվ տվյալները, վորոնք հնարավորութուն եյին տալիս դատելու «պրադիկտներին» և լիկվիդատորների աղեցութեան աստիճանի և ուժի մասին (IV Դումայի ընտրությունները, յերկու ուղղութեան թերթերի ոգտին բանվորների կատարած մոլծանքները, արմիրութունների և ապահովագրական գանձարկիչների ընտրությունների ընթացքը և այլն), և անհերքելիորեն ապացուցում ե, վոր «պրադիկտն» իրոք բանվորների հրահայտեան մեծամասնութեան կամքի ներկայացուցիչն ե, իսկ լիկվիդատորությունը մանր-բուրժուական-ինտելիգենտական հոսանք ե, վոր ուժեղ ե միայն բուրժուազիայի պաշտպանութեամբ: Յերկու հոսանքների աղեցութեան աստիճանի վերաբերյալ այդ տվյալները Լենինը հաղորդում ե նաև Միջազգային սոցիալիստական բյուրոյին, վորը մտադրվել եր հեղափոխական մարքսիստներին «միացնելու» լիկվիդատորների հետ: Ընդունելով, վոր «միասնականությունը» թույլատրելի յե միայն կուսակցութեան վորոշումների հիման վրա, հետևապես այն պայմանով, յեթե լիկվիդատորները և մյուս խմբակներն անվերապահորեն հեղափոխական պլատֆորմ ընդունեն, Լենինը խիստ կերպով պայքարում ե այն փորձերի դեմ, վորոնց նպատակն եր «միասնականութեան» դրոշի տակ հեղափոխական մարքսիստներին կապիտուլացիայի յենթարկել լիկվիդատորների առաջ: Միասնականութեան խախտման մասին, խախտման, վորը քողարկվում ե միասնականութեան վերաբերյալ ճիշերով՝ հոդվածում (1914 թ. մայիս) նա շատ սատիկ հաճախվում ե իբր թե «անֆրակցիոն» Տրոցկու անսկզբունք դիրքի վրա, վորն այդ ժամանակ դուրս եր յեկել լիկվիդատորների հետ կազմած ոգոստոսյան բլոկից, սակայն «ըստ եյութեան հենց նրանց զաղափարիկներն» եր կրկնում:

«Ոգոստոսյան բլոկի» քայքայման պրոցեսին Լենինը շատ

մեծ ուշադրութեամբ եր վերաբերվում և յեռանդուն պայքար եր
մղում, վորպեսզի բլոկից դուրս գա լատիշական սոցիալ-դեմո-
կրատիան: 1914 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին Լե-
նինը գնում և Պարիզ, վորտեղ հանդես և գալիս մի շարք ղեկու-
ցումներով: Այդ ղեկավարության ուղևորութեան ժամանակ նա Պա-
րիզից գնում և Բրյուսել, վորտեղ ներկա լինելով լատիշական
սոցիալ-դեմոկրատիայի IV համագումարին, քննադատում և լա-
տիշական Կի և ոգոստոսյան բլոկին, կոչ անելով լատիշական
սոցիալ-դեմոկրատիային հարել ՌՄԴԻԿ Կի-ին: Դեռ դրանից ել
առաջ Լենինը կապ եր հաստատել լատիշների ձախ թևի հետ և
գրել եր «Պատաճարմի նախագիծ լատիշական յերկրի սոցիալ-դե-
մոկրատիայի IV համագումարի առթիվ»: Լատիշները դուրս յե-
կան ոգոստոսյան բլոկից և ընտրեցին Կի, վորի մեջ գերակշռում
եյին բոլշևիկների կողմնակիցները:

1913—1914 թ. թ. Լենինը յեռանդուն կամպանիա յեր մղում
նաև ձախ-նարոդնիկութեան (եսերների) դեմ, վորոնք վորոշ ազ-
դեցութեան եյին ձեռք բերել բանվորների մեջ, ընդգծելով, վոր
նրանք քողարկում են աշխատանքի և կապիտալի միջև յեղած
անդունդը և հրաժարվում են հետևողական դեմոկրատիզմից:
1913 թ. յերկրորդ կեսում և ամբողջ 1914 թ. ընթացքում
Լենինն առավելագույն ուշադրութեան և նվիրում ազգա-
յին հարցին, բազմակողմանի վերլուծութեան ու քննադա-
տութեան յենթարկելով հեղափոխական մարքսիզմի տեսա-
կետի մի շարք աղավաղումներն ու խեղաթյուրումներն այդ
ասպարեզում: Պահանջելով, վորպեսզի ճշշված ազգերին անջատ-
վելու և ինքնուրույն պետութեան կազմելու իրավունք արվի,
Լենինը վճռականորեն առարկում և «կուլտուրական-ազգային
ազտոնոմիայի» լիկվիդատորական լոզունգի դեմ: Բացի բազմա-
թիվ մանր հոգվածներից, ազգային Լենինը նվիրել և յեր-
կու մեծ աշխատութեան՝ «Критические заметки по национальному
вопросу» (1913 թ. հոկտեմբեր) և «О праве наций на самоопре-
деление» (1914 թ. փետրվար), վորոնց մեջ քննադատել և
Ռ. Լյուքսեմբուրգի, լիկվիդատորների, բուհդիստների, ուկրա-
նական նացիոնալ-սոցիալիստների և ուրիշների սխալներն ու
խեղաթյուրումներն ազգային հարցում, վերականգնելով և զար-
գացնելով Մարքսի և Ենգելսի հայացքներն ազգային հարցում:
Միջազգային սոցիալիստական բյուրոն վորոշում և միա-

ցուցիչ խորհրդակցութեան հրավիրել (Բրյուսելում) առաջա-
կան սոցիալ-դեմոկրատիայի բոլոր հոսանքների ներկայացուցիչ-
ներից՝ «միացման» համար. այդ վորոշման կապակցութեամբ Լե-
նինը 1914 թ. Պորոնինոյում, ուր նա յեկել եր մայիսի 9-ին, մի
ընդարձակ ղեկուցում և գրում Կի-ին, վորի մեջ, վորպես լիկվի-
դատորների հետ միանալու ուղիժատումային պայմաններ, ա-
ռաջադրում և 14 կետ (վորոնց եյութեանն եր՝ լիկվիդատորները
և մյուս խմբակներն անվերապահորեն պետք և հրաժարվեն իրենց
հայացքներից, պետք և ընդունեն կուսակցութեան հեղափոխա-
կան պատաճարմը, յենթարկվեն Կի-ին և համակուսակցական հիմ-
նաբանների բոլոր վորոշումներին, վոչնչացնեն լիկվիդատորների
ղեկավար կենտրոնը և այլն): Այդ վոգով ել Բրյուսելի խորհըր-
դակցութեան համար Կի-ից նշանակված պատգամավորութեանը
խորհրդակցութեան ընթացքում վարելիք իր տակտիկայի մասին
հրահանգ և օտանում Լենինից, վորն անձամբ չգնաց աջնադ:
խորհրդակցութեանը բոլշևիկների (և լատիշների) պատգամավո-
րութեանը, Լենինի հրահանգների համաձայն, հրաժարվեց մաս-
նակցել ՄՍԲ առաջարկած բանաձևի քվեարկութեանը, վորն ըստ
եյութեան ուղղված եր բոլշևիկների դեմ: խորհրդակցութեանը վոչ
մի հետևանք չունեցավ: խորհրդակցութեանից հետո լիկվիդա-
տորները, «Вперед»-ը, Տրոցկու «Вперед»-ն և մյուս խմբերը
նոր, «բրյուսելյան» բլոկ կնքեցին բոլշևիկների դեմ: Միացման
հարցը նորից պետք և դրվեր վիեննայում շուտով դուրսարկելիք
կոնգրեսում, սակայն պատերազմը խանգարեց դրան:

Յերբ 1914 թ. ոգոստոսին սկսվեց պատերազմը, Լենինը, վոր
այդ ժամանակ Գալիցիայի Պորոնինո գյուղում եր գտնվում, ձեռ-
բակալվեց ավստրիական իշխանութեան կողմից՝ կասկածվելով
լրտեսութեան մեջ, վորպես ուսանալատակ, և բանտ դրվեց: Շնոր-
հիվ միքանի ազգեցիկ ավստրիական սոցիալ-դեմոկրատների միջ-
նորդութեան, վորոնք Լենինին ճանաչում եյին վորպես հեղափո-
խականի և ուսական ինքնակալութեան անհաշտ թշնամու, Լե-
նինին առաջադրված անհետի մեղադրանքը շուտով վերացվեց,
և նա յերկու շաբաթվա կալանքից հետո ոգոստոսի 19-ին բան-
տից արձակվեց: Ավստրիայից հեռանալու թույլտվութեան ստա-
նալով, Լենինը գնաց չեզոք Շվեյցարիա և հաստատվեց Բեռնում

(5 սեպտ.), վորտեղ ապրեց մոտ տարիուկես: 1916 թ. փետրվարին Լենինը Բեռնից անցավ Յյուրիխ, վորտեղ նա ապրում էր մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը, վորից հետո վերադարձավ Ռուսաստան:

Իմպերիալիստական պատերազմի հենց սկզբից Լենինը նրա հանդեպ հետևողական հեղափոխական մարքսիզմի անհաշտ-թշնամական դիրք բռնեց: Գալիցիայից Շվեյցարիա գալով, նա իսկույն թեզիսներ է գրում պատերազմի մասին: Այդ թեզիսներն անխելալ հերպով ուղարկվում են Ռուսաստան, վորտեղ հավանություն են ստանում Դոմաշի բոլշևիկյան հեղափոխական կողմից, իսկ հետո Լենինի ձեռքով վերածաշակվում է դառնում և հի մանիֆեստը—«Война и российская социал-демократия», վորը տպագրվեց 1914 թ. նոյեմբերի 1-ին: Թեզիսներում և մանիֆեստում Լենինը սկսված համաշխարհային պատերազմը բնորոշում է վորպես իմպերիալիստական պատերազմ, հաժապում է II Ինտերնացիոնալի խորտակումը, վորին պատկանող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների խոշոր մեծամասնությունը դավժանեց հեղափոխական մարքսիզմի ավանդներին և անցավ «իր» բուրժուազիայի կողմը, պահանջում է բուլետին և անվերապահորեն խզել կապերը ոպորտունիստների ու սոցիալ-շովինիստների հետ և ստեղծել նոր հեղափոխական ինտերնացիոնալ, այդտեղ էլ տալիս է իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լոգունգը և ցարական միապետության «պարտության» լոգունգը: Պատերազմի սկզբում Լենինը և բոլշևիկները միակ սոցիալիստներն էին, վորոնք անմիջապես և թունց ամենափոքր տատանումների հետևողական հեղափոխական մարքսիզմի դիրք բռնեցին:

Դեռ պատերազմի սկսվելուց առաջ ցարական կառավարությունը փակեց բոլշևիկների լեզալ որդան «Правда»-ն: Բոլշևիկներն այդ ժամանակ արդեն արտասահմանյան որդան չունեին: Ուստի պատերազմի առաջին յերկու ամսվա ընթացքում Լենինը հնարավորություն չունեց մամուլով իր տեսակետն արծարծելու և անցկացնելու: Մինչդեռ պետք էր, վորքան կարելի յե շուտ, սոցիալ-շովինիստական ուղարին հակադրել բոլշևիզմի պլատֆորմը և իր ձայնը բարձրացնել ի պաշտպանություն հեղափոխական սոցիալիզմի: Չունենալով իր թերթը, Լենինն այդ պատճառով ել բոլշևիզմի տեսակետը պարզում և արծարծում է ռեֆերատներով:

Հանդես գալով Շվեյցարիայի զանազան քաղաքների սոցիալ-դեմոկրատների վտարանդիական ժողովներում: Այդ շրջանում Լենինն առաջին հրապարակային յերույթն այն ճառն էր, վոր 1914 թ. հոկտեմբերի 11-ին Լոզանում նա արտասանեց թունդ սոցիալ-շովինիստ դարձած Գ. Պլեխանովի զեկուցման առթիվ:

Մեծ ջանքերից հետո, հաղթահարելով մի շարք դժվարություններ, Լենինին հաջողվում է վերահրատարակել մեր կուսակցության կենտրոնական որդան «Социал-демократ»-ը: Մի փոքրիկ թերթիկ, վոր լույս էր տեսնում մեծ ընդհատումներով և աներևակայելի դժվարությամբ գաղտնի կերպով ուղարկվում էր Ռուսաստան,—անա համարյա այն բոլորը, ինչ վոր ուներ Լենինն իր արամադրության տակ՝ իր հայացքները պատերազմի ժամանակ սխտեմատիկ կերպով տարածելու համար: Բացի «Социал-Демократ»-ից, Լենինի մի շարք հոդվածներ տպվեցին «Коммунист» ամսագրում (լույս տեսավ մեկ համար), «Сборник социал-демократа»-յում (լույս տեսավ յերկու համար), «Фарерстում» («Նախագուտակ»)—ցիմմերվալդյան ձախ թևի որդանը: Լենինի բոլոր հոդվածներից, վորքան հայտնի յե, հաջողից միայն մի փոքրիկ հոդված լեզալ կերպով տպագրել Ռուսաստանում «Вопросы страхования» ծուռնալում: Նրա միջանի հոդվածները, վորոնք գրված էին լեզալ հրատարակությունների համար, տպագրվեցին միայն 1917 թվին: Մի այնպիսի նշանավոր գիրք, ինչպես «Империализм»-ը, վոր Լենինը գրել էր 1916 թ., միայն Փետրվարյան հեղափոխությունից հետո լույս տեսավ:

Հսկայական կարևորություն տալով բոլշևիզմի կողմից իր հեղափոխական պլատֆորմի միջազային ասարելագում հայտարարելուն և նկատի ունենալով բոլշևիկների ինքնուրույն յերույթների և շովինիստներից ու ամեն յերանգի ցենտրիստներից սահմանադատվելու ամբողջ կարևորությունը, Լենինը բոլոր հնարավորություններն ոգտագործում է, վորպեսզի բոլշևիկներն իրենց հայացքները պարզեն հտարերկրյա սոցիալիստական կուսակցությունների առաջ. թեզիսներ և ուղարկում Լոզանոյում գումարված իտալո-շվեյցարական կոնֆերենցիային (1914 թ. սեպտեմբերի 27-ին), հրահանգում է Գ. Շլյապինիկովին շվեդական սոցիալ-դեմոկրատիայի համագումարում հանդես գալուց առաջ (1914 թ. նոյեմբերի 23-ին), հրահանգում է Մ. Լիովինովին նախքան նրա դեմոնստրատիվ յերույթը «Համաձայնության յեր-

կըրների» սոցիալիստների Լոնդոնի կոնֆերենցիայում (1915 թ. փետրվարի 14-ին) և նրան ղեկավարացիայի նախագիծ և ուղարկում, ղեկավարում և բուլշևիկների պատգամավորութան յեղևթաները կանանց միջազգային սոցիալիստական կոնֆերենցիայում (1915 թ. մարտի 26—28) և միջազգային յերիտասարդական կոնֆերենցիայում Բեռնում (1915 թ. ապրիլի 5—6): Այդ բոլոր յեղևթաններում բուլշևիկները հեղափոխական ծրագիր են հակադրում շովինիստներին ու նրանց քողարկող ցենարիստներին:

1915 թ. զարնանք Լենինն ամենամոտիկ մասնակցութուն և ունենում մեր կուսակցության արտասահմանյան կազմակերպությունների Բեռնի կոնֆերենցիային (փետրվարի 27—մարտի 4): Կոնֆերենցիայի՝ պատերազմի առաջադրած հարցերի վերաբերյալ բանաձևերը, վորոնք գրված են Լենինի ձեռքով (նա կոնֆերենցիայում հիմնական ղեկուցողն էր), բուլշևիկի կարևորագույն վավերագրերից մեկն են պատերազմի առաջին շրջանում: Կոնֆերենցիայի շրջանին և վերաբերում կուսակցության տակալիկայի և լոգունգների վերաբերյալ հարցի շուրջը կուսակցության ներսում ծագած տարաձայնությունների սկիզբը: Ընկերներին մի մասը Ն. Բուխարինի գլխավորութամբ այդ հարցում տառանումների և վարանումների մեջ ընկավ: Լենինը կոնֆե-

իայում յեռանդուն պայքար էր մղում ուկրնիստների դեմ, վորոնք բացասաբար էյին վերաբերվում «պարտություն» լոգունգին և պաշտպանում էյին «հաշտության» «տերտերական» լոգունգը, վորը ոպողիցիային մոտեցնում էր տրոցկիստներին («Наше Слово»): Ավելի ուշ տարաձայնություններ ծագեցին Ն.Բուխարինի—Գ. Պյատակովի խմբի հետ ազգային հարցում. այդ խումբը ժխտում էր ազգերի ինքնորոշման իրավունքի լոգունգը: Սկզբում հաջողվեց այդ խմբի հետ համաձայնության գալ՝ միատեղ «Коммунист» ժուռնալը հրատարակելու շուրջը, սակայն հետագայում տարաձայնություններն այնպես սրվեցին, վոր այդ հրատարակությունը դադարեց: «Социал-демократ»-ում և «Коммунист»-ում տպված մի շարք հոդվածներում (հատկապես պետք է նշել «II Ինտերնացիոնալի կործանումը» հոդվածը) Լենինն անխնա քննադատության յենթարկեց բացահայտ և քողարկված (ցենարիզմ) սոցիալ-շովինիզմի բոլոր տեսակներն ու ձևերը, վոր քարոզում էյին լիկվիդատորները Ռուսաստանում (Պոտրևսով), արտասահմանյան լիկվիդատորական Կի (Մարտով), բուռ-

գիստները, Չիեյիձեյի Ֆրակցիան, Տրոցկու «Наше Слово»-ն և ուրիշները: Յեվ վոչ մի քիչ թե շատ նկատելի հոսանք ուսուկան կամ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեջ, վոր պաշտպանում էր սոցիալ-շովինիզմը կամ պլատոնական ինտերնացիոնալիզմի գրոշի տակ կողմնակից էր շովինիստներին հետ միանալու անհրաժեշտության, չմնաց առանց ամենախիստ մերկացման Լենինի կողմից: Առանձնապես անխնա յեր նա ղեպի Կառեցկին, II Ինտերնացիոնալի ամենաականավոր լիդերը, վորն ամենանուրբ, ուստի և ամենավատնողավոր ձևով քողարկում և արդարացնում էր շովինիզմը: Իսկապես ինտերնացիոնալիստ լինել ցանկացող սոցիալիստներից Լենինը պահանջում էր բոլորովին և անվերապահորեն խզել կապերը տվյալ իմպերիալիստական պատերազմում բուրժուական հայրենիքի պաշտպանության կողմնակիցների հետ և կովի հեղափոխական ծրագիր ընդունել:

Կտրելով իր կապերը սնանկացած II Ինտերնացիոնալի հետ և հռչակելով նոր, հեղափոխական Ինտերնացիոնալ ստեղծելու անհրաժեշտությունը, Լենինն ուժեղ կերպով աշխատում է միջազգային բանվորական շարժման ինտերնացիոնալ տարերին կազմակերպելու և համախմբելու ուղղությամբ, ուշադրությամբ հետևում է միջազգային սոցիալիզմի ուղղությունների միջև հետըհեռե ավելի սրվող պայքարին, կապեր և հաստատում զանազան յերկրների «ձախերի» հետ, նրանց հետ նամակադրություն և վարում, «միջազգային ձախ» տակալիկական պլատֆորմն ու լոգունգներն և մշակում: Յիմմերվալդյան կոնֆերենցիայից առաջ, վոր կայացավ 1915 թ. սեպտեմբերի 5—8-ին, Գ. Զինովյեվի հետ միասին լույս է ընծայում «Социализм и война» բրոշյուրը՝ թարգմանված օտար լեզուներով, վորի մեջ տալիս է մեր կուսակցության վերաբերմունքը ղեպի պատերազմը: Կոնֆերենցիայում Լենինը գլխավորում է ցիմմերվալդիստների ձախ թևը, վոր հանդես էր յեկել իր սեփական պլատֆորմով, և ղեկավարում է նրա աշխատանքները: Գերմանական սոցիալ-դեմոկրատ Լեդերուրը, ցենտրիստ, իրեն թույլ է տալիս կոնֆերենցիայում մեղադրել Լենինին՝ «սահմանի մյուս կողմից» մասսաների մեջ հեղափոխական լոգունգներ տարածելու համար: Լենինը հանդիստ պատասխանում է, վոր նա հեղափոխական աշխատանք է կատարում սրգեն 20 տարոց ի վեր, մասսաներին հեղափոխական լոգունգներ տալով բանտից, սիբիրյան աքսորից, «սահմանի մյուս կող-

մից», վոր նա հետևում է Մարքսի և Ենգելսի որինակին 1848 թ. հեղափոխութեան շրջանում և վոր նա իր պարտքը կատարելու յե մինչև վերջը: Չհրաժարվելով սոցիալ-շովինիզմի դեմ բողոքող ցիմմերվալդյան մեծամասնութեան հետ միատեղ հանդես գալուց և այդ պատճառով ստորագրելով կոնֆերենցիայի մանիֆեստը, Լենինը միաժամանակ քննադատում է այդ տատանվող, «համա-րյա-կառուցկիական» մեծամասնութեան թերատությունն ու յերկ-շտոտությունը, հակադրելով նրան հետևողականորեն հեղափոխա-կան ինտերնացիոնալիզմի դիրքը («Առաջին քայլը»), «Հեղափո-խական մարքսիստները 1915 թվի սեպտեմբերի 5—8-ի միջադ-դային սոցիալիստական կոնֆերենցիայում»: 1916 թ. ապրիլի 24—30-ը Լենինը մասնակցում է Կինտալի—յերկրորդ միջազգա-յին սոցիալիստական—կոնֆերենցիային, վորի համար Կի անու-նից առաջարկությունների նախագիծ է ներկայացնում. այդ նա-խագիծում տրվում էր II Ինտերնացիոնալի պաշտպանած «հաշտու-թյան ծրագրի» քննադատությունը, պաշտպանվում էյին բոլշևիկ-ների հեղափոխական լոզունգները, և պահանջվում էր, վորպեսզի ծիմմերվալդն ավելի վճռական դերք ընդ II Ինտերնացիոնալի հետ պառակտվելու հարցում: Ձախերի ճնշման տակ Կինտալի կոն-ֆերենցիան մի քայլ առաջ գնաց ծիմմերվալդում ընդունված վորոշումների համեմատությամբ, խիստ դատապարտելով II Ին-տերնացիոնալի Միջազգային սոցիալիստական բյուրոյին, և սո-ցիալ-պոցիֆիզմի դեմ արտահայտվեց:

Յերբ 1916 թ. վերջին—1917 թ. սկզբում ցիմմերվալդական-ների մեծամասնությունը Ռ. Գրիմմի դիտավորությամբ թեքվեց դեպի աջ, սոցիալ-շովինիզմի կողմը, Լենինն առանց տատանվի-լու հայտարարեց ցիմմերվալդյան մեծամասնութեան դադափա-րական անանկացումը և նրա դավաճանությունը ինտերնացիո-նալիզմին, պահանջելով Ինտերնացիոնալ ստեղծել իսկական հե-ղափոխական տարրերից («Բուրժուական պոցիֆիզմ և սոցիալիս-տական պոցիֆիզմ», «Բաց նամակ Շաբլ Նենին»):

Կազմակերպելով ցիմմերվալդյան ձախ թեք, համախմբելով նրան դադափարական վորոշակի հիմքի վրա և սահմանադատվե-լով ցիմմերվալդյան մեծամասնությունից, Լենինը միևնույն ժա-մանակ պայքար է մղում ինտերնացիոնալիստների ձախ թեք-ներսում հեղափոխական մարքսիզմից կատարվող բոլոր շեղումնե-րի դեմ: Այստեղ պետք է հիշատակել նրա բանավեճը լեհ-գեր-

մանական (Ռ. Լյուքսեմբուրգ, Կ. Ռադեկ) և հոլանդական սոցիալ-դեմոկրատների դեմ, վորոնք բացասաբար էյին վերաբերվում ազգերի ինքնորոշման իրավունքի լոզունգին և ընդհանրապես թերազնահատում էյին դեմոկրատիայի համար մղվող պայքարի նշանակությունն իմպերիալիզմի դարաշրջանում («Սոցիալիստա-կան հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրավունքը», «Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները»), նրա բանավեճը շվեյցարական, սկանդինավյան և հոլանդական սոց-դեմոկրատների դեմ զինաթափման լոզունգի վերաբերյալ հարցի շուրջը («Զինաթափման լոզունգի մասին»), հատուկ հոգևածը Ռ. Լյուքսեմբուրգի խախտելու մասին («Յունիուսի բրոշյուրի մա-սին»), Գ. Պյատակովի սխալ հայացքների քննադատությունն ազգային հարցում («Մարքսիզմի ծագրանկարի մասին և իմպե-րիալիստական եկոնոմիզմի մասին») և Ն. Բուխարինի սխալ հա-յացքների քննադատությունը («Իմպերիալիստական եկոնոմիզմի ծնվող ուղղության մասին»), Ն. Բուխարինի սխալ հայացքների քննադատությունը պետութեան վերաբերյալ հարցում: Անհրա-ժեշտ է նշել, վոր իմպերիալիստական պատերազմի շրջանի իր աշխա-տություններում Լենինը, նախատեսելով պատերազմի հետևանքով կապիտալիզմի կործանման և բուրժուական դեմոկրատական (հետո սոցիալիստական) վերածող) հեղափոխութեան անխուսափելիու-թյունը Ռուսաստանի համար և սոցիալիստական հեղափոխու-թյան անխուսափելիությունը Արևմտյան Յեվրոպայի յերկրների համար, մշակեց թեորիական ու քաղաքական պրոլեմների մի հսկայական կոմպլեքս.—իմպերիալիզմի վերլուծությունը, գաղու-թային ժողովուրդների պայքարի և ապստամբությունների նշա-նակությունը, սոցիալիզմի հաղթանակի հարցը մի յերկրում («Տնտեսական ու քաղաքական զարգացման անհամաչափությունը կապիտալիզմի անպայման որնքն է: Այստեղից հետևում է, վոր սոցիալիզմի հաղթությունը հնարավոր է նախապես միքանի կամ մինչև անգամ առանձին վերցրած կապիտալիստական մեկ յերկրում: Այդ յերկրի հաղթանակած պրոլետարիատը, եքսպրո-պրիացիայի յենթարկելով կապիտալիստներին և իր մոտ սոցիա-լիստական արտադրություն կազմակերպելով, դեմ կկանգնեք մնա-ցած կապիտալիստական աշխարհին, գրավելով դեպի իրեն մյուս յերկրների ճնշված դասակարգերին, նրանց մեջ ապստամբություն հարուցելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտութեան դեպքում

նույնիսկ զինված ուժով դուրս գալով շահագործող դասակարգների և նրանց պետությունների դեմ»։ ազգային հարց, պրոլետարիատի պետություն հարցը, սոցիալիստական հեղափոխություն հյալան մոմենտները և առանձնահատկությունները, զեմոկրատիայի իրադրոճելիություն մասին իմպերիալիզմի ժամանակ, աննեքսիաների հարցը, և այլն)։

1916 թ. առաջին կեսի ընթացքում Լենինը ծյուրերիում գրեց մի մեծ աշխատություն «Империализм как новейший этап капитализма» անունով։ Այդ գրքի մեջ, վոր տալիս և իմպերիալիզմի՝ վորպես մոնոպոլիստական կամ «մեռնող», «նեխվող» կապիտալիզմի, սոցիալիստական հեղափոխության նախորդակը հոնդիսացող կապիտալիզմի փայլուն վերլուծությունը, Լենինը նպատակ և դնում «ցույց տալ բուրժուական վիճակագրություն հավաքական անվիճելի տվյալների և բոլոր յերկրների բուրժուական գիտնականների խոստովանություններ համաձայն, թե ինչ հանրագումարային պատկեր և ունեցել համաշխարհային կապիտալիստական տնտեսություն իր միջազգային փոխհարաբերությունների մեջ XX դարի սկզբին, առաջին իմպերիալիստական համաշխարհային պատերազմի նախորդակին»։

Լենինը հետևյալ ընտրողում և տալիս իմպերիալիզմին «Իմպերիալիզմը կապիտալիզմ և զարգացման այն շրջանում, յերբ կազմվեց մենաշնորհների ու ֆինանսական կապիտալի տիրապետությունը, աչքի ընկնող նշանակություն ստացավ կապիտալիստական հանումը, սկսվեց աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից, վերջացավ յերկրի ամբողջ տերրիտորիայի բաժանումը կապիտալիստական խոշորագույն յերկրների կողմից»։ Զարգացման այդ ստադիան, վորին հառել և կապիտալիզմը, իմպերիալիստական պատերազմներ և առաջ բերում, պատերազմներ աշխարհին տիրելու համար, շուկաներ ձեռք բերելու և փոքր ու թույլ ազգություններին ճնշելու համար։ կապիտալիզմը զարգացման իմպերիալիստական ստադիայում դառնում և «մակարածական կամ մեռնող կապիտալիզմ»։ կապիտալիզմին ընդհանրապես հատուկ հակասությունների սրումն իմպերիալիզմը ժամանակ հասնում և իր ամենավերջին սահմանին (պատերազմներ, թանգություն, մասսաների ճնշում և այլն), դրանով իսկ վերածելով մեր շրջանը պրոլետարիատին, սոցիալիստական հեղափոխությունների գարաշրջանի։ Իր գրքում Լենինը մեծ տեղ և

տալիս կապիտալիզմ ըննադատությունը, վորը (կապիտալիզմ) իր «ուլտրաիմպերիալիզմի» թեորիայով փորձում եր միջադեմ իմպերիալիզմի հակասությունների ամբողջ խորությունը և նրանից առաջացող հեղափոխական ճգնաժամի անխուսափելիությունը։ Քարոզելով իմպերիալիզմի հետագա «խաղաղ» զարգացման հնարավորությունը, վորն իմպերիալիստական պետությունները «համաշխարհային մեկ տրեստի» մեջ համախմբելու միջոցով ընդունակ և վերադարձնելու պատերազմներն ու քաղաքական ցնցումները, կապիտալիզմ ձգտում եր բանվորների ուղարկությունը շեղել սոցիալիզմի համար հեղափոխական պայքար մղելու անհրաժեշտությունից։

Մշակելով մարքսիստական թեորիայի և քաղաքականության բոլոր հիմնական հարցերը պատերազմի շրջանում, Լենինը միևնույն ժամանակ ղեկավարում և Ռուսաստանի բուրժուական գործունեությունը, չնայած Ռուսաստանի հետ յեղած անկայուն կապերին և նրանից բաժանող հեռավորությունը։ Առանձնապես նշանավոր են Լենինի «Միքսի թեզիսները» («Социал-демократ», 1915 թ. հոկտեմբերի 13-ի, № 47), վորոնք պարունակում եյին գործնական ղեկավարի մեջ ուղղաբարդությունների կոմիտեներին մասնակցելու դեմ, գործադուլային շարժման զարգացման ոգտին, «յերեք կետերի» (դեմոկրատական հանրապետություն, կալվածատերական հողի գրավում, ութամյա աշխատանքային օր) լողունգով, Բանվորական պատգամավորների խորհուրդների՝ վորպես ապստամբություն որգանների, վորպես հեղափոխական իշխանության որգանների լողունգը և այլն։ Լենինը թեզիսներում գրում եր, վոր յեթե հեղափոխությունը պրոլետարիատին իշխանության գլուխը դնել Ռուսաստանում, ապա «մենք... սիստեմատիկաբար ապստամբության կհանյինք վերկոռուսների կողմից այժմ ճնշված բոլոր ժողովուրդներին, բոլոր գաղութներն ու Ասիայի կախյալ յերկրները (Հնդկաստան, Չինաստան, Պարսկաստան և այլն), ինչպես նաև—հենց առաջին հերթին—ապստամբության կհանյինք Յեվրոպայի սոցիալիստական պրոլետարիատին ընդդեմ նրա կառավարությունների և հակառակ նրա սոցիալ-շովինիստներին»։ Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր պրոլետարիատի հաղթությունը Ռուսաստանում արտասովոր բարեհաջող պայմաններ կտար հեղափոխության զարգացման համար թե Ասիայում և թե Յեվրոպայում։

Նախատեսելով մերձավորագույն հեղափոխութեան բուրժուական-դեմոկրատական բնույթը Ռուսաստանում (ցարիզմը ապաւոյ պրոլետարիատի ու գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա), Լենինն այս հեղափոխութեանը դիտում էր միայն վորպես անցման աստիճան դեպի սոցիալիստական հեղափոխութեանը, և «Հեղափոխութեան յերկու գծերի մասին» հոգւածում, վոր լույս տեսավ համարյա թեզիսների հետ միաժամանակ, ընդգծում էր, վոր «բուրժուական Ռուսաստանի ազատագրումը ցարիզմից, կալվածատերերի հողային իշխանութեանից՝ պրոլետարիատն անհապաղ կոպտագործի... սոցիալիստական հեղափոխութեան կատարելու համար Յեվրոպայի պրոլետարների հետ դաշնակցած»:

Զբաղվելով ռուսական և միջազգային հեղափոխական շարժման հարցերով, Լենինը միաժամանակ հսկայական հետաքրքրութեան էր ցույց տալիս դեպի տեղական—շվեյցարական—բանվորական շարժումը, ձգտելով ազդեցութեան ունենալու նրա վրա շվեյցարական ձախերի միջոցով: Լենինի արխիւում պահպանվել են նրա մի շարք ձեռագրերը շվեյցարական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրների և տակաւնի մասին: Դիմելով շվեյցարական ձախ ցիմմերվալդիստներին, Լենինը գրում էր. «Առաջին պլանի վրա դրեք անհապաղ սոցիալիստական հեղափոխութեան գաղափարի սիստեմատիկ տարածումը, պատրաստվեցեք դրա համար և բոլոր գծերով համապատասխան արմատական փոփոխութեաններ մտցրեք կուսակցութեան ամբողջ գործունեութեան մեջ»: Միևնույն ժամանակ Լենինն ամեն մի հնարավորութեանից ոգտվում էր՝ շվեյցարական բանվորներին ռուսական պրոլետարիատի հեղափոխական հեռանկարներին ծանոթացնելու համար» («Զեկուցում 1905 թվի հեղափոխութեան մասին—1917 թ. հունվարին»):

Լենինի՝ պատերազմի առաջադրած հարցերի հետ մոտիկ աւերնչութեան չունեցող աշխատութեաններից պետք է հիշել 1915 թ. ավարտված և հեղափոխութեանից հետո հրապարակված բրոշյուրը—«Новые данные о законах развития капитализма в земледелии»: Պատերազմի սկզբում Լենինը գրել է մի հոդված—«Կարլ Մարքս», վորը հետո վոչ-լրիվ տպագրվել է Գրանատի հանրագիտական բառարանում: Դեռ պատերազմից շատ առաջ Լենինը լուրջ կերպով ուսումնասիրում էր փիլիսոփայութեանը, մեծ քաղվածքներ անելով Արիստոտելից, Ֆոյերբախից և առանձնապէս Հեգել-

ից ու մտադիր էր մի գիրք գրելու Հեգելի փիլիսոփայութեան և դիալեկտիկական մեթոդի մասին: Այդ աշխատանքը Լենինը շարունակում էր նաև պատերազմի ժամանակ, սակայն պատերազմի առաջադրած խնդիրները թույլ չտվին նրան իրագործել իր մտադրութեանը, և Լենինն ստիպված յեղավ հրաժարվելու իր ծրագրից:

Լենինի դիտողութեանները փիլիսոփայութեան մասին վերջերս հրատարակվեցին «Լենինյան ժողովածվում» և հսկայական դեր խաղացին փիլիսոփայական մտքի զարգացման գործում:

* * *

Հենց վոր Շվեյցարիայում ստացվեցին Փետրվարյան հեղափոխութեան առաջին լուրերը, Լենինն իսկույն նպատակ դրեց, ինչպես ել լինի, Ռուսաստան դալ. այդ վորոշումն իրագործելը չափազանց դժվար էր: Անգլո-Ֆրանսիական իմպերիալիստները վոչ մի պայմանով չէին բաց թողնի ռուս հեղափոխական ինտերնացիոնալիստներին. ժամանակավոր կառավարութեանն ել շահագրգռված չէր, վոր Ռուսաստան վերադառնան «պարտվողականները», ինչպես այն ժամանակ անվանում էին բոլշևիկներին: Պետրոգրադի Բանվորական պատգամավորական մենչևիկյան-եսերական խորհուրդն այդ հարցում խուսափողական դիրք էր բռնել: Համոզվելով, վոր հեղափոխական Ռուսաստան վերագոհնալու բոլոր «լեզալ» ճանապարհները նրա համար փակված են, և պաղտնի վերադարձի բոլոր բազմազան պլաններն անիրագործելի յեն, Լենինը վճռեց բացահայտ կերպով վերադառնալ Գերմանիայի վրայով, վորի հետ Ռուսաստանն այն ժամանակ, ինչպես հայտնի յէ, պատերազմի վիճակում էր գտնվում: Այս գործում միջնորդութեան ստանձնեցին շվեյցարական սոցիալ-դեմոկրատները Ֆ. Պլատտենի գլխավորութեամբ:

Գերմանական կառավարութեանը համաձայնվեց թույլ տալ վտարանդիներին անցնել իր յերկրով, և Լենինը մի խումբ ընկերների հետ Գերմանիայի վրայով անցավ Շվեդիա, իսկ աշխտեղից Ֆինլանդիայի վրայով՝ Պետրոգրադ, ուր նա յեկավ 1917 թ. ապրիլի 16 (3)-ին. կայարանում նրան հանդիսավոր կերպով դիմավորեցին Պետրոգրադի բոլշևիկներն ու բանվորները: Բուրժուազիան և սև-հարյուրակայինները կատաղի կամպանիա սկսեցին

Լենինի դեմ, զրպարտելի լուրեր տարածելով, թե իբր նա կապեր ունի գերմանական կառավարության հետ:

Դեռ Շվեյցարիայում գտնված ժամանակ, իր արամադրության տակ միայն աղքատիկ տեղեկություններ ունենալով ֆեդերալիզմի հեղափոխության ընթացքի մասին, Լենինն իր ուշադրով «Письма издалека» բրոշյուրում վերլուծության և յեկեկարկում տեղի ունեցած հեղաշրջումն ու նրա պատճառները և ձևակերպում և բանվոր դասակարգի խնդիրները, մատնանշելով նրան, վոր անհրաժեշտ և կոխել իշխանությունը խորհուրդներին անցնելու համար, հանուն պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության գրկատառերայի, հանուն սոցիալիզմի, ընդվորում ընդգծում և, վոր խորհրդային իշխանության և պրոլետարիատի գրկատառերայի համար մղվող պայքարում բանվոր դասակարգի դաշնակիցներն են յերկրի աշխատավոր բնակչության լայն մասաները (գլխավորապես գյուղացիությունը, նրա չքավորագույն մասը) և միջադրային պրոլետարիատը: «Այս յերկու դաշնակիցների հետ,— գրում եր Լենինը,— Ռուսաստանի պրոլետարիատը, ոգտագործելով այժմյան անցման մոմենտի առանձնահատկությունը, կարող և դնալ և կդնա սկզբում դեմոկրատական հանրապետություն ու գյուղացիության լիակատար հաղթություն նվաճելու կալվածատերերի դեմ, իսկ հետո՝ դեպի սոցիալիզմ, վորը միայն կարող և տալ պատերազմից տանջված ժողովուրդներին խաղաղություն, հաց և ազատություն»: Միաժամանակ Լենինն գգուշացնում եր սոցիալ-շովինիստների («հեղափոխական-պարտվողականների») կամ սոցիալ-դեմոկրատիայի տատանվող ելմենտների, ինչպես, որինակ, Տրոցկու խմբի հետ միանալու վորևե փորձ առաջնուց, պնդելով «իր կուսակցության աշխատանքը հետևողական ինտերնացիոնալիստական վոգով շարունակելու» անհրաժեշտության վրա:

Պետրոգրադ գալուց հետո Լենինն իսկույն հանդես և դալիս իր նշանավոր «ապրիլյան թեղիսներով», վորոնք հետո կուսակցության հետագա տակտիկայի հիմքը դարձան: Այդ թեղիսների ապավորությունը հսկայական եր:

Լենինի կողմից թեղիսներում առաջադրված հիմնական գաղափարները, վոր նա դարգացրեց «Задачи пролетариата в нашей революции» բրոշյուրում, ինչպես նաև բազմաթիվ հոդվածներում ու ձառերում, սրանք են.— ինքնակալության տապալումից

հետո իշխանությունն անցավ բուրժուազիայի ձեռքը, կապիտալիստների ձեռքը, պատերազմն առաջվա պես շարունակում և թնալ իմպերիալիստական, այդ պատճառով պրոլետարիատը չի կարող պաշտպանել այդ պատերազմը, «հեղափոխական պաշտպանողականությունն արվող ամենափոքր զիջումը դավաճանություն և սոցիալիզմին, լիակատար հրաժարում և ինտերնացիոնալիզմից»:

անհրաժեշտ և մասնաներին «համբերություն բացատրել և ապացուցել, վոր չի կարելի պատերազմը վերջացնել իսկական դեմոկրատական, վոչ-բունի հաշտությամբ, առանց կապիտալը տապալելու»:

մոմենտի առանձնահատկությունը «յերկիշխանությունն» և, այն, վոր «Ժամանակավոր կառավարության կողքին, բուրժուական կառավարության կողքին, կազմվել և դեռ թույլ, սաղմային, բայց այնուամենայնիվ անկասկած իրականում գոյություն ունեցող ու աճող մի այլ կառավարություն՝ Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդները»:

վոչ մի վրասահություն և վոչ մի ոգնություն չի կարելի ցույց տալ Ժամանակավոր կառավարությանը:

յերկրում ամբողջ իշխանությունը, ներքևից մինչև վերև պետք և պատկանի խորհուրդներին, վորոնք ներկայացնում են պետության մի նոր տիպ, վոր ցեղակից և Պարիզի կոմունային:

տվյալ շրջանում մեր կուսակցությունը փոքրամասնություն և, խորհուրդներում մեծամասնությունը պատկանում և մենշևիկներին ու եսերներին, վորոնք բուրժուազիայի ազդեցության տակ են գտնվում, պաշտպանվում են նրա կողմից և վախենում են կապիտալիստների հետ կապերը խզելուց ու ինքնուրույն կերպով իշխանությունն իրենց ձեռքը վերցնելուց:

Ամենամոտիկ ժամանակի համար «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լողունգը դեռ չի նշանակում պրոլետարիատի գրկատառերա:

այս լողունգը հավասարազոր և իշխանությունը մանր-բուրժուական դեմոկրատիայի ձեռքն անցնելու պահանջին՝ նրան բուրժուազիայից բաժանելու, հեռացնելու նպատակով: Քանի դեռ մենք փոքրամասնություն ենք, քանի դեռ ժողովրդի լայն մասաները (հատկապես գյուղացիությունը, ինչպես նաև բանվորների մի մասը) պաշտպանում և մենշևիկներին ու եսերներին, պետք և մերկացնել այդ մանր-բուրժուական կուսակցությունների համաձայնողական քաղաքականությունը, բացատրել մասնաներին նրանց սխալները և ստորին խավերում, բանվորների, զինվորների ու գյուղացիների մեջ քրտնաշան, յեռանդուն ու

համառ աշխատանքով նվաճել նրանց վստահությունը, նվաճել մեծամասնությունը խորհուրդներում:

Հետզհետե, վերջապիով զինվորների-պուլգացիների, բանվորների մասսաները փորձով համոզվեցին համաձայնողականների քաղաքականության կործանարարության մեջ, բուրժուազիայի հետ կապերը խզելու ու հեղափոխության կարևորագույն խնդիրները (հաշտություն, հող և ազատություն) լուծելու անընդունակության մեջ, խորհուրդներում մեծամասնությունն սկսեց անցնել բոլշևիկներին կողմը, և այն ժամանակ «Մամբոլ իշխանությունը խորհուրդներին» լողունգը պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության լողունգը դարձավ: Լենինի, վերը փետրվարյան հեղաշրջումից անմիջապես հետո, բանվոր դասակարգի առաջ պրոլետարական ղեկատուության, պրոլետարական հեղափոխության, սոցիալիզմի համար պայքարելու լողունգը դրեց, Լենինի ստրատեգիական պլանը հաշվի չեր առնում, վոր պետք է ժողովրդի մեծամասնությանը, առաջիկ համաձայնողականներին ու բուրժուազիային հավաստացող մեծամասնությանը համոզել, թե բոլշևիկներն իրավացի չեն, և լայն մասսաներին այն դիտակցության բերել, թե պրոլետարիատի ղեկատուության այն միակ ուժն է, վոր ընդունակ է յերկիրը հանելու իմպերիալիստական պատերազմի վիճակից ու վերջինի առաջացրած անտեսական փլուզումից: Հեղափոխության «յերկրորդ ետապի» — իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքն անցնելու խնդիրը դնելով, Լենինը միևնույն ժամանակ նախադրուշացնում էր կուսակցությանը, վոր այն ժամանակ բացահայտ փոքրամասնություն էր, «բանվորական կուսակցության» կողմից իշխանությունն անմիջապես վերցնելու տրոցկիստական խաղից, վորովհետև այդ կնշանակեր «թուշել» դեռ պատրանքներից չազատագրված գյուղացիության վրայից, վոր բնակչության մեծամասնությունն է կազմում և դեռ հավատում է բուրժուազիային ու համաձայնողականներին: Խորհրդային հանրապետության լողունգի հետ մեկտեղ Լենինն առաջադրում էր գյուղացիների կողմից կալվածատիրական հողերի անմիջական գրավման և ընդհանրապես բոլոր հողերի ազգայնացման պահանջը (չսպասելով ժամանակավոր կառավարության կողմից «խոստացած» Սահմանադիր ժողովին), ցարիզմից ճնշված բոլոր ազգությունների ու ժողովուրդների՝ Ռուսաստանից անջատվելու ազատության պահանջը, բոլոր բանկերի

ու սինդիկատների ազգայնացման և խորհուրդների կողմից նրանց վրա հսկողություն ունենալու պահանջը: Այս անտեսական ձեռնարկումները, բացատրում էր Լենինը, դեռ սոցիալիզմ չեն, բայց արդեն «մի քայլ են դեպի սոցիալիզմ», իսկ պատերազմի ստեղծած դրուժյունից չի կարելի դուրս գալ, յեթե չդնանք առաջ — դեպի սոցիալիզմը, դեպի պրոլետարական ղեկատուության: «Սոցիալիզմից դուրս — գրում էր Լենինը — մարդկությունը փրկություն չունի: պատերազմից, սովից, դարձյալ միլիոնավոր ու մի միլիոնավոր մարդկանց կորստից»: Բացի դրանից, Լենինը թեզիսներում մատնանշում էր, վոր ռուսական հեղափոխական պրոլետարիատը պարտավոր է իր նախաձեռնության մտեղծելու III Ինտերնացիոնալ, ուր չեն մտնելու վնչ սոցիալ-շովինիստները և վնչ էլ ցինտրիստները:

Մինչև Լենինի գալը, կուսակցությունն սկսելով անցումը հեղափոխության յերկրորդ ետապին, դեռ չեր կարողացել միանգամայն պարզ ու հստակ ձևակերպել սոցիալիստական հեղափոխության համար մղվող անմիջական պայքարի այն նոր խնդիրները, վերոնք կուսակցության համար անկասկածելի էյին և վորոնք ըզխում էյին բուրժուական-դեմոկրատական հեղափոխության՝ սոցիալիստական հեղափոխության վերաճելու վերաբերյալ բոլշևիկմի ամբողջ նախորդ գծից: Դեռ մինչև Լենինի գալը, կուսակցությունն իր շարքերից վռնդեց այնպիսի ոպորտունիստներին, ինչպես Վոյտինսկին, վորոնք փորձում էյին պաշտպանողական և ոպորտունիստական քաղաքականություն փաթաթել կուսակցության վրին:

Լենինի ղեկավարության մը կուսակցությունը պարզ ու հստակորեն ձևակերպում է նոր խնդիրները և ամուր ու վճռողական կերպով բռնում է սոցիալիզմի համար մղվող պայքարի ուղին:

Պետրոգրադի, իսկ հետո Համառուսական ապրիլյան կոնֆերենցիան, վորն իր նշանակության մը հավասար էր համագումարի, ամբողջապես լենինյան իդեաների հաղթանակի նշանաբանով անցան: Պետրոգրադի մայիսի 5-ի (ապրիլի 22-ի) կոնֆերենցիայում Լենինը հանդես յեկավ մի ղեկուցումով ընթացիկ մոմենտի և դեպի ժամանակավոր կառավարությունը ցույց արվելիք վերաբերմունքի մասին: Համառուսական ապրիլյան կոնֆերենցիայի մայիսի 7 — 12-ի (ապրիլի 24 — 29) նիստերում նա ղեկուցում է ըն-

Թացիկ մոմենտի, ագրաքային հարցի մասին, կուսակցութեան ձրագրի վերանայման հարցի առթիվ և մի շարք ձառերով պատերազմի, ազգային հարցի առթիվ և այլն: Այդ կոնֆերենցիաները շրջանում Լենինը պայքարում ե աջ ուղղիցիայի դեմ (կամենիով, վոր ուղորտունիստական քաղաքականութեան եր վարում դեռ Լենինի գալուց առաջ, Ռիկով), վորը փորձում եր շարժման խնդիրները սահմանափակել բուրժուական-դեմոկրատական շրջանակներով, պահանջում եր հեղափոխական պրոլետարիատի կողմից ուղեութեան ժամանակավոր կառավարութեանը «այն չափով, վոր քափով նա իսկապես պայքարում ե հին ուսմի միացորդների դեմ» (կարծես թե ապրտալիստների կառավարութեանը կարող եր լըջորեն կովել հին ուսմի դեմ), բացասարար եր վերաբերվում սոցիալիզմի համար, պրոլետարիատի դեկտատուրայի համար մղվող պայքարի անհրաժեշտութեանը: միաժամանակ Լենինը պայքար ե մղում «ձախ» ուկրոնիստների դեմ (Պյատակով), վորոնք բացատում եյին ուղղի ինքնորոշման իրավունքը: Իսկ այդ ժամանակ, քաղաքական այն մեծ ճգնաժամի բուպիյին, ապրիլի 19—21-ը (հին տոմարով), վորն ստեղծվեց շնորհիվ Միլյուկովի հայտնի հայտագրի այն մասին, թե զայնակիցների հետ կնքած պայմանագրերին ժամանակավոր կառավարութեանը հավատարիմ ե մնալու, Լենինը հաստատապես ուղղում ե կուսակցութեան Պետրոգրադի կոմիտեյի գիծը, վոր կհից «մի քիչ ավելի ձախ» գնալու տենդենց գրեւորեց (Լենինի առաջարկութեամբ կհ մասսաներին խաղաղ ցույցերի լողունդ տվեց, իսկ Պետրոգրադի կոմիտեն սովյալ պայմաններում, վորչափ հեղափոխական պրոլետարիատի կողմում դեռ ժողովրդի մեծամասնութեան չկար, ժամանակավոր կառավարութեանը տապալիլու արկածախնդրական լողունգը տվեց): Աջ ուղղիցիայի լիկվիդացիան և ձախերի «զերացատկումների» ժամանակին վերացումը, բուլշեիկների քաղաքականութեան քաղմակողմանի լուսաբանումը լայն մասսաներին, մենշեիկների ու եսերների «վատահութեան և հաշտվողականութեան մանր-բուրժուական քաղաքականութեան» քննադատութեանը դուզընթաց, կուսակցական լայն ձյուղավորված ցանցի ստեղծումը գործարաններում ու գինվորական մասերում ապահովեցին մեր կուսակցութեան ազգեցութեան արտասովոր աճումը մասսաներում, ապահովեցին մասսաների համախմբումն ու մորիլիդացիան լենինյան լողունգների ներքո: Շնորհիվ Լենինի քաղաքականութեան՝ մեր

կուսակցութեան ազգեցութեանը մասսաներում որըստորե աճում եր: Մինչև հուլիսյան որերը Լենինը շարունակ գրում եր «Правда»-յում, վորի խմբագրութեան անդամ եր (նրա այդ շրջանի փոքրիկ հողվածները «Правда»-յում հեղափոխական պայքարի խնդիրները մասսաների առաջ լուսաբանելու որինակներ են) և հաճախ հանգես եր գալիս բանվորների ու գինվորների միտինգներում ու ժողովներում: Նախահուլիսյան շրջանին են վերաբերում նաև նրա մեծ ձառերը հողի մասին, պատերազմի մասին և դեպի ժամանակավոր կառավարութեանը ցույց տրվելիք վերաբերմունքի մասին Գյուղացիական պառլամալորների համառուսական համադումարում, հունիսի 4-ին (մայիսի 22-ին) և իրենց մեծամասնութեամբ դեռ մենշեիկների ու եսերների հետեից ընթացող Պորհուրդների 1-ին համադումարում, հունիսի 17-ին և 22-ին (4 և 9): Այդ շրջանի բոլոր քաղաքական կամպանիաները (խորհուրդների, շրջանային դումաների ընտրութեաններ և այլն) և Պետրոգրադի պրոլետարիատի բոլոր մասսական շարժումները Լենինի անմիջական ղեկավարութեամբ եյին ընթանում:

Յերը սկսվեցին հուլիսյան անցքերը, Լենինը, վոր այդ ժամանակ հիփանդութեան պատճառով Պետրոգրադին մոտիկ մի գյուղում եր գտնվում, իսկույն յեկավ մայրաքաղաք, վորպեսզի ղեկավարի Պետրոգրադի պրոլետարիատի տարերայնորեն առաջացած շարժումը և նրան առավելագույն կազմեկերպված բնույթ տա: Այդ մոմենտին իշխանութեանը վերցնելը բուլշեիկների կողմից, (վորոնց հետեից եր գնում Պետրոգրադի համարյա ամբողջ պրոլետարիատը և Պետրոգրադի կայադորը, Լենինը վաղաժամ եր համարում, վորովհետև մեր կուսակցութեանը դեռ իր կողմում չունեի յերկրի ամբողջ բանվոր գասակարգի ու ժողովրդի մեծամասնութեանը: Պետրոգրադի բանվորների հուլիսյան յեյուլթը, վոր ծավալվեց իշխանութեանը Պորհուրդների ձեռքը վերցնելու լողունգով, շնորհիվ մենշեիկների ու եսերների լիակատար ու բացահայտ կերպով հակահեղափոխական բուրժուադիայի հողմն անցնելուն և նրանց կողմից հետադիմական գորքեր Պետրոգրադ կանչելու, վերջացավ հեղափոխական բանվորների և գինվորների ժամանակավոր պարտութեամբ: Շարժումը կազմալուծելու և բարոյալքելու համար բուրժուադիան գործի յե գնում հետախուզական բաժնի և Գ. Ալեքսիսկու հնարած կեղտոտ գրպարաիչ «փառաթուղթն» այն մասին, թե Լենինը, իբր թե գերմանական

լրտես ե, կաշառված գերմանական կառավարութեան կողմից, եւ գործում ե հոգուտ գերմանական իմպերիալիզմի շահերի: Լենինի ու բոլշեիկների դեմ ակալած հալածանքն այդ շրջանում հասնում ե իր գագաթնակետին: Ժամանակավոր կառավարութեանը հրաման ե տալիս Լենինին ձերբակալելու: Կերենսկու յունկերների բանդաները փնտռում են հեղափոխական բանվորների առաջնորդին, վորպեսզի նրան սպանեն: Այդ պայմաններում Լենինը կուսակցութեան ԿԿ վորոշմամբ անցնում ե անլեգալ վիճակի: Միջոցի որ նա թաքնվում ե Պետրոգրադի շրջակայքում, բանվոր Ս. Ալիլյուշիվի բնակարանում, հետո Սետորարեցկի մոտերքը (Պետրոգրադից վոչ հեռու), բանվոր Ն. Յեմելյանովի մոտ, իսկ մի որից հետո յեւ ալդոեդից հեռանում ե ապրում ե Ռազլիվի կայարանից միջոցի վերստ հեռու գտնվող մի վրանում, վորտեղ մնում ե մոտ մեկուկես ամիս: Սեպտեմբերի սկզբին Լենինը գաղաւի կերպով անցնում ե Ֆինլանդական սահմանից (վորպես շոգեկառքի հնոցալան) ե հաստատվում ե Հելսինգֆորսում, վորտեղ անլեգալ ապրում ե Ֆինլանդական վստահելի սոցիալ-դեմոկրատների մոտ:

Ընդհատակյա վիճակում գտնվելով, Լենինը կապ ե պահպանում ԿԿ հետ ե շարունակում ե յեռանդով աշխատակցել կուսակցութեան ղեկավար որդանում, վորը շարունակում ե գնահատան անուններով լույս տեսնել ցրիվ տված ու փակված «Правда»-յի փոխարեն: Այդ շրջանում գրած մի շարք դիւրեկտիվ հոդվածներում ու բրոշյուրներում («Լոգոնդների առթիւ», «Մահամարդրական պատրանքների մասին», «Հեղափոխութեան դասերը», «Սպառնացող աղետը ե ինչպես կովել նրա դեմ», «Ռուսական հեղափոխութեանը ե քաղաքացիական պատերազմը», «Հեղափոխութեան խնդիրները», «Ճգնաժամը հասունացել ե», «Կպահեն արդյոք բոլշեիկները պետական իշխանութեանը»—վերջին հոդվածը տպվեց «Провсечение» ժուռնալում) Լենինը բնութագրում ե այն դրութեանը, վորն ստեղծվել եր յերկրում հուլիսյան որերի կապակցութեամբ, ե մասսաներին ու կուսակցութեանը նախապատրաստում ե իշխանութեան համար զինված կռիվ մղելու անխուսափելիութեանն ու անհրաժեշտութեանը: Հենց առաջին որերին հուլիսյան ճգնաժամից հետո, վոր հեղափոխութեան ընթացքում բեկման մոմենտ եր ճշանակում, Լենինը ցույց եր տալիս, վոր հեղափոխութեան գարգացման «խաղաղ» շրջանը վերջացել ե եւ վոր այժմ, յերբ կադետների կուսակցութեան գլխավորութեամբ

հակահեղափոխութեանը հաղթել ե, չի կարելի իշխանութեանը վերցնել առանց քաղաքացիական կռիւի, առանց նոր, «յերկրորդ» հեղափոխութեան: Քայլ առ քայլ մերկացնելով մասսաների առաջ մենշեիկների ու եսերների դավաճանական դերը հեղափոխութեան մեջ, վորոնք բանվոր դասակարգին ե գյուղացիութեանը տանում եյին դեպի յենթարկում կապիտալիստներին, հատկապես ցույց տալով գյուղացիներին հող ստանալու լիակատար անհուսալիութեանը նրանց համար, «քանի դեռ եսերների ու մենշեիկների կուսակցութեանները չեն զրկվել ժողովրդի վստահութեանից», քանի դեռ իշխանութեանը չի անցել պրոլետարիատի ձեռքը,— Լենինը միաժամանակ խնամքով ու բազմակողմանի կերպով մշակում եր ապագա հեղափոխական կառավարութեան տնտեսական ծրագիրը, առաջադրելով վորպես ամենագլխավոր միջոցներ՝ բոլոր բանկերի միավորումը մի բանկի մեջ, բանկերի ազգայնացում, սինդիկատների, այսինքն՝ կապիտալիստների խոշորագույն մենաշնորհային միութեանների ազգայնացում (նավթային, ածխային, մետաղագործական, շաքարի ե այլ սինդիկատներ)։ առեւտրական գաղտնիքի վերացում, սպառման կանոնավորում ե այլն: «Կամ կործանվել կամ հասնել ու անցնել առաջավոր յերկրներին»,— այսպես վորոշեց Լենինը բանվոր դասակարգի խնդիրները պատմական ամբողջ մերձավորագույն շրջանի համար: Նորից ու նորից ընդգծելով, վոր «չի կարելի առաջ գնալ XX դարի Ռուսաստանում, վորը հանրապետութեան ու դեմոկրատիզմ ե նվաճել հեղափոխական ճանապարհով, յեթե չգնանք դեպի սոցիալիզմ, յեթե քայլեր չանենք դեպի այն»:

Ընդհատակյա վիճակում ել Լենինը ղեկավարում ե կուսակցութեան Պետրոգրադում կիսալեգալ կերպով գումարված 6-րդ համագումարի աշխատանքները ե շատ ե աշխատում կուսակցական ծրագրի հարցերի վրա. ծրագրով նա բուռն կերպով զբաղվել եր սկսել դեռ հուլիսյան որերին նախորդող շրջանում («Նյութեր կուսակցական ծրագրի վերանայման մասին», ե «Կուսակցական ծրագրի վերանայման առթիւ»):

Հելսինգֆորսում Լենինն ավարտում ե իր «Государство и революция» նշանավոր գիրքը, վորի մեջ վերականգնում ե նոր բարձրութեան ե հասցնում մարքսիզմի ուսմունքը պետութեան մասին, վոր մասամբ մոռացվել, մասամբ խեղաթյուրվել եր ոպորտունիստների, հատկապես Կուսցկու կողմից: Այս գրքի վրա, վոր

հսկայական թեորիական հետաքրքրութիւնն և ներկայացնում և գործնական քաղաքական բացառիկ նշանակութիւնն ունի հայնուն իր դիկտատուրայի պայքարող կամ այն իրականացնող պրոլետարիատի համար, Լենինն սկսել եր աշխատել դեռևս արտասահմանում, Փետրվարյան հեղափոխութեան նախորդակին: Յուլյո տալով, վոր պետութեանն առաջանում է վորպէս զասակարգերի հակասութեանների անհաշտութեան արդեւումը, վոր ինչպիսի «գեմոկրատական» կամ «պառլամենտական» ձև ել ընդունի, իրականութեան մեջ նա բուրժուազիայի ձեռքին, փոքրամասնութեան ձեռքին գործիք է շահագործվողներին ու աշխատավորներին ճշնշելու համար, Լենինը հիմնովելով Պարիզյան կոմունայի փորձի առանձնահատկութեանների վրա, վոր գումարկել է Մարքսը, ցույց է տալիս, վոր բանվոր զասակարգի խնդիրն այն է, վոր նա «կոտրի», «ջարդի» բուրժուական, բյուրոկրատական-գինվորական պետական մեքենան և նրա տեղը ստեղծի իր սեփական պրոլետարական պետութեւնը: «Բուրժուական պետութեւնը պրոլետարական պետութեամբ փոխարինելն անհնար է առանց բռնի հեղափոխութեան»: Վորինք են պրոլետարական պետութեան խնդիրները: «Պրոլետարիատին անհրաժեշտ է պետական իշխանութեւնը, ուժի կենտրոնացված կազմակերպութեւնը, բռնութեան կազմակերպութեւնը՝ թէ շահագործվողների դիմադրութեւնը ճնշելու, թէ բնակչութեան հսկայական մասնային—գյուղացիութեանը, մանր բուրժուազիային, կիսապրոլետարներին—դեկավարելու, սոցիալիստական տնտեսութեւնը «կարգի բերելու» գործում»: Վորպէս իշխող զասակարգ կազմակերպված պրոլետարիատը պետք է «ամբողջ ժողովուրդը դեպի սոցիալիզմ ցանի, դեկավարի ու կազմակերպի նոր հասարակարգ, բոլոր աշխատավորների ու շահագործվողների ուսուցիչը, դեկավարը, առաջնորդը լինի նրանց հասարակական կյանքը կառուցելու գործում առանց բուրժուազիայի, բուրժուազիայի դեմ»: Պրոլետարիատի դիկտատուրան, վոր անհրաժեշտ է կապիտալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում, արդեն պետութեւն չէ բառի բուն իմաստով, վորչաի նա ժողովրդի հսկա մեծամասնութեան շահերը, աշխատավորութեան շահերն է ներկայացնում: «Պրոլետարիատի դիկտատուրան... առաջին անգամ դեմոկրատիա յետալիս ժողովրդի համար, մեծամասնութեան համար, փոքրամասնութեանը՝ շահագործողներին անհրաժեշտաբար ճնշելու հետ միասին»: Մարքս-

յին հասարակութեան արտադրողական ուժերի զարգանալով և զասակարգերի բաժանման վերացումով... պետութեւնը մահանում է, դառնում է ավելորդ, անհարկավոր: Քննելով կապիտալիստական հասարակարգից ծագող կոմունիստական հասարակարգի զարգացման պրոցեսը, Լենինն իր գրքում տալիս է նաև ապագա կոմունիստական հասարակարգի ու նրա յերկու հանդերձական փուլերի (ամենաստորինը—«սոցիալիզմ» և ամենաբարձրը—«կոմունիզմ») ամենաեյական գծերի արտակարգ արժեքավոր վերլուծութեւնը:

Հարկադրված լինելով հեռու գտնվելու բանվոր զասակարգի անմիջական կռիւի ապարեզից, Լենինը միաժամանակ ուշադիր հետևում է շարժման ընթացքին, մանրամասնորեն ուսումնասիրելով մասսաների տրամադրութեւնը և վորստով հեղափոխական աշխի նոր բարձրացման նշանները: Կոմունիզմի հակահեղափոխական խռովութեւնը ճնշելուց հետո, նրանից հետո, յերբ մեր կուսակցութեւնը մեծամասնութեւն է ստանում Պետրոգրադի և Մոսկվայի Բանվորական պատգամավորական խորհուրդներում, Լենինը կուսակցութեան առաջ է դնում՝ անմիջապէս դիմված ապստամբութեւն նախապատրաստելու և կազմակերպելու խնդիրները: «Բոլշևիկները պետք է վերցնեն իշխանութեւնը»—այսպէս է կոչվում Լենինի այն նամակը, վորով նա դիմեց մեր կուսակցութեան կենտրոնական, Պետրոգրադի ու Մոսկվայի Կոմիտեներին սեպտեմբերի 26—27-ին (13—14-ին):

Այդ մոմենտից ել սկսվում է Լենինի իր զարմանալի կրքոտութեամբ, անհողողողութեամբ և հիմնավորումների բազմակողմանիութեամբ աննախընթաց «ազիտացիան» հողուտ գինված ապստամբութեան: Հոկտեմբերի 12-ին (սեպտեմբերի 29-ին) Լենինը կատեգորիկ կերպով պահանջում է անհապաղ «իշխանութեւնը վերցնել», «անմիջապէս ապստամբութեւն բարձրացնել», անողոր խարաղանելով ապստամբութեւնն ուշացնելու կամ հետաձգելու ամեն մի տրամադրութեւն: «Դանդաղել հանցագործութեւն է», գրում է Լենինը հոկտեմբերի սկզբին»։ Եթէ չի կարելի վերցնել իշխանութեւնն առանց ապստամբութեան, պետք է անմիջապէս ապստամբութեան դիմել: «Դանդաղել հավասարադր է մահվան», գրում է Լենինը հոկտեմբերի 21 (8)-ին:

Դեպքերի կենտրոնին, հեղափոխական Պետրոգրադին ավելի մոտ լինելու համար Լենինը գալիս է Վիբորգ (հին տոմարով՝

սեպտեմբերի վերջին), իսկ հետո, հոկտեմբերի սկզբին անլեզար կերպով հաստատվում է Պետրոգրադի ծայրամասում: Հոկտեմբերի 23-ին և 29-ին (10-ին) կոնսպիրատիվ պարագաներում տեղի յե ունենում է նիստը, վորտեղ Լենինը հանդես է գալիս վորպես զեկուցող և բանաձև է անցկացնում հոգուտ զինված ապստամբության: Կի տաս անգամը (Լենին, Սվեդզլով, Ստալին, Տրոցկի, Բուրնով, Սոկոլնիկով, Լոմով, Կոլլոնտայ, Ջերժինսկի, Ուրիցկի) քվեարկեցին թեր, Կի յերկու անգամը (Կամենևի, Զինովյեվ)՝ դեմ: Նույն նիստում ապստամբությունը զեկավարելու համար քաղաքական բյուրո յե ստեղծվում Լենինի մասնակցությամբ: Միքսնի որ անց, հոկտեմբերի 29 (16)-ին կայացավ Կի 2-րդ նիստը, այս անգամ կուսակցության մի շարք ամենապատասխանատու աշխատողների մասնակցությամբ: Զինված ապստամբության մասին զեկուցեց Լենինը: «Նրա ճառը, վոր մոտ յերկու ժամ տևեց,—զեկուցումից ստացած իր տպավորությունն է հաղորդում ժողովին մասնակցողներից մեկը,—ամենաբարձր ուշադրությամբ եր լսվում: Բոլորը լսում էին, կարծես շունչը պահած: Նա վերջացրեց, միքսնի վայրկյան բացարձակ լուություն տիրեց: Բոլորը կարծես հիպնոսի ազդեցության տակ էին... Շատ եմ լսել յես նրա զեկուցումներն ու ճառերը՝ նրա հետ ունեցած իմ 20 տարվա ծանոթության ընթացքում,—ավելացնում է նույն ընկերը—բայց այդ բոլորից ամենալավն այս զեկուցումն էր»: Ժողովը հավանություն տվեց Կենտկոմի հոկտեմբերի 23 (10)-ի վճռին և վորոշեց. «բոլոր կազմակերպություններին, բոլոր բանվորներին ու զինվորներին զինված ապստամբության ամենաբազմակողմանի ու ամենաուժեղ պատրաստման «կոչ անել»: Նորից ու նորից պնդելով ամենաարագ կերպով զինված ապստամբություն կազմակերպելու վրա, Լենինը միաժամանակ խարազանող քննադատության է յենթարկում Կամենևիի և Զինովյեվի ոպորտունիստական դիրքը և պահանջում է կուսակցությունից նրանց վտարել վորպես «շարեյկերեխներին» (Կամենևին ու Զինովյեվը հանդես յեկան վոչ-կուսակցական մամուլում ապստամբության դեմ, Կի վորոշման դեմ): Նոյեմբերի 6-ի (հոկտեմբերի 24-ի) յերեկոյան Լենինը, վոր ամենասերտ կապ եր պահպանում կուսակցության զեկավար աշխատողների հետ, նրանց կանչելով իր մոտ՝ ապստամբության հետ կապված զանազան հարցերի մասին խորհրդակցելու և քննարկելու, մայրաքաղաքի դրությունը պարզելու և ցուցումներ

տալու համար, նորից նամակ է գրում Կի անդամներին, պահանջելով անհապաղ զինված ապստամբություն սկսել. «Ամբողջ ժող համոզում եմ ընկերներին, վոր այժմ ամեն ինչ մաղից է կախված, վոր հերթի յեն դրված այնպիսի հարցեր, վորոնք խորհրդակցություններով, համազումարներով (թեկուզ նույնիսկ խորհուրդների համազումարներով) չեն վճռվում, այլ բացառապես ժողովրդի միջոցով, մասսայի միջոցով, մասսայի զինված կռիվով... Մպասել չի կարելի: Պետք է, ինչ ել վոր լինի, այսօր, յերեկոյան, այսօր զիշերը բանտարկել կառավարությանը, զինաթափ անելով (հաղթելով, յեթե կղիմադրեն) յունկերներին և այլն: Զի կարելի սպասել: Կարող ենք ամեն ինչ կորցնել: Կառավարությունը տատանվում է: Պետք է նրան ջախջախել՝ ինչ ել վոր լինի»: Հետո, մի քանի ժամ անցած, Լենինը դուրս է գալիս իր անլեզար ապաստարանից և, շորերը փոխած, անցնում է Մոլոնի ինստիտուտ, վորպեսզի այստեղից անմիջականորեն զեկավարի զինված ապստամբությունը:

Ապստամբության գործնական իրականացումը ռազմահեղափոխական կոմիտեյի վրա յեր զրված: Հոկտեմբերի 24—25-ի վճռական որերին ու ժամերին, այլև ավելի ուշ, Պետրոգրադի վրա Կերենսկու հարձակումները լիկվիդացիայի յենթարկելու շրջանում Լենինը վոչ միայն քաղաքականապես զեկավարում եր ռազմահեղափոխական կոմիտեյի գործունեյությունը, այլև ամենամոտ մասնակցությունն ուներ նրա ռազմական-ոպերատիվ ու գործնական պլանների ու ձեռնարկումների մշակման ու իրագործման մեջ:

Նոյեմբերի 7-ին (հոկտեմբերի 25-ին), հեղաշրջման որը, յերբ պրոլետարական դիկտատուրան հաստատվեց Ռուսաստանում, Լենինն առաջին անգամ հուլիսյան որերից հետո հրապարակով հանդես է գալիս Պետրոգրադի բանվորների առաջ Պետրոգրադի խորհրդում արտասանած իր ճառով: Մյուս որը խորհուրդների 2-րդ համազումարում Լենինի զեկուցման առթիվ ընդունվում են հաշտության և հողը գյուղացիներին հանձնելու վերաբերյալ պատմական զեկրետները: Համազումարն ստեղծում է Բանվորա-գյուղացիական կառավարություն—ժողովրդական կոմիսարների խորհուրդ Լենինի նախագահությամբ. այդ պատում Լենինը ֆուում է մինչև իր մահը:

Հեղաշրջմանը հաջորդող առաջին որերը, յերբ լարված աշ-

խատանք եր կատարվում խորհրդային իշխանությունը կազմա-
կերպելու, ժամանակավոր կառավարության կողմնակիցների հա-
կանդափոխական յեղույթները ճշդելու համար, վտանգավոր ճեղ-
նաժամ ե ստեղծվում կուսակցության ԿԿ-ում. Կամենևվը, Զի-
նովյեվը, Ռիկովը և ԿԿ ու ժողովրդային անդամ միջանի ուրիշ
ընկերներ, վորոնք պնդում էին, վոր պետք ե հրաժարվել դիկ-
տատուրայից և մենշևիկների ու եսերների հետ միատեղ կռախ-
ցիոն կառավարություն կազմել, նոյեմբերի 17 (4)-ին դուրս յե-
կան ԿԿ և ժողովրդական Կոմիտեների խորհրդի կազմից (դա-
սալիքների կազմումն եր նաև Ա. Շլյապնիկովը), վորովհետև Լե-
նինի ղեկավարությամբ գործող ԿԿ հրաժարվեց իշխանության
հարցում վորևե գիշում անելուց: Կուսակցությանը և բոլոր աշ-
խատավորներին ուղղված կոչում Լենինը նշավակեց այդ ընկեր-
ների քայլը՝ վորպես դասակարգություն: Կուսակցությունը և բան-
վոր դասակարգը վճռականապես պաշտպանեցին Կենտրոնական
Կոմիտեին:

Կամենևվի, Զինովյեվի, Ռիկովի՝ հոկտեմբերին բռնած դիր-
քը պատահական չիւ. ժողովրդական տնտեսության վերակա-
ռուցմանն անցնելիս (1925—1927 թ. թ.) Կամենևվը և Զինովյեվը
ճրոջկու ղեկավարությամբ կատաղի պայքար էին մղում կու-
սակցության և նրա Կենտկոմի դեմ, պրոպագանդ անելով, թե
մենակ մեր յերկրում սոցիալիզմ կառուցելն անհնարին ե:

1928—1929 թ. թ., այն շրջանում, յերբ կուսակցությունն
անցնում եր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուց-
ման և համատարած կոլեկտիվացման բազայի վրա գյուղում կու-
լակությունը վորպես դասակարգ վերացնելուն, Ռիկովը, Բուխա-
րինի հետ միասին ղեկավարելով աջ ուղղիցիան, պայքարում ե
ինդուստրացման՝ կուսակցության կողմից նշված տեմպերի, գյու-
ղատնտեսության կոլեկտիվացման և յերկրում կապիտալիստական
տարրերի վրա ծավալուն հարձակում գործելու դեմ:

Հսկայական նշանակութուն տալով գյուղացիության կողմից
պրոլետարիատին պաշտպանելուն, հոկտեմբերյան որերի շրջա-
նում Լենինը շատ ե աշխատում բացատրելու գյուղացիությանը
մեր կուսակցության դիրքը, ինչպես իր հոգվածներում, այնպես
եւ գյուղացիական պատգամավորների համագումարում արտաա-
նած իր ճառերում:

Լենինը բացատրում ե գյուղացիներին, վոր «վարձու բան-

վորները և աշխատավոր ու շահագործվող գյուղացիների միջև
շահերի տարբերությունն չկա: Սոցիալիզմը լիովին կարող ե բա-
վարարել թե մեկի և թե մյուսի շահերը: Միայն սոցիալիզմը կա-
բող ե բավարարել նրանց շահերը»: Քանիվոր այդ շրջանում
գյուղացիության վորոշ մասը գնում եր ձախ եսերների հետեից,
Վ. Իլյիչը մի վորոշում ե անցկացնում, վորի համաձայն ձախ
եսերների միջանի ներկայացուցիչներ մտնում են կառավարու-
թյան կազմի մեջ: Միաժամանակ Լենինը ղեկավար մասնակցու-
թյուն ե ունենում մի շարք ղեկերեսների հրատարակության
մեջ, վորոնք վերաբերում էին նոր խորհրդային կարգի ամենա-
տարբեր կողմերին (դասերի վերացում, բանկերի ազգայնացման
գեկրետ, արտադրության վրա բանվորական վերահսկողություն
նշանակելու գեկրետ՝ վորպես գործարանները խորհրդային պե-
տության սեփականություն դարձնելու առաջին քայլ, Ֆինլան-
դիայի, Ուկրայինայի ինքնորոշման իրավունքի ճանաչում և
այլն):

1918 թ. հունվարի սկզբին բացվեց Սահմանադիր ժողովը,
վոր հրավիրված եր դեռ հին ցուցակներով և տվյալ մոմենտին
մասսաների արամադրությունը չեր արտահայտում: Հենց պարզ-
վեց, վոր Սահմանադիր ժողովը, վորտեղ մեծամասնությունը
պատկանում եր աջ եսերներին ու մենշևիկներին, հրաժարվում ե
խորհրդային իշխանությունը ճանաչելուց և իրեն հակադրում ե
պրոլետարիատի գիկտատուրային, Լենինի նախաձեռնությամբ
1918 թ. հունվարի 19 (6-ի) գեկրետով ժողովը ցրվում ե, միայն
մեկ որ կյանք ունենալով: Դրանից քիչ առաջ, հունվարի
14 (1-ին) կատարվում ե առաջին մահափորձը Լենինի դեմ. տեո-
րիստները գնդակոծում են Լենինի ավտոմոբիլը, սակայն Վ. Ի.
անվնաս ե մնում:

1918 թվի առաջին ամիսներում Լենինի ուշադրությունը
կենտրոնացած ե գերմանական իմպերիալիզմի հետ պատերազմե-
լու կամ հաշտություն կնքելու հարցի վրա: Յերբ գերմանացիներ
հետ վարած հաշտության բանակցություններն ապարդյուն
անցան, և կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը
կանգնած էին հարցն այս կամ այն ուղղությամբ վճռելու ան-
հրաժեշտության առաջ, Լենինը, վոր ուշադրությամբ հետևում եր
մեր բանակի արամադրություններին և համոզվել եր, վոր նա
բոլորովին անմարտունակ ե, կատեգորիկ կերպով առաջարկում

ե անհապաղ ստորագրել անեքսիոնիստական ծանր հաշտութիւնը «գաղար» ստանալու համար, վորն անհրաժեշտ եր «շունչ քաշելու», ուժեր հավաքելու և պաշտպանութիւն կազմակերպելու համար, յերկրի ներսում բուրժուազիայի դիմադրութիւնը վերջնականապէս լիկվիդացիայի յենթարկելու համար և «Ռուսաստանը վերակառուցելու համար պրոլետարիատի դիկտատուրայի հիման վրա, բանկերն ու խոշոր արդյունաբերութիւնն ազգայնացնելու հիման վրա, քաղաքի և մանր գյուղացիների գյուղական սպառողական ընկերութիւնների միջև նախուրալ արդյունափոխանակութեան պայմաններում»։ «Այդպիսի վերակառուցումը,— գրում եր Լենինը,— սոցիալիզմն անպարտելի կդարձնի Ռուսաստանում և ամբողջ աշխարհում և միաժամանակ տնտեսական ամուր բաղա կստեղծի բանվորա-գյուղացիական հզոր Կարմիր բանակի համար»։ Լենինի բռնած դիրքը, վորը պաշտպանում եյին Ստալինը, Զինովյեւը և ուրիշները, սկզբում ամենաուժեղ դիմադրութեան հանդիպեց թե Կի մեծամասնութեան կողմից՝ Տրոցկու գլխավորութեամբ, վորոնք գտնուած եյին, վոր գերմանացիները չին հարձակվի, և պաշտպանում եյին «պատերազմ չենք մղում, հաշտութիւն չենք կնքում» լողունգը, և թե Բուխարինի կողմից, վոր պահանջում եր անհապաղ «հեղափոխական պատերազմ» հայտարարել գերմանական իմպերիալիստներին։

Կուսակցութեան կազմակերպութիւնների մի մասը նույնպէս հաշտութեան դեմ արտահայտվեց։ Կենտկոմի մեծամասնութեան կողմից հաշտութիւնն ստորագրելուց հրաժարվելու և Բրեստ-Լիտովսկում բանակցութիւնները խզվելու հետեանքով գերմանացիներն սկսեցին իրենց հարձակումը, և ուսական բանակը խուճապային փախստի դիմեց ամբողջ ձախտով։ Խորհրդային հանրապետութիւնն անմիջապէս կանգնեց կործանման առաջ։ Միայն զբաղեց հետո Լենինին հաջողվում ե, Կի և Ժողկոմխորհի կազմից դուրս գալու սպառնալիքով, Կի-ում անցկացնել հաշտութիւնն ստորագրելու վորոշումը, վորը հետո հաստատվեց կուսակցութեան 7-րդ համագումարում (1918 թ. մարտին), վորտեղ Լենինը զեկուցեց պատերազմի և հաշտութեան հարցի մասին։ Հաշտութիւն կնքելու հետեանքով ստացված «գաղարը» փրկեց Խորհրդային հանրապետութիւնը կործանումից, վոր անխուսափելի յեր հեղափոխական պատերազմի դեպքում։

Հաշտութիւն կնքելուն ընթացակից եր կուսակցութեան

ծանր ճգնաժամը, վորն առաջացավ Լենինի քաղաքականութեան դեմ Բուխարինի գլխավորութեամբ «ձախ» կոմունիստների մղած պայքարի հետեանքով։ Իսկ կուսակցական կազմակերպութիւնների մեծամասնութիւնը, բանվորական ու գյուղացիական լայն մասսաները, հաշտութեան հարցում կանգնած եյին Լենինյան դիրքերում։ Կուսակցական կազմակերպութիւնները և բանվոր դասակարգն ընդհանուր առմամբ շուտով սթափվեցին հեղափոխական Ֆրադի արեւոյցիչ ներգործութիւնից և ընդունեցին Լենինյան քաղաքականութեան ճշտութիւնը։ Հաշտութիւնն ստորագրելու առթիվ սկսված առանձնապէս սուր պայքարի շրջանին են վերաբերում (1918 թ. հունվար—մարտ) Լենինի մի շարք նշանավոր ճառերն ու հոդվածները, վորոնցով նա հիմնավորում ե հաշտութիւնը և մերկացնում ե հեղափոխական պատերազմի կողմնակիցների դիրքի կործանարարութիւնն ու մանր-բուրժուականութիւնը։ («Թեզիսներ անմիջապէս անջատ ու աննեքսիոնական հաշտութիւն կնքելու հարցի առթիվ», «Հեղափոխական Ֆրադի մասին», «Զտման մասին», «Հաշտութիւն, թե պատերազմ», «Դժբախտ հաշտութիւն», «Ծանր, բայց անհրաժեշտ դաս», «Տարորինակն ու հրեշավորը», նաև Կի նիստերում, կուսակցութեան 7-րդ համագումարում և Խորհուրդների 4-րդ արտակարգ համագումարում արտասանած ճառերը)։

Հանրապետութեան արտաքին-քաղաքական դրութեան լարվածութիւնը 1918 թ. առաջին ամիսներում Լենինին թույլ եր տալիս մասամբ միայն զբաղվել տնտեսական շինարարութեան հարցերի մշակմամբ։ Յերկրի ստացած գաղարը հնարավորութեան տվեց Լենինին իր ուշադրութիւնը կենտրոնացնելու յերկրի սոցիալիստական վերակազմութեան պրոլեմների վրա։ Ապրիլին Լենինը գրում ե մի մեծ բրոշյուր-հոդված՝ «Очередные задачи советской власти» և հենց այդ թեմայի վերաբերյալ ընդարձակ զեկուցումով ել հանդես ե գալիս ապրիլի 29-ին Համագումարական Կենտգործկոմի նիստում։ Հոդվածում ու ճառի մեջ Լենինը տվեց սոցիալիզմի տնտեսական շինարարութեան մի ամբողջ պլան—կազմակերպել արտադրութեան ու բաշխման հաշվառում և վերահսկողութիւն, ոգտագործել բուրժուական մասնադետներին, բարձրացնել աշխատանքային կտրգապահութիւնը և աշխատանքի արտադրողականութիւնը, կազմակերպել մրցակցութիւն, մացնել գործավարձ, իրագործել միանձնյա ղեկավարութիւն և այլն։

Հատկապես մեծ ուշադրություն է նվիրում Լենինը «պետական կապիտալիզմին» գաղափարին, վերջ յենթադրում էր վերոշ պայմաններում ու խորհրդային իշխանության հսկողության տակ կապիտալիստներին գրավել խոշոր և խոշորագույն արտադրություն կազմակերպելու ասպարեզ և վերջ «մի քանի դեպի առաջ ելինք մեր խորհրդային հանրապետության» ներկա դրության համեմատությամբ, նպաստելով այն նյութական-արտադրական բազայի լայնացմանն ու ամրացմանը, վեր անհրաժեշտ է սոցիալիզմի կառուցման համար: Զուգընթացաբար Լենինը մերկացնում էր «ձախ-կոմունիստական» ոպոզիցիայի մանր-բուրժուական բնույթը, վերին նա հետո, մայիսին, վերջնական հարված է հասցնում «О левом ребячестве и мелкобуржуазности» աշխատության մեջ:

Լենինի ձեռքով դեռ ապրիլ-մայիս ամիսներում մշակված և քաղաքացիական պատերազմի պատճառով հետաձգված սոցիալիստական ձեռնարկումների պլանը վերոշ չափով նախատեսումն էր այն քաղաքականության, վերին ավելի ուշ, 1921-1922 թ. թ. կիրառվեց նոր տնտեսական քաղաքականության անվան տակ և վերջ վերոշ սահմաններում վերականգնում էր Լենինի 1918 թ. առաջին կեսի գաղափարները:

1918 թ. սկզբում, «գաղաթի» շրջանում Լենինն առաջադրում է Կարմիր բանակ ստեղծելու գաղափարը և շատ ու համառ աշխատանք է կատարում այդ ուղղությամբ: Դադարին հաջորդեց միջանի տարի տևող (1918—1920 թ. թ.) քաղաքացիական պատերազմի յերկար շրջանը. հանրապետության դրությունը միջանի տնգամ սպառնալից դարձավ, նրա կործանումն անխուսափելի յերթվում: Ամբողջ քաղաքացիական պատերազմի ընթացքում Լենինը ղեկավարում է հանրապետության պաշտպանության պործը, վրձնական մասնակցություն ունենալով վոչ միայն ռադամ-քաղաքական, այլև զուտ օպերատիվ գերեկտիվների մշակման մեջ, շարունակ նյութեր պահանջելով բանակի կացություն մասին, որը-որին հետևելով ձակառների դրությունը, գինվորական իշխանությունների ուշադրությունը դարձնելով առավել վտանգավոր ճակատամասերի ու կետերի վրա, միջոցներ ձեռք առնելով զանազան ճակատամասերի դրությունը շտկելու համար: Պահպանվել է քաղաքացիական պատերազմի շրջանին վերաբերող Լենինի ընդարձակ ազգական գրադրությունը, վեր ցույց է տալիս նրա բացառիկ

դերը խորհրդային հանրապետության պաշտպանությունը կազմակերպելու գործում:

Քաղաքացիական պատերազմի ամբողջ շրջանում և ընդհանրապես խորհրդային իշխանության գոյության ամբողջ ժամանակամիջոցում Լենինը շարունակ հսկայական ուշադրություն էր դարձնում միջազգային դրության վերլուծության, համաշխարհային ուժերի և նրանց հարաբերության փոփոխությունների հաշվառման վրա, մանրամասն ուսումնասիրելով ու հետևելով միջազգային հեղափոխության զարգացմանն ու հասունացմանը և շատ մեծ նշանակություն տալով պրոլետարիատի կողմից այն հակաություններն սղտագործելուն, վեր գոյություն ունեն կապիտալիստների բանակում: Բրեստ-Լիտովսկի հաշտությունը կնքելուց հետո, չնայելով նրա ամբողջ անկայունությանը, Լենինը խորհրդային հանրապետության կարևորագույն խնդիրն էր համարում «մանեվրելու» տակալիկ, «դադար» պահպանելու և յերկարացնելու տակալիկ կիրառելու ռժեր հավաքելու և կուտակելու համար: Քաղաքացիական պատերազմի շրջանում, յերբ գնալով ծավալվում էյին ինտերվինցիան, հակահեղափոխական ապստամբություններն ու խռովությունները (հակահեղափոխական հեղաշրջում Ուկրայինայում, չեխոսլովակների ապստամբությունը, Հյուսիսի գրավումն անգլիացիների ու Ֆրանսացիների կողմից, մի շարք քաղաքներում ծագած սպիտակ-գվարդիական ապստամբությունը, Կովկասի խոշոր կենտրոնների գրավումը ղաշնակիցների կողմից, ղաշնակիցների ղորքերի ափ իջնելը Ռուսաստանի հարավում և ոյլն), արտաքին ու ներքին պարագաները չափազանց արագություն փոխվում էյին անհապաղ, կողմորոշում պահանջելով կուտակցությունից: «Ընթացիկ մոմենտի» իր գնահատականը Լենինը սովորաբար տալիս, պարզում էր խորհուրդների համագումարներում, Համ. Կենտգործկոմի նիստերում, Մոսկվայի խորհրդի պլենումներում, արհեստակցական միությունների ու գործարկումների համագումարներում ու կոնֆերենցիաներում և ուրիշ պատասխանատու ժողովներում արտասանած ճառերում,—ավելի սակավ՝ հոգովածներում:

1918 թ. ամառը Լենինը բանվոր դատակարդի ուշադրության կենտրոնն է դարձնում կազմակերպված պայքարը սովի դեմ, կոչանելով բանվորներին մասսայաբար անցնել գյուղերը հաց բերելու, պահանջելով պարենավորման ջոկատներ ստեղծել, չքավորության կոմիտեներ կազմակերպել, և անխնա պատերազմ հայտարարելով

գյուղատնտեսական բուրժուազիայի, կուլակների, հացի սպեկուլյացիայի, գրադվոդ, հացի մենաշնորհը վիժեցնող կուլակների դեմ, վորոնք բանվոր դասակարգին սովի յեն մատնում: «Պետք է կազմակերպել,—գրում է Լենինը,—մեծ «խաչակրաց» արշավանք հացի սպեկուլանտների, կուլակների, ցեցերի, կազմալուծիչների, կաշառակերների դեմ, մեծ «խաչակրաց արշավանք» նրանց դեմ, ովքեր խախտում են պետական խստագույն կարգը հաց հավաքելու, փոխադրելու և բաշխելու գործում»: Լենինի դեկլարացիայից հետո ամենախիստ պարենային դիկտատուրա յե մտացվում: Այդ շրջանին են վերաբերում Լենինի մի շարք կարևոր ճառերը սովի դեմ պայքարելու հարցի շուրջը (հուլիսի 4-ին, 27-ին) և նրա «Նամակը Պիտերի բանվորներին» սովի մասին: Դրանից ել առաջ, հունիսի 28-ին, Լենինն անց է կացնում խոշոր արդյունաբերության ազգայնացման վերաբերյալ դեկրետը: «Ամենասերտ միություն և լիակատար միաձուլում գյուղական չքավորության հետ գիշույններ և համաձայնություն միջակ գյուղացու հետ. պետք է անխնա ճնշել կուլակներին, այդ արյունաբերուններին, վամպիրներին, ժողովրդի կողոպտիչներին, սպեկուլանտներին, սովի շնորհիվ հարստություն դիզողներին» — այսպես է ձևակերպում Լենինը բանվոր դասակարգի խնդիրները: Ամբողջ քաղաքացիական պատերազմի ընթացքում հանրապետության պարենային դրությունը չափազանց ծանր եր ու լարված, և ամեն անգամ, յերբ հացի հարցը սուր բնույթ էր ընդունում, Լենինն անպայման դիմում եր բանվորական մասսաներին, նրանց նախաձեռնությունը, տոկունությունը, խանդավառությունը, կազմակերպվածությունը:

Հուլիսի 4—10-ը Լենինը ղեկավարում է Սորհուրդների Վ համագումարի աշխատանքները (745 բոլեիկ, 352 ձայն եսեր). այստեղ տեղի յե ունենում խզում բոլեիկների ու ձայն եսերների միջև, վորոնք բողոքում էյին պարենային ջոկատներ և չքավորության կոմիտեներ ստեղծելու դեմ: Հուլիսի 5-ին Լենինը համագումարում զեկուցում է ժողկոմխորհի գործունեություն մասին: Հուլիսի 6-ին նա ղեկավարում է ձայն եսերների խափուության ճնշումը Մոսկվայում, վորոնք սպանել էյին գերմանական զենապան Միրբախին՝ Գերմանիայի հետ պատերազմ առաջ բերելու պրոպոկացիոն նպատակով և ապստամբություն էյին բարձրացրել խորհրդային իշխանության դեմ: Հաջորդ օրերը Լե-

նինը չափազանց մեծ ջանքեր է թափում գերմանական կառավարության հետ հաշտությունը պահպանելու համար և միաժամանակ (հուլիսի 15-ին) վճռականորեն մերժում է գերմանական կառավարության առաջարկը՝ զենապանության պաշտպանության համար մի գումարտակ գերմանական զորք Մոսկվա մտցնելու մասին:

1918 թ. հուլիս-ոգոստոս ամիսներին, յերբ սովը սաստկացավ, և չեխոսովակների ապստամբությունն ու մի շարք այլ հակահեղափոխական խռովություններ ծագեցին, խորհրդային հանրապետության դրությունը չափազանց վտանգավոր դարձավ: Լենինն այդ ժամանակ տենդորեն աշխատում է խորհրդային հանրապետության պաշտպանությունը կազմակերպելու և կարմիր բանակ ստեղծելու համար, միաժամանակ մեծ ուշադրություն նվիրելով սովի դեմ մղվող պայքարին: Նա այդ շրջանում հաճախ հանդես է գալիս բանվորական ժողովներում ու միտինգներում (յերբեմն օրական 4 անգամ), խրախուսելով բանվորներին և կոչ անելով կովելու հակահեղափոխության դեմ: Հակառակ ընկերների խնդրքին ու պնդումներին, Լենինը բոլորովին անառարբեր է վերաբերվում դեպի իր անձնական անվտանգությունը: Մինչդեռ եսերական տնտրիստները նրան հետևում էյին քայլ առ քայլ. 1918 թ. ոգոստոսի 30-ին նախկին Միխիսոնի գործարանից դուրս գալիս, վորտեղ Լենինը յելույթ էր ունեցել բանվորների ժողովում, նրան ծանր վիրավորում է եսերուհի Ֆ. Կապլանը: Լենինի կյանքը վտանգի մեջ եր: Սակայն նրա ուժեղ արդամիզմը հողթահարեց այդ հիվանդությունը, և արդեն սեպտեմբերի 17-ին Վլադիմիր Իլյիչը նախազանգում եր ժողկոմխորհի նիստին: Կապլանի գնդակին և բանվորական այլ առաջնորդների սպանությունը պրոլետարիատը պատասխանեց մասսայական կարմիր տեռորով:

1918 թ. աշնանը Լենինն ամենամեծ ուշադրությունը հետևում է քաղաքական ճգնաժամի զարգացմանը Գերմանիայում և այնտեղ աճող հեղափոխությանը: Հոկտեմբերի 3-ին նա Համ. ԿԳԿ և ուրիշ մասսայական բանվորական կազմակերպությունների առաջ հարց է դնում այն մասին, թե պետք է «լարել բոլոր ուժերը գերմանական բանվորներին ոգնելու համար» (հացի պաշարներ ստեղծել, կարմիր բանակի թիվը հասցնել մինչև 3 միլիոնի): «Սկսե՛ք, ուրեմն, պատրաստվել,—գրում է Լենինը,—ապա-

ցուցենք, վոր ուսանական բանվորը կարող է ավելի յեռանդուն կերպով աշխատել, շատ ավելի անձնագործ կերպով կռվել ու մեռնել, յերբ հարցը վերաբերում է վոչ միայն ուսանական, այլև միջազգային բանվորական հեղափոխությանը: Սրձանագրելով, վոր մոտ է հեղափոխությունը Գերմանիայում, Լենինը միաժամանակ ընդգծոյժ է, վոր մեծանում է վտանգը խորհրդային հանրապետության համար, քանի վոր անգլո-ֆրանսական իմպերիալիզմի հաղթանակը Գերմանիայի դեմ արձակում է այդ իմպերիալիզմի ձեռքերը և հնարավորություն է տալիս նրան ուժեղացնելու իր հարձակումը խորհրդային հանրապետության դեմ՝ պրոլետարական դիկտատուրան տապալելու համար: Նոյեմբերի 6-ին և 8-ին Լենինը գեկուցումով հանդես է գալիս խորհուրդների VI համագումարում, մանրամասնորեն մատնանշելով այն փոփոխությունները, վորոնք ստեղծվել են համաշխարհային կապուլթյան մեջ անգլո-ֆրանսական իմպերիալիզմի հաղթության և գերմանական հեղափոխության զարգացման հետևանքով:

1918 թ. հոկտեմբերին ու նոյեմբերին Լենինը գրում է իր մի մեծ աշխատությունը—«Пролетарская революция и ренегат Каутский», վորի մեջ խորագանող քննադատության է յենթարկում բուրժուական դեմոկրատիայի պաշտպանությունը միջազգային մենշեկիզմի առաքյալի (ինչպես նաև Վանդերվելդեյի) կողմից, վորպես հակահիւ պրոլետարական դիկտատուրային, և մերկացնում է հեղափոխական մարքսիզմի այն բոլոր խեղաթյուրումներն ու աղճատումները, վոր նա կատարել է դիկտատուրայի և դեմոկրատիայի հարաբերության հարցում, պետության, խորհուրդների, ինտերնացիոնալիզմի և միջազգային պրոլետարական հեղափոխության մարտական այլ հարցերում: Ամերիկյան և յեվրոպական բանվորներին ուղղած նամակներում Լենինը լուսարանում է նրանց առջ ընդեիկները քաղաքականությունը, միաժամանակ պայքարելով միջազգային ոպորտունիզմի դեմ և իր անհողող համոզումն արտահայտելով միջազգային պրոլետարական հեղափոխության հաղթանակի նկատմամբ:

Լենինի նախաձեռնությամբ 1918 թ. ստեղծվում են բուլեիկներին համակրողների կազմակերպություններ: Այդ նույն տարին և հաջորդ տարվա սկզբին Լենինը կուսակցության ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, վոր պրոլետարական դիկտատուրային անհրաժեշտ է ոգտագործել բուրժուա-

զիայից մնացած կոոպերատիվ աղաքատը, անհրաժեշտ է պայքարել բյուրոկրատիզմի դեմ և բարեկամել խորհրդային ապարատը, անհրաժեշտ է, վորպեսզի արհեստակցական միություններն ամհնամոտիկ մասնակցություն ունենան սոցիալիզմի գործնական կառուցման և արտադրության կազմակերպման գործում (արհմիությունների II համագումարում 1918 թվի հունվարի 20-ին արած գեկուցումը): Սկսած 1918 թ. յերկրորդ կեսից Լենինն ուժեղ կերպով մշակում է կուսակցության վերաբերմունքի հարցը դեպի միջակ գյուղացիությունը «Պիտերիմ Մոսկինի արժեքավոր խոստովանությունները», նոյեմբերի 27-ի գեկուցումը մանր-բուրժուական կուսակցությունների մասին, գեկտեմբերի 11-ի ձառը հողային բաժինների, չքավորության կոմիտեների և կոմունաների համագումարում, «Պատասխան գյուղացու հարցումին»), նորից խորանալով Մարքսի և Ենգելսի հայացքների մեջ այդ հարցում: «Կարողանալ համաձայնության դալ միջակ գյուղացիության հետ, վոչ մի բոպե չհրաժարվելով կուլակի դեմ պայքարելուց և ամուր հենվելով միայն չքավորության վրա»,— այսպես է ձևակերպում Լենինը կուսակցության խնդիրներն այդ ասպարեզում: Կուսակցության քաղաքականությունը միջակ գյուղացիության հանդեպ հաստատվեց կուսակցության VIII համագումարում (1919 թ. մարտին): 1919 թ. սկզբին Լենինին մի դեպք պատահեց, վոր կարող եր չափազանց ախուր վերջանալ, և վորը պետք է նշել. հունվարի 19-ի յերեկոյան Մոսկվայի ծայրամասում Սոկոլնիկի տանող ճանապարհով մեքենայով անցնելիս նա յենթարկվեց մի խումբ զինված լանդլիտների հարձակման. բարեբախտաբար Լենինին աւրճանակով սպառնացող բանդիտները չեն կրակում և բավականանում են միայն մեքենան խլելով: Հետագայում ամբողջ ավազակախումբը բռնվեց ու զնդակահարվեց:

Լենինի յերկարատե պայքարն ոպորտունիստների, շովինիստների և ցենսորիստների դեմ միջազգային բանվորական շարժման ասպարեզում, զանազան յերկրները բանվոր դասակարգի իսկական հեղափոխական տարրերին համախմբելու և կազմակերպելու նրա ջանքերը պսակվեցին Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրությամբ 1919 թ. մարտի 2-ին, վորի I կոնգրեսը տեղի ունեցավ Լենինի նախագահությամբ Մոսկվայում մարտի 2—7: I կոնգրեսի կարեօրազույն փաստաթղթերն են Լե-

նինի թեղիսները բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դեկտատուրայի մասին և նրա զեկուցումը նույն այդ թեմայի շուրջը: Հետագայում Լենինն ամենամոտիկ մասնակցություն ունեցավ Կոմինտերնի աշխատանքներում, վորի գործունեյությունն ընթանում եր Վլադիմիր Իլյիչի անմիջական ղեկավարությամբ: Արևմտա-յեվրոպական կոմունիստների և բանվորների համար գրված մի շարք հոդվածներում («Յերրորդ Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ», «Վոլջույն հունգարական բանվորներին», «Բեռնի Ինտերնացիոնալի հերոսները», «III Ինտերնացիոնալի խնդիրների մասին», «Վոլջույն խառնական, ֆրանսական ու գերմանական կոմունիստներին», «Ինչպես եր բուրժուազիան ոգտագործում ռենեգատներին»—1919թ., «Հրապարակախոսի դիտողություններ»—1920 թ.) և քաղաքական նախադասություններում ու հրահանգներում Լենինն արձագանգում ե Մեքսիկայի հեղափոխական շարժման առաջ ծառացած բոլոր կարեւորագույն հարցերին, վճռական պայքար մղելով ոպորտունիստների և ռեֆորմիստների դեմ, պահանջելով, վոր հեղափոխական կուսակցությունները լիովին սահմանադաւլեն նրանցից, պահանջելով դեկտատուրան ընդունել վոչ միայն խոսքով, այլ և նրա համար իրական պայքար մղելով,—պրոպագանդ անելով և պարզաբանելով Խորհուրդների գաղափարը, ոգնելով իր ցուցումներով հունգարական ու բավարական Խորհրդային հանրապետությունների կոմունիստներին, նշելով Արևմուտքում ծնունդ առնող յերխտասարդ կոմունիստական կուսակցությունների կատարած սխալները, աշխատելով ստեղծել արևմտյան յերկրներում իսկապես կոմունիստական, իսկապես հեղափոխական կուսակցություններ:

Կոմինտերնի I կոնգրեսը վոլջունելուց հետո Լենինը միքանի որով գնաց Պետրոգրադ: Այնտեղ արտասանած նրա ճառերից ամենամեծ նշանակություն ունի «Խորհրդային իշխանության հաջողություններն ու դժվարությունները» մեծ ճառը: Մարտի 18—23-ին Մոսկվայում Լենինի ղեկավարությամբ տեղի ուներ կուսակցության 8-րդ համագումարը—հենց ռազմական ծանր անհաջողությունների շրջանում (Կուլյակի հարձակումը): Համագումարում Լենինը հանդես յեկավ Կի գործունեյության հաշվետվությամբ, զեկուցումով դեպի միջակգյուղացիությունը ցույց տրվելիք վերաբերմունքի մասին և կուսակցական ծրագրի ու Կոր-

միր բանակի դրության վերաբերյալ ճառերով: Համագումարն ընդունեց Լենինի առաջարկած բանաձեւ միջակ գյուղացիությանը ցույց տրվելիք վերաբերմունքի մասին, վորը կուսակցության կարեորագույն վավերագրերից մեկն ե այդ ասպարեզում: Համագումարի կողմից հաստատված կուսակցության ծրագիրը ևս հիմնականում Լենինն ե գրել: Պաշտպանելով կուսակցության ծրագիրը, Լենինը պայքար ե մղում Բուխարինի դեմ, վորը ծրագրի վրա յեր հարձակվում «ձախից», առաջարկելով դուրս գցել նրանից կապիտալիզմի ծագման ու զարգացման ընդհանուր բնութագիրը և թողնել միայն կապիտալիզմի բարձրագույն ստադիայի—«գուտ իմպերիալիզմի» վերլուծությունը: Այդ տեսակետը հանդում եր կապիտալիզմի տարրական յերեւոյթների անտեսմանը, մանր ապրանքարտադրողների (գյուղացիության) դերն ու նշանակությունը չհասկանալուն և նրանց նկատմամբ պրոլետարական դեկտատուրայի վերաբերմունքը ճիշտ կերպով վորոշելու անկարողությանը: Լենինը նմանապես պայքար եր մղում Բուխարինի և Պյատակովի թեքման դեմ աղգային հարցում (աղգերի ինքնորոշման իրավունքի լոզունգի բացառումը նրանց կողմից):

Համագումարում խոշոր տարածայնություններ ծագեցին Կարմիր բանակի կառուցման մեթոդների հարցի, առանձնապես մասնագետներին նրա շարքերում ոգտագործելու հարցի շուրջը: Պայքարը չափազանց սուր բնույթ եր կրում. յերկար դիսկուսիայից հետո Լենինին հաջողվեց միաձայն անցկացնել հանձնաժողովի մշակած բանաձեւի նախագիծը:

1919 թ. ընթացքում Լենինը ղեկավարում ե Խորհրդային հանրապետության լարված կռիվը Կուլյակի, Յուդենիչի և Դենիկինի դեմ, վորը վերջացավ հակահեղափոխական բանակների լիակատար պարտությամբ և նրանց գրաված մարզերն ազատելով: Բացի հանրապետության ռազմական պաշտպանության կազմակերպման, Կարմիր բանակի մատակարարման ու սպառազինման և միջազգային հարցերից (հանրապետության միջազգային և ներքին դրության վերաբերմամբ հատկապես պետք ե նշել Լենինի ապրիլի 4-ի, հուլիսի 4-ի, նոյեմբերի 8-ի ճառերը), Լենինի ռազարությունը կենտրոնանում ե պարենային, վառելիքի գժվարությունների և համաճարակների (բժավոր տիֆ) դեմ պայքարելու հարցերի վրա: Այս հարցերի լուծման վրա յե կենտրոնանում

զլխավորապես նրա դործնական աշխատանքը: Բացի դրանից, նա շատ է զբաղվում գյուղացիության նկատմամբ վարելիք մեր քաղաքականության պարզաբանությամբ և այն խնդիրների լուսաբանությամբ, վորոնք ծառացած են կուսակցության առաջ գյուղում աշխատանք կատարելիս, մեծ ուշադրություն է նվիրում մասնագետների վերաբերյալ հարցին, ազգային հարցին (Ուկրաինայում և Թուրքեստանում), կուլտուրայի, լուսավորության հարցերին և այլն: Լենինի այդ շրջանի քաղաքական ու թեորիական առանձին կարևոր նշանակութուն ունեցող աշխատություններից պետք է նշել հետևյալները.— «Մեծ նախաձեռնություն» (կոմունիստական շարժությունների մասին), «Եկոնոմիկան ու քաղաքականությունը պրոլետարիատի զիջատուրայի շրջանում», «Սահմանադիր ժողովի ընտրությունները և պրոլետարիատի զիջատուրան» (բուրժուական պարլամենտներից մի նշանակության մասին և պրոլետարիական հեղափոխության հաղթության պայմանների մասին), «Ազատության ու հավասարության վերաբերյալ լոգունգներով ժողովրդին խաբելու մասին» (ձառ):

1919 թ. դեկտեմբերի 6—9 տեղի ունեցավ Խորհուրդների VII համագումարը, վորտեղ Լենինը զեկուցում է անում Ժողովուրդների կողմից և գործոն մասնակցություն է ունենում համագումարի կազմակերպական սեկցիայի աշխատանքներում, արտահայտվելով հոգուտ հին մասնագետների ոգտագործման և միաժամանակ նոր կադրերի ստեղծման բանվորներից ու գյուղացիներից:

Կարմիր բանակի հաղթանակը բոլոր ձակատներում, Կուլչակի, Դենիկինի և Յուգենիչի լիկվիդացիան և բլոկադայի վերացումը Խորհրդային հանրապետության առաջ խաղաղ շինարարության անցնելու հեռանկար բաց արին: 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին Լենինն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է արդյունաբերության, տրանսպորտի և հողագործության վերականգնման հարցերի վրա: «Պարենի պետական մեծ պաշար հավաքել ու տեղափոխել, քայքայված տրանսպորտը վերականգնել, այդ բոլորը կատարել ռազմական արագությամբ, ռազմական յեռանդով, ռազմական կարգապահությամբ, դրա հետ միասին և դրա անխզելի կապակցությամբ բանվորականացնել խորհրդային իշխանության ապարատը, վճռել այնտեղից սարսափ ու բյուրոկրատիզմը, ձեռք բերել աշխատանքի առավելագույն արտա-

դրողականություն, ամենամեծ չափերով լարել յերկրի բոլոր ուժերը նրա տնտեսությունը վերականգնելու հաժար»,—այսպես էր վորոշում Լենինը կուսակցության և բանվոր դասակարգի խնդիրները 1920 թ. փետրվարին:

Տնտեսական խնդիրների լուծման անցնելը պայքար առաջ բերեց կուսակցության ներսում արդյունաբերության կառավարման մեթոդների հարցի շուրջը: Լենինը վճռականորեն պնդում է միանձնյա ղեկավարության անհրաժեշտությունը և յեռանդուն պայքար է մղում կոլեկիալ ղեկավարության կողմնակիցների դեմ (Ռիկով, Տոմսկի, Սապրոնով և այլն): Նա շատ անգամ ու հաճախ է հանդես գալիս այդ հարցի առթիվ, ընդ վորում մի շարք դեպքերում ուղղիցիան այնքան ուժեղ է լինում, վոր Լենինի տեսակետը մեծամասնության կողմից պաշտպանություն չի գտնում (որինակ, ՀԱՄԿՍ ֆրակցիայում, Ժողովրդական տնտեսության Խորհուրդների համագումարում): Այս հարցը վերջնականապես լուծվում է կուսակցության IX համագումարում, վոր տեղի ունեցավ 1920 թ. մարտի 29—ապրիլի 5-ը: Լենինը համագումարում հանդես է գալիս ԿԿ հաշվետվությամբ և ձառեր է արտասանում տնտեսական շինարարության ու կոոպերացիայի մասին (Լենինն առարկում էր կոոպերացիայի պետականացման դեմ): Ուղղիցիան, վոր մասամբ պաշտպանում էր կոլեկիալ սկզբունքը, մասամբ հարձակվում էր ԿԿ ընդհանուր քաղաքականության վրա,—զլխովին ջախջախվեց:

Խորհրդային հանրապետության՝ քաղաքացիական պատերազմից խաղաղ շինարարության անցնելու ձգտումը չի բազմապիսյալ, վորովհետև ապրիլի վերջին Լեհաստանը, չնայած խորհրդային իշխանության մի շարք խաղաղ առաջարկություններին, պատերազմ սկսեց Խորհրդային Ռուսաստանի դեմ, իսկ շուտով մեծացավ վտանգը Վրանդելի կողմից: Այդ պատճառով ել մինչև Լեհաստանի հետ ծագած պատերազմը վերջանալը և մինչև Վրանդելի լիկվիդացիան պաշտպանության հարցերը նորից Լենինի ուշադրության կենտրոնն են կազմում, նորից են դառնում նրա ամենալարված հոգսերի առարկան:

1920 թ. ապրիլ-մայիսին, Կոմունիստական Խնտերնացիոնալի II կոնգրեսի նախապատրաստության շրջանում, վոր բացվեց Արևմուտքի հեղափոխական շարժման ամենամեծ վերելքի մոմենտին, Կոմիտեների ամենամեծ ազդեցության և Կարմիր բանակի ամե-

նամե՞ծ հաջողութիւններ ժոմենտին լեհական ճակատում—
 Լենինը գրում է իր նշանավոր աշխատութիւնը—«ДЕТСКАЯ БО-
 ЛЕЗНЬ «ЛЕВИЗНЫ» В КОММУНИЗМЕ»: Այդ գրքում, վոր մարքսիստա-
 կան սարատեգիայի և տակտիկայի հիմունքների փայլուն շարա-
 դրանքն է, Լենինը տալիս է «ձախ» արևմտա-յեվրոպական կոմու-
 նիստների սխալների սպառնիչ քննադատութիւնը, վորոնք ժըխ-
 տում էին բուրժուական պարլամենտներում մասնակցելու, ռե-
 ալցիոն արհմիութիւններին մասնակցելու անհրաժեշտութիւնը,
 վորոնք չէին հասկանում պայքարի լեզալ և անլեզալ մեթոդ-
 ները զուգակցելու անհրաժեշտութիւնը, մի շարք խոշոր սխալ-
 ներ թույլ տալով կուսակցութեան և դասակարգի փոխհարաբերու-
 թեան հարցում և այլն: Զարգացման տվյալ շրջանում «ձախ»
 թեքումն ամենամեծ վտանգն էր հեղափոխութեան զարգացման
 համար, ուստի Լենինը դուրս յեկալ նրա դեմ ամենայն վճռա-
 կանութեամբ:

Կոմիւնտերնի յերկրորդ կոնգրեսը (հուլիսի 19—ոգոստոսի 6)
 իր նիստերը գումարում էր սկզբում Պետրոգրադում, հետո՝ Մոսկ-
 վայում: Այդ կոնգրեսի աշխատանքներում Լենինն առանձնապէս
 գործոն մասնակցութիւն ունեւ: Կոնգրեսի բոլոր կարևորագոյն
 փաստաթղթերը—բանաձևերն ու թեզիսները Լենինի գրչին են
 պատկանում՝ ազարային հարցի մասին, Կոմունիստական Ին-
 տերնացիոնալ ընդունվելու պայմանները, վորոնք վճռականապէս
 արգելում են այն խմբակների ու հոսանքների մուտքը նրա շար-
 քերը, վորոնք պահպանել են իրենց մեջ ռեֆորմիզմի և ոպոր-
 տունիզմի տարրեր. ազգային և գաղութային հարցերի մասին: II
 կոնգրեսի հիմնական խնդիրների վերաբերյալ թեզիսները: Լենին-
 նը ղեկավար մասնակցութիւն է ունեցել նաև «Կոմունիստական
 կուսակցութեան դերը պրոլետարական հեղափոխութեան մեջ»
 բանաձևը գրելում: Կոնգրեսում Լենինը ղեկուցեց միջազգային
 դրութեան և ազգային-գաղութային հարցերի մասին և միջանի
 ձառ արտասանեց ուրիշ հարցերի առթիւ, պայքարելով կոնդրե-
 սում ներկա գտնվող գերմանական «անկախների» ներկայացու-
 ցիչների դեմ և «ձախերի» դեմ: Լենինի ղեկավարութեամբ կոն-
 գրեսն ուղղեց ձախերի սխալները և ստեղծեց Կոմիւնտերնի մեջ
 մտնող կուսակցութիւնների գաղափարական ու կազմակերպա-
 կան միաձուլութիւն: Կոնգրեսից հետո Լենինը գերմանական և
 ֆրանսական բանվորներին ուղղած նամակում և «Կեղծ ձառեր

աղատութեան մասին» հոգւածում (1920 թ. նոյեմբեր—դեկտեմ-
 բեր) պաշտպանում է Կոմիւնտերնի «21 պայմանը» (Կոմիւնտերն
 ընդունվելու պայմաններ), պահանջելով հեղափոխական կուսակ-
 ցութիւնների կապերի լիակատար խզումը զանազան տեսակի
 ռեֆորմիստներից և ոպորտունիստներից:

Վրանգելի լիկվիդացիայի և Լեհաստանի հետ մղվող պատե-
 ռազմը վերջանալու հետևանքով, սկսած 1920 թ. վերջից, Լենինի
 ուշադրութեան կենտրոնն են կազմում տնտեսական շինարարու-
 թեան հարցերը: Իր մի շարք ճառերում, վորոնցից հատկապէս
 պետք է նշել կառավարութեան անունից արած ղեկուցումը Խոր-
 հուրքների VIII համագումարում. 1920 թ. դեկտեմբերին), Լենինը
 մշակում է տնտեսական ձեռնարկումների մի ամբողջ սխտեմ,
 վորոնցով պետք էր վերականգնել իմպերիալիստական ու քա-
 ղաքացիական պատերազմից քայքայված ժողովրդական տնտե-
 սութիւնը: Պլանի հիմքում դրվում է յերկրի ելեկտրիֆիկացման
 խնդիրը («Կոմունիզմը—այդ խորհրդային իշխանութիւնն է պլուս
 ամբողջ յերկրի ելեկտրիֆիկացումը»): Մեծ նշանակութիւն
 տալով ոտարերկրյա կապիտալը Խորհրդային հանրապետութեան
 տնտեսութեան վերականգնման գործի մեջ քաշելուն, Լենինն ա-
 ռաջադրում է կոնցեսիաների հարցը, լուսաբանելով մի շարք մեծ
 ճառերում կուսակցութեան կոնցեսիոն քաղաքականութիւնը և
 պրաքաբանդ անելով նրա ոգտին: Միաժամանակ Լենինը մեծ ու-
 շադրութիւն է նվիրում գյուղատնտեսութեան ամրացման ու
 զարգացման ձեռնարկումներին և գյուղացիութեանը ոգնելուն,
 ընդգծում է խորհրդային ապարատի բարելավման և բյուրոկրա-
 տիզմի դեմ պայքարելու անհրաժեշտութիւնը: Բացի դուտ տնտե-
 սական հարցերից, Լենինը նոր տնտեսական քաղաքականութեան
 անցնելու շրջանում մեծ ուշադրութիւն է նվիրում նաև ժողովրդա-
 կան լուսավորութեան գործին:

Քաղաքացիական պատերազմից խաղաղ շինարարութեան,
 ռազմական կոմունիզմի մեթոդներից նոր տնտեսական քաղաքա-
 կանութեան անցնելուն համընթաց (1920 թ. վերջը—1921 թ.
 սկիզբը) ստեղծվեց կուսակցութեան չափադանց ծանր ճգնաժամ,
 վոր կապված էր նրա մեջ առաջացած մի շարք ֆրակցիաների ու
 ֆրակցիոնական սուր պայքարի հետ: Սկզբում (1920 թ. աշնա-
 նից—ձմեռվա սկիզբը) ներկուսակցական պայքարն ընթանում
 էր ղրխավորապէս գուտ կուսակցական հարցերի շուրջը: Մոսկվա-

յի կազմակերպութեան մեջ, վորտեղ ուղղութիւնն առանձնապէս ուժեղ եր, պայքարն ընդդէմ ուղղութիւնի ընթանում եր Լենինի անմիջական ղեկավարութեամբ: Ավելի ուշ ներկուսակցական պայքարը կատարելի դիսկուսիայի ձև ընդունեց արհեստակցական միութեաններէ դերի ու խնդիրներէ շուրջը: Յերբ դիսկուսիան կանխելու և դրանով կուսակցութեան ուժերը խնայելու նպատակով Լենինի կատարած փորձերն անհաջողութեամբ վերջացան, վորովհետեւ Տրոցկին սկսեց իր ֆրակցիոն պայքարը, առաջադրելով արհմիութեաններէ պետականացման լոզունգը, — Կի մի մասը Լենինի գլխավորութեամբ (Ձինովյեով, Ստալին և ուրիշները) կարողացավ յերկարատեւ պայքարից հետո կուսակցութեան մեծամասնութեանը համախմբել այն պլատֆորմի շուրջը, վորը ճշտորեն հաշիւի յեր առնում, թե տնտեսաբար և հետագայում հրաժարվել արհեստակցական միութեաններէ նկատմամբ ռազմական կոմունիզմի մեթոդները շարունակելուց, և արհեստակցական միութեաններէ խնդիրները խաղաղ տնտեսական շինարարութեան պայմաններէ համեմատ եր ձեւակերպում: Չնայած իր հիվանդութեանը, Լենինը դիսկուսիայի ընթացքում հակայական գործունեություն չեց ցուցաբերում. նա շատ և գրում և հաճախ դուրս ե գալիս Տրոցկի-Բուխարինի պլատֆորմի, բանվորական ուղղութիւնի, գեմոկրատական ցենարալիզմի դեմ և այլն («Արհեստակցական միութեաններէ մասին, ընթացիկ մոմէնտի մասին և ընկ. Տրոցկու սխալների մասին», «Կուսակցութեան ճգնաժամը», «Դարձյալ արհմիութեաններէ, ընթացիկ մոմէնտի և ընկ. Տրոցկու ու Բուխարինի սխալների մասին»): 1921 թ. մարտին, Կրոնշտադտի ապստամբութեան շրջանում կուսակցություն իր X համագումարում Լենինի ղեկավարութեամբ և նրա նախաձեռնութեամբ իրագործում ե տնցումը նոր տնտեսական քաղաքականութեան վորպես սոցիալիզմի նոր ճանապարհի: «Նեպոլ պրոլետարական պետութեան մի առանձին քաղաքականությունն ե, վոր հաշիւի յե առնում կապիտալիզմի թուլատրումը՝ իշխող բարձունքները պրոլետարական պետութեան ձեռքում գտնվելու պայմաններում, վոր հաշիւի յե առնում կապիտալիստական ու սոցիալիստական տարրերի պայքարը, սոցիալիստական տարրերի աճում-ծաղկումն ի միաս կապիտալիստական տարրերի, սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստական տարրերի դեմ:

հաշիւի յե առնում դասակարգերի վոչնչացումը, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը» (Ստալին):

Լենինն այդ քաղաքականութեան ներշնչողն ու ստեղծողն եր. այդ քաղաքականութեան մերձավորագույն նպատակն եր պետական իշխանությունը պահել պրոլետարիատի ձեռքում և վերականգնել խոշոր արդյունաբերությունը, սոցիալիզմի այդ միակ հիմքը՝ միջակ դյուղացիութեան հետ համաձայնութեան գալու միջոցով, մասնատրումը հարկով փոխարինելու և մանր ապրանքարտադրողին շրջանառութեան ազատություն տալու միջոցով: Նոր տնտեսական քաղաքականություն մտցնելու շնորհիվ վերականգնվեց պրոլետարիատի դաշինքը դյուղացիութեան հետ, և պրոլետարիատի դիկտատուրան հաջողութեամբ դուրս յեկավ աւանածանր ճգնաժամից: Լենինը համագումարում հանդես յեկավ Կի հաշիւելութեամբ, բնահարկի, կուսակցութեան միասնականութեան և բանվորական ուղղութիւնի անարխոսիդիկալիստական թեքման վերաբերյալ ղեկուցումներով ու արհմիութեաններէ վերաբերյալ ճառով: Լենինի առաջարկութեամբ համագումարն ընդունեց բանաձեւեր, վորոնցով կուսակցութեան պատկանելն անհամատեղելի յեր համարվում անարխոսիդիկալիստական, հոյացքների պրոպագանդի հետ, և պահանջվում եր անհաղաքները բոլոր ֆրակցիաները՝ հակառակ դեպքում կուսակցություն մութեան կուսակցութեան միասնականությունը, վոր լուրջ կերպով վտանգվել եր ֆրակցիոնական պայքարի շրջանում, պահպանվեց:

Կրոնշտադտի ապստամբութեան լիկվիդացիայից և X համագումարը վերջանալուց հետո Լենինն իր ուշադրությունը կենտրոնացնում ե նոր տնտեսական քաղաքականութեան, նրա բնատուր և նշանակութեան բազմակողմանի հիմնավորման ու պարզաբանման վրա և ժողովրդական տնտեսության զանազան ասպարեզներում գործնական ձեռնարկումներ մշակելու վրա՝ ի զարգացումն ու քաղաքականութեան հիմնական սկզբունքների: Մեծ նշանակություն ունեն Լենինի ճառերը պարենհարկի մասին Մոսկվայի ակտիվի ապրիլի 9-ի նիստում և Համագումարական կուսակցութեան կոնֆերենցիայի մայիսի 26—27 նիստերում, և հատկապես «О продналоге» բրոյշուրը (նոր քաղաքականութեան նշանակությունը և նրա պայմանները), ինչպես նաև «ԱՊՈ-ի նախադր»:

«Պարենհարկը,— գրում եր Լենինը,— ծայրահեղ կարիքի, քայքայման ու պատերազմի հարկադրանքով առաջացած «ազմական կոմունիզմից» ճիշտ սոցիալիստական արդյունափոխանակությունը, իր հերթին, սոցիալիզմից, բնակչության մեջ մանր գյուղացիության գերակշռությունից բղխող առանձնահատկություններով ոժտված սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ձևերից մեկն է»:

1921 թ. հունիս—հուլիսին Լենինը ղեկավարում է Կոմունիստական Ինտերնացիոնալի III կոնգրեսի աշխատանքները և հանդես է գալիս այնտեղ նոր տնտեսական քաղաքականություն վերաբերյալ ղեկուցումով: Հատուկ ուշադրություն է նվիրում Լենինը գերմանական կոմկուսակցության ճգնաժամին, վոր ստեղծվել եր գերմանական պրոլետարիատի պարտության հետևանքով 1921 թ. մարտին, և համագումարից հետո դիմում է գերմանական կոմունիստներին մի հատուկ նամակով, վորի մեջ ընդգծում է կոմկուսակցության կողմից բանվոր դասակարգի մեջ մեծամասնությունը նվաճելու անհրաժեշտությունը: Կոնգրեսում Լենինը յեռանդով պայքարում է ձախ ուկրոնիստների դեմ, վորոնք անտեսում էյին պրոլետարիատի մեծամասնությունը նվաճելու անհրաժեշտությունը և բուրժուազիայի դեմ խնամքով պատրաստվելու անհրաժեշտությունը:

1921 թ. յերկրորդ կեսի ընթացքում և 1922 թ. սկզբին Լենինի ուշադրության կենտրոնում առաջվա պես շարունակում են մնալ նոր տնտեսական քաղաքականության հետ կապված հարցերը («Նոր ժամանակներ, հին սխալներ նոր ձևով», «Հոկտեմբերյան հեղափոխության քառամյա տարեդարձի առթիվ», «Վուսկու նշանակության մասին այժմ և սոցիալիզմի լիակատար հաղթանակից հետո») հողվածները, Քաղլուսվարների Համառուսական II համագումարում (1921 թ. հոկտեմբերին), Մոսկվայի կուսակցական կոնֆերենցիայում—նույնպես հոկտեմբերին, Խորհուրդների IX համագումարում—դեկտեմբերին արտասանած ճառերն ու տված ղեկուցումները): Ռազմական կոմունիզմի շրջանը մի փորձ եր «գրոհային», այսինքն՝ ամենակրճատ, արագ, անմիջական յեղանակով արտադրության ու բաշխման սոցիալիստական հիմքերին անցնելու համար»: 1921 թ. գարնան ճգնաժամը դրդեց կուսակցությանը ժամանակավորապես «նահանջելու», առևտրի

ազատություն ու վորոշ սահմաններում կապիտալիզմի վերածնունդ թույլատրելու, վորպեսզի մեր շարքերը վերակառուցելով՝ նորից հարձակման դիմենք: «Մենք,—ասում եր Լենինը,— մեզ համար խնդիր գնելով արտադրողական ուժերի բարձրացումն ու խոշոր արդյունաբերություն՝ վորպես սոցիալիստական հասարակության միակ հիմքի վերականգումը, պետք է այնպես գործենք, վորպեսզի ճիշտ մոտենանք այս հարցին և ինչ ել վոր լինի, լուծենք այն»: Նորից և նորից վերլուծելով նոր տնտեսական քաղաքականության ելույթները և նրա տարբերությունը ազգայնական կոմունիզմի մեթոդներից, մատնանշելով այն դժվարություններն ու վտանգները, վորոնք կապված են առևտրի ազատության, հետևապես նաև կապիտալիզմի ազատության թույլտվության հետ վորոշ սահմաններում, Լենինը բազմակողմանիորեն ձևակերպում է այն խնդիրները, վորոնք կանգնած են կուսակցության առաջ տնտեսական շինարարության գործում (հատկապես «սովորել առևտուր անել» լողունգը), միևնույն ժամանակ նշելով, վոր նոր տնտեսական քաղաքականությունը «մենք կիրառում ենք լուրջ կերպով և յերկար ժամանակով, բայց, իհարկե, վոչ ընդմիջում»: Սոցիալիստական շինարարության ձևերի փոփոխությունը վորտեղ եր նաև արհմիությունների դրությունը, առաջի Լենինը հատուկ թեղիսներում վորոշում է արհմիությունների նոր խնդիրները, վորոնք թելադրվում էյին նոր տնտեսական քաղաքականության պայմաններից:

1921 թ. վերջին—1922 թ. սկզբին յերեան յեկան Լենինի լուրջ հիվանդության նշանները. նա ստիպված եր ավելի ու ավելի հաճախ ընդհատելու իր աշխատանքը:

1922 թ. մարտի 6-ին Լենինը մի ճառով հանդես է գալիս միտադադործների համագումարի ֆրակցիայի նիստում. այդ ճառում նա հայտարարում է, վոր կանգ է առել այն նահանջը, վոր կուսակցությունը վորոշել եր իր X համագումարում: Նույն այդ շրջանին են վերաբերում Լենինի մեծ հողվածները—«Մարտընչող մատերիալիզմի նշանակության մասին» և «Հրապարակախոսի դիտողություններ»: Մարտի 27—ապրիլի 2-ը դեռ հիվանդությունից չապաքինված Լենինի ղեկավարությամբ տեղի յե ունենում կուսակցության XI համագումարը, վորտեղ Լենինը հանդես է գալիս ԿԿ հաշվետվությամբ: Իր մեծ ճառում, վորով նա ամփոփում է նոր տնտեսական քաղաքականության առաջին

ապրիլ առդյուռնները, Լենինը մատնանշում է, վոր անհրաժեշտ է մերձեցում ստեղծել գյուղացիական եկոնոմիկայի հետ, և նորից և ընդգծում, վոր ճանաչանք վերջացած է», և վոր դրա կապակցությամբ կուսակցության առաջ նոր խնդիրներ են ծառանում: «Նեպոլը տնտեսականապես ու քաղաքականապես—գրում էր Լենինը—լիակատար կերպով ապահովում է մեզ համար սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը կառուցելու հնարավորությունը»: «Ամբողջ միևնույն աշխարհում, —ասում է Լենինը համագումարը փակելիս,—վոր այժմ առաջ շարժվենք անհամեմատ ավելի լայն և հզոր մասսայով, վոչ այլ կերպ, քան յեթե գյուղացիության հետ միասին, ապացուցելով նրան գործով, պրակտիկայով, փորձով, վոր մենք սովորում ենք և կսովորենք նրան ոգնել, նրան առաջ տանել»:

Լենինի հիվանդությունը—ուղեղի սկլերոզ—շարունակում էր զարգանալ: Չնայած իր հիվանդությանը, Լենինը շարունակում է գերեկախմբեր տալ կուսակցությանն ու Կոմիստերին մի շարք կարևորագույն հարցերի վերաբերմամբ («Մենք չափազանց թանկ վճարեցինք», «Կրկնակի ստորագասություն և որինակառության մասին»), «Правда»-յի համար հոդվածներ, գործնական նամակներ և թերադրում և շատ է աշխատում Ժողկոմխորհի ապարատի կազմակերպման հարցի վրա:

Շուտով, XI համագումարից հետո—այդ վերջին համագումարն էր, վորտեղ Լենինը հանդես յեկավ,—նրա հիվանդության ընթացքը վատանում է, և մայիսի 26-ին տեղի, յե ունենում առաջին արյունահոսությունը ուղեղի մեջ: Ամառվա ընթացքում Լենինը մի փոքր առողջանում է և աշնանը (հոկտեմբերի 2-ին) նորից անցնում է աշխատանքի Ժողկոմխորհում և ԿԿ, սակայն արդեն վոչ լիակատար չափով և կարճ ժամանակով: Ժողկոմխորհի հենց առաջին նիստում, վոր տեղի յե ունենում Լենինի նախագահությամբ, նա անց է կացնում մի վորոշում, վորով մերժվում է Ուրկվարտի կոնցեսիան, անընդունելի գանելով կոնցեսիոների պայմանները Խորհրդային հանրապետության համար: Հոկտեմբերի 21-ին Լենինը ճառ է արտասանում ՀԿԿ. Կենտգործկոմի նստաշրջանում, նոյեմբերի 18-ին Կոմիստերի IV կոնգրեսում զեկուցում է «Ռուսական հեղափոխության հինգ տարին և համաշխարհային հեղափոխության հեռանկարները» թեմայով: Նոյեմբերի 20-ին Լենինն արտասանում է իր նշանավոր ճառը Մոսկվայի խորհրդի պլենումում (այդ նրա վերջին ճառն էր), վորի

մեջ տալիս է նեպոլիան Ռուսաստանը սոցիալիստական Ռուսաստանի վերածելու լուսունգը: Լենինը մտադիր էր զեկուցումով հանդես գալու Խորհուրդների X համագումարում և ուժեղ կերպով պատրաստվում էր դրան, սակայն հիվանդության հետագա զարգացումն ստիպեց Լենինին հրաժարվելու այդ մտադրությունից:

1922 թ. դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ յերկրորդ արյունահոսությունը ուղեղի մեջ, վոր առաջ բերեց աջ ձեռքի ու աջ վոտքի կաթված և Լենինին ստիպեց յերկար ժամանակով անկողին ընկնելու: Չնայած իր չափազանց ծանր վիճակին, Լենինը շարունակում է հոգալ կուսակցության և պետության գործերի մասին: Դրելու հնարավորությունից զրկված՝ նա ոգովելով բժիշկների թույլ տված յուրաքանչյուր բույանից, թերադրում է իրենց մաքի խորություն բարեկեցության մի շարք հոդվածներ («Փոքրիկ եջեր որպարից», «Կոոպերացիայի մասին», «Մեր հեղափոխության մասին», «Ինչպես պետք է մենք վերակառուցենք Բանգյուղտեսչությունը», «Լավ է քիչ, բայց՝ լավ»), վորոնք կարելի էր արագույն քաղաքական գերեկախմբեր են պարունակում կուսակցության հետագա գործունեության համար: Մատնանշելով, վոր մեզանում կա «այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ ու բավական է... սոցիալիստական հասարակություն կառուցելու համար...», Լենինն այնուհետև մշակում է սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի մի ամբողջ ծրագիր, վորը մատնանշում է, թե անհրաժեշտ է ղեկավար դերը վերապահել պրոլետարիատին, անհրաժեշտ է զարգացնել կոոպերացիան վորպես մանր-գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերափոխման հիմնական լծակ, զարգացնել խոշոր մեքենայական ինդուստրիան, ելեկտրիֆիկացիան, նորոգել պետական ապարատը, պայքարել բյուրոկրատիզմի դեմ, իրագործել կուլտուրական հեղափոխությունը և այլն:

1923 թ. մարտի 9-ին տեղի յե ունենում նոր արյունահոսություն, վորից հետո Լենինը կորցնում է խոսելու ընդունակությունը: Վրադիմիր Իլյիչի դրությունն անուսալի յեր թվում: Մանր դրության մեջ նրան փոխադրում են Գորկի (Մոսկվայից 30 վերստ հեռու գտնվող Նախկին կաթված): Յերկար գերմարդկային տանջանքներից հետո դրությունը մի փոքր լավանում է: Առողջանալու հույս է ծագում: 1923 թ. Խորհրդային հանրապե-

տության մեջ չի յեղել թյա կամ այն հարցին նվիրված բանվորական կամ գյուղացիական մի ժողով, վորտեղ տասնյակ հարցեր տրված չլինեյին Լենինի առողջության մասին: Մինչդեռ այդ բարեխղճ միայն յերևութական եր. հիվանդությունը շարունակում է քայքայել Լենինի ուղեղը: 1924 թ. հունվարի 21-ին հանկարծ դրությունը խիստ վատթարացավ, տեղի ունեցավ նոր արյունահոսություն, և յերեկոյան 6 ժ. 50 ր. Լենինը մեռավ:

Լենինի մահը հակայական տպավորություն գործեց ամբողջ աշխարհում: Նորհրդային Միության բանվոր դասակարգը Լենինի մահվանը պատասխանեց նրանով, վոր յերկու հարյուր հազար պրոլետարներ մտան կուսակցության մեջ: Լենինի թաղումը վերածվեց հոյակապ և վիթխարի ցույցի, վորով միլիոններն իրենց ամենախորունկ վիշտն արտահայտեցին առաջնորդի մահվան առթիվ: Լենինը թաղված է Մոսկվայում, Կարմիր հրապարակում, Կրեմլի պատերի մոտ:

Լենինի ուսմունքը Մարքսի և Ենգելսի ուսմունքի շարունակությունն ու հետագա զարգացումն է: «Լենինից մեր իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանի մարքսիզմն է» (Ստալին): Հատկապես շատ նոր բան տվեց Լենինը՝ նրա կողմից մանրամասն ու խորը մշակված հետեյալ բնագավառներում — բուրժուական-գեմոկրատական հեղափոխություն և պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-գեմոկրատական ղեկավարությունը, պրոլետարիատի ղեկավարությունը և պրոլետարական հեղափոխություն, Նորհրդային պետությունը վորպես պրոլետարիատի ղեկավարության ձև, գյուղացիական և ագրարային հարցեր, ագրային հարց, ուսմունք կուսակցության մասին (բոլշևիկների կուսակցությունը վորպես «նոր տիպի» կուսակցություն), պրոլետարիատի ստրատեգիան և տակտիկան, իմպերիալիստական պատերազմներ, սոցիալիզմի կառուցում և այլն: Լենինի հայացքների լավագույն շարադրանքը և ամենից խոր ու ամենից ճիշտ պարզաբանումը, ինչպես նաև Լենինից մեր պրոլետների հետագա զարգացումը, Լենինի մահից հետո, տվել է կուսակցության ղեկավար Ի. Ստալինը «Об основах ленинизма» աշխատության մեջ: Լենինի յերկերն սկսեցին լույս տեսնել դեռ նրա կենդանության ժամանակ: Լենինի մահից հետո 30 հատորով լույս տեսավ նրա Յերկերի 2-րդ և միաժամանակ 3-րդ հրատարակությունը: Լենինի ամբողջ գրա-

կան ժառանգության լիակատար հրատարակությունն առնվազն 40 հատոր կկազմի:

Լենինի կյանքի մեծագույն գործը նրա կողմից ստեղծած պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը — բոլշևիկների կուսակցությունն է և Կոմունիստական Խնտերնացիոնալը, վորոնք Մարքսի ու Լենինի դրոշի տակ պայքար են մղում հանուն սոցիալիզմի հաղթանակի մեր յերկրում և ամբողջ աշխարհում:

Լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ, Ստալինի ղեկավարությամբ կուսակցությունը հաստատ ու համոզված ընթանում է Լենինի մատնանշած ուղիով: Առաջին հնգամյակը հաջողությամբ ավարտվեց: Հերթի յե դրված յերկրորդ հնգամյակը: Սոցիալիզմը, վորի անխուսափելիությունը գիտականորեն հիմնա-վորեցին Մարքսն ու Ենգելսը, սոցիալիզմը, վոր Լենինի ու նրա ղեկավարած պրոլետարիատի պայքարի գործնական նպատակն էր, իրականություն է դառնում: ՆՍՃՄ, Թեևկոխելով սոցիալիզմի շրջանը, 1931 թ. ավարտեց սոցիալիստական եկոնոմիկայի կառուցումը մեր յերկրում:

Այդ վիթխարի հաջողություններին կուսակցությունը հասնել է շնորհիվ այն բանի, վոր նա բարձր է պահել Լենինի դրոշն ու անհաշտ պայքար է մղել բոլոր և ամեն տեսակ ուղորտունիստների (աջերի, «ձախերի», հաշտվողականների) դեմ, հիմնահատակ ջախջախելով տրոցկիզմը, վոր «հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատն» է դարձել (Ստալին), աջ թեքումը (Բուխարին, Ռիկով, Տոմսկի), աջ-ձախ բոլոր, ջախջախելով այն բոլոր ուղղիցիաները, վորոնք փորձում էին հանել կուսակցությունը Լենինյան ուղուց և նրա վզին «պրոտունիստական քաղաքականություն փաթաթել»: Ներկա մոմենտում գլխավոր վտանգը աջ թեքումն է, վորի դեմ կուսակցությունն անխնա պայքար է մղում:

Վորպես մարդ, վորպես անձնավորություն, Լենինը հմայիչ տպավորություն էր գործում իր պարզությամբ, զգայունությամբ, իսկական ընկերական վերաբերմունքով դեպի կուսակցության անդամները, դեպի բանվորներն ու գյուղացիները: Նա վարակում էր շրջապատողներին իր անսպառ յեռանդով, աշխուժությամբ, առույգությամբ և կենսուրախությամբ: Նույնիսկ Լենինի քաղաքական հակառակորդները խոստովանում են, վոր նրան մեջ իսպառ բացակայում էր անձնական սնափառության կամ փա-

ուսիրութեան վորևէ տարր: Եմիգրանտի թափառական կյանք
վարելիս, թե՛ իշխանութեան զազաթնակետին--վորպես պետութե-
ան զլուխ,—նա հավասարապես՝ պարզ ու համեստ կյանք եր վարում,
սահմանափակվելով միայն նրանով, ինչ վոր ամենամահաժեշտն է:
Հանճարեղ միտքը Լենինի մեջ զուգորդվում, ներդաշնակվում եր
արտասովոր աշխատունակութեան և ճշտապահութեան հետ աշխա-
տանքի մեջ, յերկաթե աննկուն կամքի հետ, վոր չգիտեր, թե
ինչ է տատանումը: Նա հաստատակամ եր, ինչպես ժայռ, հեղա-
փոխական մարքսիզմը պաշտպանելում և կուսակցութեան գիծը
կիրառելում: Նրա զազափարական անհաշտութեան շնորհիվ պատ-
վարեր ատելութուն եյին տածում դեպի նա անհամար թվով
զանազան ուղորտունիստներ, ռեֆորմիստներ, անարխո-սինդիկա-
լիստներ, «ձախ» և աջ ուկլոնիստներ, զանազան յերանգի հաշտ-
վողակներ, վորոնք զգացել եյին իրենց վրա Լենինյան քննա-
դատութեան ու բանավեճի հարվածների ամբողջ ծանրութիւնը:
Մարքսիզմի, կուսակցութեան, հեղափոխութեան, բանվոր դասա-
կարգի հաղթութեան համար մղած այդ պայքարում Լենինն անո-
ղոք եր, և գնում եր մինչև վերջը—մինչև խզումներ, մինչև «պա-
ռակտումներ» և մինչև պրոլետարիատին թշնամական հայացքներ
կիրառող առանձին անձանց, խմբակների, հոսանքների վտարու-
մը կուսակցութիւնից: Միևնույն ժամանակ նա կարողանում եր
կուսակցութեան դեկավարութեան տակ ու նրա շուրջը համախմ-
բել ու միացնել այն ամենը, ինչ առաջավոր ու հեղափոխական
է բանվոր դասակարգի ու սոցիալիստական շարժման մեջ, այն
ամենը, վոր զարգացման տվյալ շրջանում ընդունակ է առաջ
գնալու կուսակցութեան մատնանշած ուղիով: Պատմութիւնը չգի-
տե մի այլ մարդու, վոր ժողովրդական ամենալայն մասսաների
մեջ այնպիսի հեղինակութիւն, սեր, վստահութիւն վայելել, ինչ-
պես Իլյիչը: Հանձին Լենինի բուրժուազիան իրավացիորեն տես-
նում է իր ամենամեծ թշնամուն: Ունենալով մասսաներին հաս-
կանալու ապշեցուցիչ հոտառութիւն, բանվորների ու գյուղացի-
ների տրամադրութիւնը զարմալալիորեն ճիշտ «շոշափելու» և
վորոշելու կարողութիւն, Լենինն արագ ու վստահ կողմորոշ-
վում եր ամենարագ քաղաքական կացութեան մեջ, պարզ ու
վորոշակի լոգունգներ տալով բանվոր դասակարգին: Նրա հավատը
դեպի բանվոր դասակարգի ուժերը, մարքսիզմի գրանիտե պատ-
վանդանի վրա հիմնված հավատն անսահման եր: Յերբեք, նույն-

իսկ ռեակցիայի ամենախուլ տարիներում, Լենինը չգիտեր՝ ինչ
է թեկուզ ամենափոքր տարակուսանքը հեղափոխութեան անխու-
սափելիութեան և պրոլետարիատի հաղթանակի հարցում: Բանվոր
դասակարգի ազատագրման պայքարին եր նվիրված Լենինի ամբողջ
կյանքը—նրա ամենավաղ որերից մինչև վերջին ակնթարթը:



Մրազբի Լ. Մրազբի
Հանձնված է արտադրության 25 դեկտ. 1933 թ.
Մտնադրված է սպառելի և 8 հաւ. 1934 թ.
Փյակի թիվ 7802 (բ) Հրաւ. թիվ 164
Պատկեր թիվ 100, Տիւրք 5000.
456,000 սպառ. հաւ.
Կաւարանի սպառան Յերկան

ԳԻՆԸ 1 Ռ.



СОРИН
В. И. ЛЕНИН
1870—1924

Краткие биографические данные

Партиздат 1934 Эривань

ՀՀ Ազգային գրադարան



NL0178508

